inclusion

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Դրամաշնորհի համաձայնագրի համարը՝ 2016-3686/001-001]
[Ծրագրի անվանումը և համարը՝ Միջտարածաշրջանային գործընկերության միջոցով սոցիալական-ներառական ռազմավարության մշակումը և իրականացումը Հայաստանում, Բոսնիա և Հերցեգովինայում
– 574139-EPP-1-2016-1-AM-EPPKA2-CBHE-JP]

Հայաստանում ներառական կրթությանն ընդառաջ

Ներառական կրթության գործիքակազմ

Հայաստանի ամերիկյան համալսարանի
«Erasmus + INCLUSION» նախագծի թիմ

Այս նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրապարակումը արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը չի կրում որևէ պատասխանատվություն դրանում պարունակող տեղեկատվության համար:

Երևան, Հայաստան
2019

Բովանդակություն

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 6

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀՂԱՑՔՆԵՐԸ 9

2.1. Յասկացություններ և սահմանումներ 9

2.2. Ներառական կրթություն. Սահմանումներ 12

2.3. Յայաստանի ազգային ուղեցույցներ և օրենսդրություն 18

2.4 Կիրառություններ դասարանում և դպրոցում 19

2.5. Առանձին (նմուշ) դեպքի հետազոտություն (case study) 21

2.6. Ներառական դասարանի խթանում 23

2.7. Յամապատասխան հարմարություններ 35

ԳԼՈՒԽ 3: ՀԵՆԱՆԻՇԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ (BENCHMARKING TOOL)37

3.1. Յենանիշ 1. Մեր դպրոցի համատեքստը 38

3.2. Յենանիշ 2. Դպրոցի կանոնակարգերը և ուղեցույցները 42

3.3. Յենանիշ 3. Որակի ապահովում և բարձրացում 45

3.4. Յենանիշ 4. Յարմարություններ, շինություններ և կացարաններ48

3.5 Յենանիշ 5. Ուսումնառություն և ուսուցում 51

3.6 Յենանիշ 6. Լրացուցիչ աջակցություն և խորհրդատվություն 54

ԳԼՈՒԽ 4. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ 57

4.1. Դասի պլանավորում 59

4.2. Տարբերակում 62

4.3. Օժանդակել ուսումնառությանը բացատրելու և ցուցադրելու միջոցով 63

4.4. Աշխատել մեծ դասարանների հետ 64

4.5. Ընդունել ու խրախուսել աշակերտների ինքնադրսևորումը 68

4.6. Ուսումնառության համընդհանուր նախագիծ 76

4.7. Զուգահեռ համատեղ դասավանդումը որպես ուսումնառության համընդհանուր նախագծի (UDL) մոդել 90

4.8. Ներառական դասապլաններ 92

4.9. Ներառական գնահատում 100

5.1. Տեսողական խանգարման դեպքում կիրառվող օժանդակող գործիքներ 109

5.2. Հոգեմտավոր խանգարման (mental disorder) (այդ թվում ուշադրության պակասի) դեպքում օժանդակող գործիքներ 112

ԳԼՈՒԽ 6: ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ 115

6.1. Դպրոցի մշակույթը 115

6.2. Փորձի փոխանակման ֆորումներ ու հարթակներ 118

ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 120

Վարժություն 1 120

Վարժություն 2 122

Վարժություն 3 123

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 127

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 132

Հավելված 1 – Հայաստանում ներառական կրթության SWOT վերլուծության արդյունքներ (ՀԱՅ, 2018) 132

Հավելված 2 – Դպրոցի տեսակները 142

Հավելված 3 – Դպրոցի տեսակների մասին պատասխանների ուղեցույց 143

Հավելված 4 – Ներառական, ուսումնառության տրամադրող դասարանի առանձնահատկությունները 145

Հավելված 5 – Հատուկ հարմարությունների նախատեսում 148

Հավելված 6 – Հայաստանում կարողությունների զարգացման վերաբերյալ SWOT վերլուծության արդյունքներ 150

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և մեր գործընկերներ կրթական հաստատություններին, հասարակական և միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ Կրթության ազգային ինստիտուտին, Երևանի պետական մանկավարժական համալսարանին, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանին, «Հույսի կամուրջ» կազմակերպությանը և «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպությանը՝ Հայաստանում ներառական կրթության մասին իրենց հետազոտությունների արդյունքներն ու նյութերը մեծահոգաբար մեզ տրամադրելու համար: Շնորհակալ ենք նաև վերոնշյալ կազմակերպություններին այս գործիքակազմի ստեղծման հարցում ցուցաբերած աջակցության համար: Հույս ունենք, որ այս գործիքակազմը արժեքավոր աղբյուր կդառնա նրանց համար, ովքեր աշխատում են ուսանողների հետ՝ վերջիններիս համար նույնպես հավասար իրավունքով կրթությունը և ողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը հասանելի դարձնելով:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Այս գործիքակազմը միջոցներ է տրամադրում ուսուցիչներին նոր հմտություններ գտնել, որոնք կհեշտացնեն բոլոր երեխաների ներառումը դասարանում, դպրոցում, համայնքում և ուսման մեջ այնպես, որ նրանք կարողանան աճել ու զարգանալ և լիարժեք բացահայտել իրենց ողջ ներուժը: Գործիքակազմը ներառում է վարժանքներ, որոնք կարելի է գործարկել անհատապես կամ այլ ուսուցիչների հետ համագործակցությամբ, և որոնք լավագույնս համապատասխանում են յուրաքանչյուր դպրոցի կարիքներին: Այս գործիքակազմը մշակվել է ավագ դպրոցների ուսուցիչների, կրթական խորհրդատուների, վարչական աշխատակիցների և ոլորտի մասնագետների՝ աշխատանքին զուգահեռ մասնագիտական զարգացմանն աջակցելու համար, որպեսզի նրանք կարողանան ստեղծել ներառական, սովորելուն տրամադրող նպաստավոր միջավայր բոլոր աշակերտների համար: Ներառական միջավայրը կրթում ու զարգացնում է բոլոր սովորողների կարողությունները՝ անկախ նրանց սեռից, համոզմունքներից, կամ ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հուզական-զգացական կամ այլ կարողություններից և/կամ մարտահրավերներից: Սա վերաբերում է շնորհալի սովորողներին և երիտասարդներին, որոնք բազմազան կարիքներ ունեն, ինչպես նաև նրանց, որոնք կրթական նյութերին և/կամ տեխնոլոգիաներին սահմանափակ հասանելիություն ունեցող սահմանամերձ շրջաններից են, պատկանում են էթնիկական կամ մշակութային փոքրամասնությունների կամ սոցիալապես խոցելի խմբերից են:

Ո՞ւմ համար է նախատեսված այս գործիքակազմը: Գործիքակազմի նպատակը ուսուցիչների իրազեկվածությունը բարձրացնելն է: Հատուկ ուշադրություն է դարձվում դպրոցներում աշխատող այն ուսուցիչներին, որոնք վճռորոշ դեր ունեն ավագ

դպրոցից համալսարան աշակերտների սահուն անցումը կատարելու, ինչպես նաև աշակերտների՝ իրենց համայնքային կյանքի սոցիալական ներգրավմանն աջակցելու գործում: Այն կարող է արժեքավոր աղբյուր լինել նաև ուսուցիչներ վերապատրաստողների համար, որոնք աշխատում են վերապատրաստման հաստատություններում, հասարակական կազմակերպություններում և/կամ այլ համանման կազմակերպություններում:

Ինչպե՞ս կարելի է կիրառել գործիքակազմի բովանդակությունը: Գործիքակազմը բաղկացած է հինգ մասից, որոնց մի մասը հղում է ներառականությունը հասկանալուն անհրաժեշտ տեսական հիմքերին, իսկ մյուսները բովանդակում են գործիքներ ու վարժանքներ, որոնք պետք է կիրառվեն ներառական դասարաններ և ուսումնառության համար բարենպաստ միջավայր ստեղծելու համար: Որոշ վարժանքներ դասարանային իրավիճակներ են ներկայացնում և դրդում են ընթերցողին մտածել իր իսկ դասարանում կիրառվող՝ ուսումնառության ներառական միջավայր ստեղծելուն միտված գործելաոճերի մասին, որոշ վարժանքներ էլ ընթերցողներին մղում են զարգացնել տարբեր դասարաններում աշխատելու իրենց հմտությունները: Կան լրացուցիչ աղբյուրներ՝ այդ թվում վարժություններ թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների համար, ինչպես նաև տեսանյութեր, որոնք անդրադառնում են ներառականության գործնական կողմին: Ի վերջո, կան լրացուցիչ ընթերցանության համար գրականության ցանկ և գործնական նյութերի հավելվածներ:

Գործիքակազմը վերանայելուց հետո ընթերցողը կհասկանա.

- «Ներառական կրթության» սահմանումը և թե որ աշակերտներին է դա վերաբերում;

- Խոչընդոտները, որոնք ավելի շուտ դուրս են թողնում, քան ներգրավում են այս աշակերտներին, և դրանք հաղթահարելու ռազմավարությունները;
- Մարտահրավերները, որոնք վտանգում են աշակերտների՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները;
- Դպրոցական միջավայրում ներառական գործելակերպերի ինքնավերլուծության բազմաթիվ գործիքներ;
- Ինչպիսի՞ն են ներառական դպրոցներն ու դասարաններըն ինչպե՞ս ստեղծել այդպիսի դպրոց և դասարան;
- «Տարբերակված ուսուցման» սահմանումը և դրա իրագործման ռազմավարությունները;
- Ներառական տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են արդյունավետ և իմաստալից ուսուցման/ուսումնառության միջավայր տարբեր կարիքներ ունեցող աշակերտների համար;
- Ներառական գնահատման հիմնական տարրերը;
- Ինտերակտիվ և տեղեկատվական տեսագրությունների միջոցով ներառական կրթական միջավայր ստեղծելու ռազմավարություններ;
- Հարթակներն ու ֆորումները որպես ներառական կրթության զարգացումն ու իրականացումը խթանող հնարվորություններ;
- Հենանիշային (benchmarking) գործիքների կիրառումը դասարաններում և դպրոցներում:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀՂԱՑՔՆԵՐԸ

2.1. Հասկացություններ և սահմանումներ

Գործիքակազմը մշակելու մեծագույն մարտահրավերներից մեկը համապատասխան, ներառական և դյուրըմբռելի հասկացությունների ընտրությունն էր, քանի որ գրականության մեջ շատ հաճախ նույն հղացքը նկարագրվում է տարբեր հասկացություններով: Ամենակարևորն այն էր, որ օգտագործված հասկացությունները պետք է զուրկ լինեին որևէ խտրական նրբերանգից. օրինակ՝ նախընտրելի է հաշմանդամ աշակերտների փոխարեն կիրառել տարբեր կարողություններով երիտասարդներ: Հղացքների բացատրություններն ու նյութի ներկայացումը դյուրամատչելի է ուսուցիչներին, ուսուցանողներին և առհասարակ՝ լայն հանրությանը: Խնդրում ենք հաշվի առնել հետևյալը.

- Տարբեր նախադրյալներից սերող և տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ արտահայտությունը այս գործիքակազմում ամենահաճախ կիրառվող հասկացությունն է և խոսքն այն պատանիների մասին է, որոնք սովորաբար դուրս են մնում ավագ դպրոցից կամ բարձրագույն կրթական հաստատություններից իրենց ֆիզիկական, մտավոր, սոցիալական, մշակութային կամ այլ բնորոշիչների պատճառով:
- Ուսումնառության միջավայր հասկացությունը կիրառվում է նկարագրելու համար առնվազն քսան աշակերտից բաղկացած ավագ դպրոցին բնորոշ դասարանները: Այն կարող է վերաբերել նաև որևէ պաշտոնական և ոչ պաշտոնական միջավայրի (օրինակ՝ կրթականն, մշակութային կենտրոններ),

որտեղ երիտաասարդները ձեռք են բերում իրենց առօրյա կյանքին անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

- Ներառական կրթություն կամ ներառական ուսումնառություն հասկացությունը նշում է Ուսումնառության համընդհանուր նախագծի (Universal Design for Learning, UDL) տարբեր բաղադրիչների կիրառմամբ բոլոր սովորողների համար հավասար հնարավորությունների ստեղծումը և կրթության հասանելիությունը պաշտոնական միջավայրում:
- Ուսումնառության համընդհանուր նախագիծը (Universal Design for Learning, UDL) բոլոր մարդկանց համար կիրառելի արտադրանքի, միջավայրերի, ծրագրերի և ծառայությունների նախագծումն է՝ հնարավորինս առանց հարմարեցման կամ հատուկ նախագծման կարիքի:
- Համընդհանուր նախագիծը կարող է տարբեր կարողություններով մարդկանց բազմազան խմբերի համար նախատեսված մի շարք անհրաժեշտ միջոցներ, վարժանքներ և ուսուցման/ուսումնառության մոտեցումներ կիրառել (Հոդված 9 – Հասանելիություն | United Nations Enable, 2019):
- Ուսումնառության տրամադրողը նշանակում է աշակերտին ու նրա կարիքները ուսումնառության գործընթացի կենտրոնում դնել այնպես, որ բոլոր սովորողոները հնարավորություն ունենան մասնակցել իրենց ուսումնառության գործընթացին: Այն նաև նշանակում է ճանաչել այլ մասնակիցներին (օրինակ՝ համայնքի ղեկավարների, ավագ դպրոցի վարչական աշխատողների, ծնողների, ընկերների/հասակակիցների), նրանց, ովքեր ԲՈԼՈՐ սովորողների կարիքները հաշվի առնող տարբերակված ուսուցման մոտեցումներն ու օժանդակող տեխնոլոգիաների առաջխաղացումը ուժեղացնող, մոտիվացնող ու աջակցող ծառայություն են մատուցում:

- Դասասենյակը այն փաստացի վայրն է, ինչպես, օրինակ՝ հանրակրթական դպրոցների դասասենյակը, որտեղ 14-18 տարեկան երիտասարդները հավաքվում են սովորելու և բարձրագույն կրթական հաստատություններում ուսանող դառնալուն նախապատրաստվելու համար:
- Աշակերտը, սովորողը կամ երիտասարդը փոփոխաբար հղում են այն մեկին, ով մասնակցում է ավագ դպրոցում պաշտոնապես ընդունված ուսումնառությանը:
- Տարբեր կարողություններով սովորողներ հասկացությունն իր մեջ ներառում է ֆիզիկական, զգայական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող այն երիտասարդներին, որոնք հաճախ հնարավորություն չեն ունենում սովորել ավագ դպրոցներում, նրանք կարող են ծնված լինել ֆիզիկական կամ ֆիզիոլոգիական արատով կամ կարող են արատը ձեռք բերած լինել հիվանդության կամ վթարի պատճառով, իսկ
- Արատը ենթադրում է, որ սովորողը տեսողական, լսողական կամ տեղաշարժվելու խնդիր ունի, ինչն իբրև արդյունք կարող է ազդված լինել ուսումնառության նրանց ձևից ու արագությունից:

Նշում. Հաճախակի հանդիպող հասկացությունների ավելի ընդարձակ ցանկը տե՛ս «Special Educayion Terms and Acronyms» (2019), անգլերենով՝ https://cutt.ly/JtTGPz

2.2. Ներառական կրթություն. Սահմանումներ

Ներառական կրթությունը ասելով հասկանում ենք կրթություն, որի դեպքում բոլոր երեխաները հնարավորություն ունեն սովորել նույն դասարանում, ստանալ բարձրորակ ուսուցում և հաջողության հասնելու համար անհրաժեշտ օժանդակ միջոցներ: Գործնականում սրա համար անհրաժեշտ է աջակցել, որ դպրոցներն ու դպրոցական համակարգը հարմարեցվեն յուրաքանչյուր երեխայի կարիքներին, և ոչ թե փորձել «երեխային հարմարեցնել համակարգին»: Սա ներառում է նաև ծնողներին, ուսուցիչներին և մյուս աշակերտներին համոզելը, որ հաշմանդամություն ունեցող երեխաներին պետք է ընդունել և թույլ տալ հաճախել դպրոց իրենց հասակակիցների հետ:
(Handicap International, n.d.)

Եթե հավասար կրթության իրավունքը պետք է իրականություն դառնա, մեր պարտքն է ապահովել, որ բոլոր սովորողներին մատչելի լինի որակյալ կրթությունը, որը բավարարում է ուսումնառության հիմնական կարիքներն ու կյանքը դարձնում բովանդակալից: (…) «Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թ. կոնվենցիան և մարդու իրավունքների այլ միջազգային հռչակագրերը արգելում են սոցիալական հիմքերով պայմանավորված կամ դրանցով ըմբռնված տարբերությունների հիման վրա, ինչպես օրինակ՝ սեռը, էթնիկական ծագումը, լեզուն, կրոնը, ազգությունը, սոցիալական ծագումը, տնտեսական վիճակը, կարողությունը և այլն, կրթություն ստանալու հնարավորություններից որևէ բացառում կամ կրթության հնարավորության սահմանափակում: Կրթությունը չի նշանակում պարզապես դպրոցները հասանելի դարձնել նրանց, ում դրանք արդեն հասանելի են: Խոսքը

սովորողների առջև ծառացած խոչընդոտներն ու արգելքները հասկանալու մասին է, այն խոչընդոտներն ու արգելքները, որոնց նրանք բախվում են որակյալ կրթություն ստանալու հնարավորություններ փնտրելիս, ինչպես նաև բացառման հանգեցնող արգելքներն ու խոչընդոտները հաղթահարելու մասին:

(UNESCO, n.d.)

Ներառական կրթություն, ներառում և կրթության հավասար հասանելիություն հասկացությունները տարբեր համատեքստերում օգտագործվել են տարբեր ենթիմաստներով: Որպես կանոն «ներառում» հասկացությունը հղում է արդար, անաչառ և ուսումնառության տրամադրող միջավայրին, որտեղ բոլոր աշակերտները հնարավորություն ունեն հաճախել դպրոց՝ սովորելով ըստ տարիքի առանձնացված, հիմնական դասարաններում, և որտեղ բոլոր աշակերտներն իրավունք ունեն հաճախել և մասնակցել ուսումնառությանը; այս պարագայում և՛ ծնողների, և՛ հասակակիցների, և՛ ուսուցիչների աջակցությամբ նրանք կսովորեն, ներգրավված կլինեն դպրոցական կյանքի տարբեր բնագավառներում և կբացահայտեն իրենց ողջ ներուժը (Anapiosyan, Hayrapetyan, & Hovsepyan, 2014; Booth & Ainscow, 2002): Սա անհրաժեշտություն է առաջացնում, որ ուսումնական պլանը, ծրագրերը, գործողությունները, դպրոցի գույքն ու շինությունները այնպես նախագծված լինեն, որ բավարարեն բոլոր աշակերտների կարիքները:

Կրթության բնագավառում խտրականության դեմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան (1960 թ.) միջազգային հիմնարար այն փաստաթղթերից մեկն էր, որը նպաստում էր ներառականությանը կրթության մեջ: Այս կոնվենցիան պաշտպանում է բոլորի կրթություն ստանալու իրավունքը անկախ որևէ հանգամանքից՝

ռասայից, գույնից, սեռից, լեզվից, կրոնից, ազգային կամ սոցիալական ծագումից, քաղաքական հայացքներից, տնտեսական պայմաններից կամ ծնունդից («Կոնվենցիա կրթության բնագավառում խտրականության դեմ, 1960», 2003): Ներառական կրթության սկզբունքն ընդունվել է 1994 թ. Իսպանիայում տեղի ունեցած Հատուկ կարիքի կրթությանը նվիրված Սալամանկայի համաշխարհային համաժողովում և վերահաստատվել 2000 թ. Սենեգալի Դաքար քաղաքում անցկացված Կրթության համաշխարհային ֆորումում: Այս համատեքստում Հայաստանն ընդունեց ներառական կրթության սկզբունքը՝ որպես իր քաղաքական օրակարգի մաս:

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու իրավունք: Սա ներառում է *տարբեր/խառը կարողություններով երիտասարդներին:* Ավելին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան շեշտում է, որ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի հիմնարար իրավունքն է՝ անկախ երեխայի ունեցած խնդիրներից: Ներառական կրթության համակարգն այն համակարգն է, որն ընդգրկում է բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց կարողություններից կամ պահանջմունքներից, և գործում է բոլոր մակարդակներում՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, բարձրագույն, մասնագիտական և ամբողջ կյանքի ընթացքում ուսումնառության: Ներառում ասելով հասկանում ենք.

- Սովորողների բազմազան կարիքները հասցեավորելն ու դրանց արձագանքելը ուսումնառությանը մասնակցելու հնարավորություն տալու միջոցով, ինչպես նաև դպրոցական և համայնքային մակարդակներում հասարակական գործունեություն ծավալելը;
- Ուսումնական հաստատությունների ներսում առկա խոչընդոտները հաղթահարելը՝ հարմարություններ

ներմուծելով և ներդնելով համապատասխան կառույցներ, որպեսզի յուրաքանչյուր սովորող ստանա առավելագույնը դպրոց հաճախելուց:

Ներառման այս հղացքը ավելի շատ խթանում է սովորողի ակտիվ մասնակցությունն իր իսկ ուսումնառության գործընթացին՝ որպես հիմնական պարտականության, և ոչ թե ապահովում դասարանում նրա զուտ ներկայությունը կամ հաստատության կողմից կացության տրամադրումը: Այսպիսով, նպատակը ներառումն է՝ «մասնակցելու» շեշտադրումով և ոչ թե պարզապես *ընդգրկումը*՝ զուտ «ներկա լինելու» սկզբունքով:

Իսկապես ներառական միջավայրը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերից՝

- հավասարապես արժևորել բոլոր աշակերտներին և անձնակազմը,
- վերափոխել ավագ դպրոցների կանոնակարգերն ու գործելակերպն այնպես, որ դրանք հաշվի առնեն բոլոր սովորողների առանձնահատկությունները,
- ընդլայնել սովորողների մասնակցությունը ուսումնական ծրագրերին և ավագ դպրոցի կրթական համակարգի մշակույթին և նվազեցնել այդ ծրագրերից ու մշակույթից սովորողների դուրս մնալու չափը,
- նվազեցել բոլոր սովորողների (ոչ միայն նրանց, ովքեր դասակարգվում են որպես *ուսումնառության հատուկ կարիքներ ունեցող*) ուսումնառության և մասնակցության խոչընդոտները,
- սովորողների միջև եղած տարբերությունները դիտարկել որպես ուսումնական ծրագրերը վերանայելու հնարավորություն, որպեսզի էլ ավելի աջակցեն բոլոր աշակերտների ուսումնառությանը,

- ճանաչել աշակերտների՝ իրենց տեղական դպրոցում սովորելու իրավունքը,
- շեշտադրել ավագ դպրոցների դերը համայնքի ձևավորման, արժեքների ստեղծման և բոլոր քաղաքացիների կրթական մակարդակը բարձրացնելու գործում,
- ամրապնդել դպրոցների ու համայնքների միջև փոխադարձ կարևոր կապը,
- ընդունել, որ կրթության մեջ ներառումը հասարակության մեջ ներառման մի կողմն է (Middlemas, Spanjers, & Rubiano, 2018):

Այս ամենը անելու համար դպրոցները պետք է հարմարեցված լինեն յուրաքանչյուր երեխայի կարիքներին: Սա նշանակում է խորապես տիրապետել սովորողների կարիքներին և համապատասխան կերպով հարմարեցնել ուսումնառության միջոցներն ու շենքերը: Ավելին, կարևոր է փոխել ուսուցիչների, աշակերտների և ողջ կրթական հանրության մտածելակերպն ու վերաբերմունքը: Հիմնական սկզբունքն այն է, որ մենք բոլորս ունակ ենք սովորելու և կարող ենք դա անել լավագույն ձևով, եթե ունենք ճիշտ գործիքները, համապատասխան հնարավորությունն ու աջակցությունը:

Տարբեր կարողություններ ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (Հոդված 2 – Սահմանումներ | United Nations Enable, 2019) *տարբեր կարողությունը* սահմանում է որպես դեռ մշակվող ու քննարկվող հղացք, որը բնութագրվում է տվյալ հասարակության մեջ ներառման և մատչելիության պակասով և ոչ թե պայմանավորված անձի ունեցած խանգարումներով: Այս հղացքը ներառում է ոչ միայն ֆիզիկական, հոգեբանական և մտավոր խանգարումներ ունեցող մարդկանց, այլ նաև նրանց, որոնք թերի ներկայացչական խմբերից են՝ աշակերտներ, որոնք գյուղական վայրերից և սահմանամերձ շրջաններից են, զինվորական ծառայության մեջ գտնվող ուսանողներ, երեխաներ

ունեցող ուսանողներ և կառավարության կողմից սահմանված *բնակչության խոցելի խմբեր*:

«Հաշմանդամություն ունեցող անձինք նրանք են, ովքեր ունեն երկարատև ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական խանգարումներ, որոնք զանազան խոչընդոտների հետ փոխազդեցությամբ, խոչընդոտում են այդ անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին» (Հոդված 1 – Նպատակ | United Nations Enable, 2019, էջ 1): Թեև *հաշմանդամությունը* հաճախ հավասար է դիտվում *խանգարմանը*, բայց իրականում այս հասկացությունների միջև տարբերակում կա: Հաշմանդամություն ունեցող անձանց մասին կոնվենցիայի (Հոդված 2 – Սահմանումներ (United Nations Enable, 2019) սահմանմամբ *տարբեր կարողությունը* ոչ թե պարզապես առողջական վիճակը կամ խանգարումն է որպես այդպիսին, այլ անձի խանգարման փոխազդեցությունը շրջակա միջավայրի սահմանափակումների հետ, որոնք միասին հանգեցնում են մի իրավիճակի, երբ խոչնդոտվում է անձի լիարժեք ու հավասար մասնակցությունը հասարական կյանքին:

Միացյալ ազգերի կազմակերպության սահմանումների (2019) Հոդված 2-ի համաձայն (United Nations Enable, 2019)՝ « հաշմանդամության հիմունքներով խտրականությունը» նշանակում է *հաշմանդամության* հիմունքներով որևէ տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որն ունի մյուսների հետ հավասար հիմունքներով քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, քաղաքացիական կամ որևէ այլ բնագավառում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման, կիրառման կամ իրագործման խանգարման կամ զրոյացման նպատակ կամ հետևանք: Այն

ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը, այդ թվում՝ ողջամիտ համաձայնեցումների մերժումը:

2.3. Հայաստանի ազգային ուղեցույցներ և օրենսդրություն

1996 թ. Հայաստանն ընդունեց Երեխաների իրավունքների մասին օրենքը, իսկ ՅՈՒՆԻՍԵՖ-ը սկսեց ակտիվ կերպով խրախուսել երկրում ներառական կրթության ջատագովումը (Hunt, 2009): 1998 թ. էր, երբ Երևանում Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 դպրոցն առաջինը որոշեց ընդունել տարբեր կարողություններ ունեցող երեխաներին հավասար կրթության և հասանելիության հնարավորություն տրամադրելու այս մարտահրավերը: Այդ ժամանակից ի վեր ներառական դպրոցների թիվը բազմապատկվել է՝ ներառելով նաև Հայաստանի մյուս շրջանները. 2010 թ. 63 ներառական դպրոցում ամրագրված էր 1500 աշակերտ:

Հայաստանի կառավարությունը նպատակ ունի մինչև 2025 թ.-ը բոլոր դպրոցները՝ տարրական և միջնակարգ, դարձնել ներառական և հավասար հնարավորություններ ստեղծել բոլոր աշակերտների համար: Սրա արդյունքում հատուկ դպրոցների թիվը կտրուկ կնվազի (Շիրակի մարզի յոթ համայնքներում դպրոցից դուրս մնացած երեխաների վերաբերյալ քարտեզագրման հետազոտության ամփոփ հաշվետվություն, Հայաստան, 2017): Դպրոցները ներառական դարձնելու գործընթացը պետք է իրականացվեր փուլերով, մարզ առ մարզ: Նախաձեռնության սկզբից ի վեր Հայաստանում 1354 հանրակրթական դպրոցից 248-ը դարձել են ներառական: Ըստ Կրթության և գիտության նախարարության՝ 2016-2017 ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 6700 աշակերտներ ամրագրվել և ընդունվել են հանրակրթական դպրոցներ: Հանրակրթության մասին ՀՀ օրենքով կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը սահմանվում է «անձը, որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների»:

Հայաստանում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության բարեփոխումների իրավական հիմքերը.

- ՀՀ Կրթության մասին օրենք, 1999 թ.
- Ներառական նախադպրոցական ուսումնական ծրագրի իրավական ակտ, 2000 թ.
- Գիշերօթիկ կրթական հաստատությունների համակարգի զարգացման ռազմավարություն, 2002 թ.
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին օրենք, 2005 թ.
- Ներառական կրթության հայեցակարգի մասին, 2005 թ.
- Հանրակրթության մասին ՀՀ օրենք, փոփոխված Հայաստանի Խորհրդարանի կողմից 2014 թ., համաձայն որի մինչև 2025 թ. օգոստոս ամիսը ՀՀ-ում գործող բոլոր դպրոցները պետք է դառնան ներառական. այս օրենքը ճանաչում է իրենց հասակակիցների հետ ընդհանուր դասարաններում սովորելու բոլոր աշակերտների իրավունքները:

2.4 Կիրառություններ դասարանում և դպրոցում

Հարգալից բառերի կիրառումը կարևոր է ոչ միայն դասարանում և դպրոցում, այլ նաև համայնքում ընդհանրապես: Այն նպաստում է երեխայի ինքնավստահության զարգացմանը և ինքնագնահատականի բարձրացմանը և թույլ տալիս, որ նա իրեն ներառված զգա դասարանում և համայնքի մեջ: Սա նաև նշանակում է հարգանք մարդու իրավունքների նկատմամբ:

Դրական բառապաշարը դրական մթնոլորտ ստեղծելով, օգնում է, որ երեխան ճիշտ կարգավիճակի հասնի, ինչն անհրաժեշտ է գիտելիքի ձեռքբերման հարցում: Որպեսզի դա տեղի ունենա, և՛ ուսուցիչները, և՛ հասակակիցները պետք է բացառեն բացասական նրբերանգ ունեցող բառերը, այդ թվում այն բառերը, որոնք հաշմանդամությունը հավասարեցնում են հիվանդության հետ: Պետք է խուսափել մականուններից և բոլոր երեխաներին կոչել իրենց իսկ անուններով: Պետք է խուսափել բոլոր այն բառերից, որոնք կարող են վիրավորել, և պետք է օգտագործել միայն դրական կամ չեզոք բառեր: Ներառող ուսուցիչը ձգտում է գտնել այն բառերը, որոնք հարգալից են բոլորի հանդեպ և ներառում են դասարանի բոլոր երեխաներին: Սրա նպատակը խտրականությունից, հիասթափությունից և անհանգստությունից զերծ միջավայր ստեղծելն է: (Ավելի մանրամասն տե՛ս` «TESSA Inclusive Education Toolkit: A guide to the education and training of teachers in inclusive education», 2016):

Լեզուն, որով խոսում են հաշմանդամության մասին, անընդհատ փոփոխվում է: Ուսուցչի պարտականությունն է հետևել փոփոխություններին և յուրացնել դրանք համապատասխանաբար: Երեխաները պետք է հասկանան իրենց տարբերություններն ու նմանությունները, խոսեն դրանց մասին, և այդ տարբերություններն ու նմանությունները պետք է համարեն հասարակության բնական մաս: Որպես ուսուցիչ դուք կարևոր դեր ունեք օգնելու երեխային հասկանալ, որ իրենց կարծիքները, ընկալումներն ու հույզերը կարող են տարբեր լինել, բայց որ նրանք բոլորը հասարակության կարևոր մասն են: Բազմազանությունը հարստացնում է հասարակությունը: Որպես ուսուցիչ դուք պետք է օրինակ ծառայեք` բոլոր երեխաների հանդեպ անաչառ վերաբերմունք որդեգրելով, և կազմակերպեք այնպիսի վարժանքներ, որոնք երեխաներին հնարավորություն են տալիս

աշխատել միասին, փոխգործակցել և միասին կազմակերպել իրենց ուսումնառությունը: Պետք է խրախուսեք հասարակության մեջ ներառական վարքագիծ, ինչպես օրինակ՝ փոխադարձ հարգանք ու գնահատում, լսելու ունակություն, հանդուրժողականություն և կարեկցանք:

2.5. Առանձին (նմուշ) դեպքի հետազոտություն (case study)

Վարժություն: Կարդացե՛ք այս առանձին (նմուշ) դեպքի հետազոտությունն ու լրացրե՛ք հաջորդող գործողությունները: (Վերցված է «TESSA Inclusive Education Toolkit: A guide to the education and training of teachers in inclusive education»-ից (2016) և տեղայնացված է):

Երևանի դպրոցներից մեկում Կարինե անունով մի աշակերտուհի թեթև հոգեկան խանգարում ունի, որն արտահայտվում է անբավարար ուշադրությամբ: Դասարանում և դպրոցում հասակակիցները նրան դեբիլ են կոչում: Կարինեն շատ ճնշվում է այդ մականունից: Սկզբում նա հնարավոր ամեն ինչ անում էր, որ իրեն այդպես չկոչեն, բայց ծանակումները շարունակվում էին, և ամեն ինչ այնքան վատացավ, որ նրա համադասարանցիներն անգամ հարձակվում էին նրա վրա: Կարինեն հավերժ պայքարելու փոխարեն համակերպվեց այս կարգավիճակի հետ: Արդյունքում նա մեկուսացավ ու կորցրեց սովորելու ցանկությունը: Նա ո՛չ մասնակցում էր դասարանում անցկացվող վարժանքներին, ո՛չ էլ պատասխանում էր ուսուցիչների հարցերին, որովհետև վախենում էր, որ անգամ ամենափոքր սխալի պատճառով մյուսները ծաղր ու ծանակի կենթարկեն իրեն: Նա լսում էր այսպիսի դիտողություններ. «Մեկ ու կես ժամ կարող է միայն հիմարություններ ասել»: Պարոն Կարապետյանը՝ ուսուցիչը, չէր հասկանում, թե

Կարինեն ինչու չի մասնակցում դասերին, չնայած որ միշտ լավ առաջադիմություն է ունեցել:

Խնդրեք, որ ուսուցիչներն աշխատեն զույգերով և մտածեն, թե ինչ ուղիներ կարելի է գտնել՝ օգնելու Կարինեին վերականգնել ինքնավստահությունը: Այնուհետև գործողությունների պլան՝ լուծման մի օրինակ մշակեք ու բաժանեք ուսուցիչներին:

Պրն. Կարապետյանը խոսեց Կարինեի հետ, այնուհետև ամբողջ դասարանի համար մի վարժանք կազմակերպեց: Նա խնդրեց, որ բոլոր աշակերտները երկու տարբեր թղթերի վրա գրեն մեկ կոպիտ և մեկ բարի բառ: Հետո հավաքեց թղթերն ու դրանք դրեց սեղանին այնպես, որ երեխաները չտեսնեն, թե ինչ է գրված դրանց վրա: Կարինեի համադասարանցիները պետք է առանց նայելու ընտրեին այդ թղթերից մեկը, որից հետո թղթի վրա գրված մականունը փակցվում էր նրանց մեջքին: Վատ բառերով թղթեր վերցրած աշակերներին իրենց համադասարանցիները ծանակում էին: Պրն. Կարապետյանը հարցրեց աշակերտներին, թե ինչպես էին զգում, երբ համադասարանցիներն իրենց վատ բառերով էին կոչում ու ծաղրում: Հետո հարցրեց լավ բառերով թղթեր ընտրած աշակերտներին, թե նրանք ինչպես են զգում իրենց: Որպես դասի եզրափակում ուսուցիչը խնդրեց, որ երեխաները մտածեն, թե Կարինեն ինչ էր զգում, երբ նրան դեբիլ էին կոչում: Նա երեխաներին դրդեց ներողություն խնդրել Կարինեից և մտածել այն բառերի մասին, որոնցով դիմում էին Կարինեին ու իրենց հասակակիցներին:

2.6. Ներառական դասարանի խթանում

Ըստ Թեքերի (Opp-Beckham, & Klinghammer, 2006, էջ 71) կա տասներկու վարվելակերպ, որ լավ ուսուցիչը ցուցաբերում է ուսումնառության տրամադրող միջավայր ստեղծելու համար.

- Նախապես հստակորեն սահմանել հիմնական կանոնները,
- Տրամադրել լավ մտածված վարժանքներ,
- Ցուցաբերել հարգանք յուրաքանչյուր աշակերտի հանդեպ,
- Տրամադրել ոչ սպառնալից վարժանքներ,
- Լինել ճկուն,
- Ընդունել անհատական տարբերությունները,
- Ցուցաբերել դրական վերաբերմունք,
- Զարգացնել մտածելու հմտություններ,
- Ընդունել բոլոր պատասխանները,
- Թույլ տալ, որ աշակերտները լինեն ակտիվ մասնակիցներ,
- Այնպիսի փորձառություններ ստեղծել, որոնք յուրաքանչյուր աշակերտի համար գոնե մասնակի հաջողություն կապահովեն,
- Կիրառել ուսուցման բազմազան եղանակներ:

Ֆիզիկական տարածքը և դասարանի/դպրոցի մթնոլորտը վճռորոշ դեր են խաղում ուսումնառությունը խթանելու գործում: Ֆիզիկական կամ զգայական վտանգից զերծ դասարան/դպրոց ստեղծելու համար դուք որպես ուսուցիչ պետք է ինքներդ ձեզ հետևյալ հարցերը տաք.

- Արդյո՞ք իմ դպրոցն ու դասասենյակը երեխաներին հնարավորություն տալիս են անվտանգ տեղաշարժվել:
- Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի բոլոր երեխաների համար ստեղծվի հասանելի և ռիսկերից զերծ միջավայր:

Հետևյալ բացատրություններն ավելի մանրամասն են ներկայացնում *խանգարման* և *խոչընդոտների* առանցքային բաղադրիչներն ու դրանց փոխազդեցությունը.

Խանգարումը գենետիկ գործոններով, հիվանդությունով կամ վնասվածքով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիոնալ աշխատանքի կամ կառուցվածքի հետ կապված խնդիր է: Այն կարող է լինել բնածին կամ կարող է ձեռք բերվել կյանքի ավելի ուշ շրջանում: Խանգարման հանգեցնող գործոններ կարող են լինել բռնությունը, կոնֆլիկտը և աղքատությունը: Խանգարումը կարող է առօրյա գործողությունների կամ գործառույթի, օրինակ՝ տեսնելու, լսելու, տեղաշարժվելու, հիշելու, կենտրոնանալու և այլ ունակություններում ի հայտ եկող տարբերության պատճառ դառնալ:

Ըստ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի սահմանման՝ (Հոդված 2- Սահմանումներ|United Nations Enable, 2019) *խանգարումները* կարող են ավելի լայն դասակարգման ենթարկվել՝ կախված գործունեության խանգարման տիրույթից.

- *Ֆիզիկական խանգարումը* հաճախ ամենահեշտ տարբերակվողն է: Այն արտահայտվում է օրգանիզմի՝ հետևյալ գործողությունների դժվարությամբ՝ շարժման ու շարժողականության (ինչպես օրինակ՝ քայլելը, աստիճան բարձրանալը, կանգնելը, դիրքը պահելը կամ փոխելը), մարմնի շարժումների (ինչպես օրինակ՝ ձգվել, կռանալ կամ ծնկի իջնել), վերին վերջույթների գործարկման (բռունցք անելը կամ առարկաներ բռնելու համար մատները օգտագործելը): Ֆիզիկական խանգարումներ ունեցող անձինք կարող են օգտագործել օժանդակող սարքեր՝ ձեռնափայտ, հենակ կամ անվասայլակ:
- *Զգայական խանգարումը* ներառում է տեսողության, լսելու կարողության և հաղորդակցվելու դժվարությունները:

- *Տեսողության խանգարումը* ներառում է լրիվ կուրությունը և խախտված կամ թույլ տեսողությունը:
- *Լսողության խանգարումը* ներառում է խլությունը կամ լսողության կորստի տարբեր մակարդակներ, չնայած որ վերջինս կարող է ներառել որոշ մնացորդային լսողություն: Լսողության խանգարումներ ունեցող մարդիկ կարող են հաղորդակցվել խոսակցական լեզվի միջոցով, նշանների լեզվով և/կամ շրթունքներից կարդալով:
- *Հաղորդակցման խանգարումը* ներառում է խոսելիս դժվարանալը կամ տարբեր մակարդակների խոսքային խանգարումները, ինչի համար կարող են պահանջվել հատուկ հարմարեցված հաղորդակցման միջոցներ:
- *Մտավոր խանգարումը* ներառում է նոր կամ բարդ տեղեկատվությունը հասկանալու, ինչպես նաև սովորելու և նոր հմտություններ կիրառելու սահմանափակ կարողությունը: Սա կարող է ազդեցություն ունենալ երեք տիրույթների վրա, որոնցով որոշվում է, թե որքանով է անհատը գլուխ հանում առօրյա խնդիրներից: 1) Հղացական տիրույթը (լեզվական հմտություններ, կարդալու, գրելու, մաթեմատիկայի, դատողության, գիտելիքի և հիշելու կարողություններ), 2) հասարակական տիրույթը (կարեկցանք, հասարակական դատողություն, միջանձնային հաղորդակցման կարողություններ, ընկերներ ձեռք բերելու և ընկերությունը պահելու և նմանատիպ այլ կարողություններ), 3) գործնական տիրույթը (ինքնակառավարումը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝ անձնական խնամքը, աշխատանքային պարտականությունները, գումարի տնօրինումը, հանգստի և հոգսերի տնօրինումը):
- *Հոգեկան կամ սոցիալ-հոգեբանական հաշմանդամությունը* ներառում է հոգեկան առողջության հետ կապված

խանգարումները, այդ թվում՝ սուր խրոնիկական հոգեկան խանգարումները կամ սոցիալ-հոգեբանական անհավասարակշռությունը: Այս խմբին պատկանող մարդիկ կարող են ունենալ այլ մարդկանց հետ շփվելու դժվարություններ, տրամադրության անկում կամ խառը մտքեր, սեփական անձը հոգալու անկարողություն և վարքագծի, լեզվական կամ մտավոր գործառույթների հետ կապված խնդիրներ: Այս խնդիրներն իրենց հերթին կարող են ազդել նրանց հասարակական կարողությունների և հասարակական կյանքին մասնակցության վրա:

Չնայած ներառական կրթության մի շարք առավելություններին, կան նաև դրա իրագործմանը խոչընդոտող բազմաթիվ արգելքներ (Հայաստանում SWOT վերլուծության վերջին արդյունքները տե'ս Հավելված 1-ում): Ստորև ներկայացված է հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը խոչընդոտող ամենամեծ արգելքներից մի քանիսի ցանկը (CDC, 2018):

- *Ֆինանսական խոչընդոտներ.* համապատասխան ֆինանսավորումը կենսական նշանակություն ունի ներառական գործելաոճերի կիրառման համար, մինչդեռ դա ամենամեծ մարտահրավերներից մեկն է: Այն կարող է վերաբերել և' պետական հանրային հատվածին (դպրոցներ), և' մասնավոր հատվածին (ընտանիքներ), ինչն արտահայտվում է համապատասխան միջոցների, որակավորում ունեցող և վերապատրաստված ուսուցիչների և/կամ այլ աշխատակիցների անբավարարությամբ, պատշաճ կրթական նյութերի սղությամբ կամ բացակայությամբ, փոխադրամիջոցների ծախսերի պատճառով դպրոց հաճախելու հնարավորության (հատկապես գյուղական վայրերում) և ծնողների աջակցության բացակայությամբ:

- *Վերաբերմունքի հետ կապված խոչընդոտներ.* *հաշմանդամություն* ունեցող անձանց արդյունավետ մասնակցության և ներառման ամենաէական խոչընդոտը արմատավորված, մշակութային կարծրատիպերն ու բացասական վերաբերմունքն են: Ավանդական հասարակության մեջ *հաշմանդամություն* ունեցող անձինք հաճախ դիտարկվում են որպես ոչ գործունակ, ուրիշներից կախված կամ թույլ: Մինչդեռ ընդհակառակը՝ հասարակությունը պետք է նրանց դիտարկի որպես ոգեշնչող, հերոսական կամ գերմարդկային, քանի որ նրանք մեծ խոչընդոտներ են հաղթահարել: Դժբախտաբար ավանդական հեռանկարը շարունակում է նրանց տարանջատել և «դուրս մղել» հասարակությունից: Կրթական համատեքստում վերաբերմունքի հետ կապված խոչընդոտի բնորոշ օրինակ է այն դպրոցի տնօրենը, ով կարծում է, թե մտավոր *խանգարումներ* ունեցող անձինք խոչընդոտում են ուսումնական գործընթացը և անկարող են սովորել: Այսպիսի վերաբերմունքը միտումնավոր կերպով ստիպում է, որ աշակերտներն իրենց անցանկալի զգան, և հաշմանդամություն ունեցող անձանց համար դպրոց հաճախելն ու սովորելը խոչընդոտվում է:
- *Կրոնական կամ էթնիկական խոչընդոտներ.* չնայած սա կարող է կիրառելի լինել կամ չլինել հայաստանյան համատեքստում, սակայն այս խոչընդոտները պետք է նույնպես դիտարկել: Թեև կրոնական և էթնիկական փոքրամասնությունների համար, ինչպիսիք են օրինակ՝ եզդիները, ասորիները, մահմեդականները և մոլոկանները, հայաստանյան հանրային կրթությունը (ներառյալ տարրական և ավագ դպրոցները) հավասարապես հասանելի է, սակայն կարևոր է հաշվի առնել դասարանում և դպրոցում

մշակութային տարբերությունների ազդեցությունը հասարակական դինամիկայի վրա:

- Ֆիզիկական խոչընդոտները երկու տեսակի են՝
    - *Կառուցվածքային խոչընդոտները* բնական և տեխնածին միջավայրերում առկա արգելքներն են, որոնք խանգարում են հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն տեղաշարժվելուն: Կրթական համատեքստում կառուցվածքային խոչընդոտների օրինակներ են մուտքի մոտ աստիճանները, առանց շոշափվող ուղղորդիչների արահետները, նեղ դռներն ու զուգարանակոնք չունեցող սանհանգույցները: Այս ամենը խոչընդոտներ են ստեղծում սահմանափակ ֆիզիկական և տեսողական հնարավորություններ ունեցող անձանց համար: Այսպիսի խոչընդոտները խնդիրներ են ստեղծում նաև ավագ դպրոցների՝ *հաշմանդամություն* ունեցող աշխատակիցների արդյունավետ աշխատանքի համար:
    - *Հաղորդակցման խոչընդոտներ* կարող են առաջանալ տեսնելու, լսելու, խոսելու, կարդալու, գրելու և հասկանալու հետ կապված դժվարություններ ունեցող մարդկանց մոտ: Այս մարդիկ հաճախ տարբեր եղանակներով են հաղորդակցվում հաշմանդամություն չունեցող մարդկանց հետ, և եթե համապատասխան հարմարանքներ չստեղծվեն, հնարավոր է նրանք ի վիճակի չլինեն տեղեկություններ փոխանցել: Կրթական համատեքստում հաղորդակցման խոչընդոտների օրինակներ են ուսումնական նյութերի մանր, ոչ հստակ տառատեսակով, առանց նկարների կամ դիագրամների և առանց ուռուցիկ տառերի կամ բրայլյան գրերի նյութերը, բանավոր սեմինարը՝ առանց ժեստերի լեզվով

թարգմանության, բարձր սպասասեղաններն ու բեմահարթակները, որոնք խոչընդոտներ են ստեղծում անվասայլակով մարդկանց համար:

- *Ինստիտուցիոնալ խոչընդոտները* հաճախ առաջանում են այն ժամանակ, երբ չկա *ներառման* համար պարտադիր շրջանակ կամ երբ գոյություն ունեցող կանոնակարգերը (ինչպես օրինակ՝ այն կանոնակարգերը, որոնք պահանջում են, որ ծրագրերն ու միջոցառումները ներառական լինեն ու մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար, և որոնք այս անձանց առանձնահատուկ կարիքների համար «համապատասխան հարմարություններ» (տե 'ս՝ ստորև) են պատրաստում) համապատասխանաբար չեն գործադրվում: *Ինստիտուցիոնալ խոչընդոտները* դժվար են ճանաչելի դառնում, որովհետև դրանք հաճախ արմատացած են սոցիալական և մշակութային նորմերում: *Ինստիտուցիոնալ խոչընդոտի* օրինակ է այն դպրոցը, որը չի հայտնաբերում և արձագանքում երեխաների բազմազան կարիքներին՝ օրինակ անհատական ուսումնական պլան մշակելով, դասարանում օգնականներ տրամադրելով կամ այլ աջակցություն ցուցաբերելով՝ այդ կերպ *հաշմանդամություն ունեցող* երեխաների համար ստեղծելով դպրոց հաճախելու և սովորելու խոչընդոտներ:

Ստորև ներկայացված է *ինստիտուցիոնալ խոչընդոտների* ճանաչման նկարագրություն: (Վերցված և հարմարեցված է «TESSA Inclusive Educational Toolkit: A guide to the education and training of teachers in inclusive education», 2016):

Մաս 2: Առանձնահատուկ կարիքներ ունեցող աշակերտների ընդունելությունը
Տկն. Խաչատրյան– Տկն. Լաբան, այս երեխան Ձեր դասարանում է սովորելու: Մտածե ՞լ եք, թե ինչ կարող եք անել նրա համար: Հիշեք, որ նա նաև տեսողության խնդիր ունի, լավ չի տեսնում:
Տկն. Օրդյան– Մտածում էի նրան այնպիսի տեղում նստեցնել, որտեղից գրատախտակն ավելի լավ կտեսնի, և կհոգամ, որ նա անվտանգ կերպով տեղաշարժվի դասասենյակում:
Պրն. Մաթևոսյան– Նաև պետք է ավելի խոշոր ու ավելի պարզ գրել: Բարձրաձայն կարդացեք գրատախտակին գրվածը և համապատասխան կերպով պատրաստեք նյութերը՝ մեծ տառաչափով, մեծացրած նկարներով և այլն:
Տկն. Խաչատրյան– Շնորհակալություն բոլոր մտքերի համար: Մյուս աշակերտները նույնպես կարող են օգնել: Շատ անելիք կա, բայց հիշեք, որ հաշմանդամություն ունեցող երեխաների համար միջավայրն ավելի մատչելի դարձնելը նաև մյուս աշակերտներին օգտակար կլինի: Բոլորի համար ավելի հարմարավետ և աշխատելի միջավայր կստեղծվի: Հիմա եկեք քննարկենք լսողության խնդիր ունեցող աշակերտի հարցը: Պրն. Մաթևոսյան, ինչպե ՞ս եք նպաստելու նրա՝ Ձեր դասարանում ներգրավմանը: Բնականաբար, մյուսներդ նույնպես կարող եք ձեր ներդրումն ունենալ:
Պրն. Մաթևոսյան – Կխնդրեմ, որ նա նստի այնպես, որ մեջքով դեպի լույսը լինի, գրատախտակից ոչ հեռու և այնպես, որ տեսնի իմ և մյուս աշակերտների դեմքերը: Դասի ժամանակ երբ խոսենք, պետք է բառերը հստակ արտաբերենք ու դանդաղ խոսենք: Նաև մտադիր եմ նրան նստեցնել մի լավ սովորող, ընկերասեր աշակերտի կողքին, որ անհրաժեշտության դեպքում օգնի նրան:
Այս վարժանքը կօգնի ուսուցիչներին մի շարք

ռազմավարություններ մշակել տարբեր առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դասասենյակներն ավելի մատչելի դարձնելու գործում:

Բոլոր աշակերտների համար կարևոր է, որ ուսուցիչները ցույց տան, որ իսկապես հոգում են նրանց կարիքները: Երբ ուսուցիչը ջանում է ճանաչել յուրաքանչյուր աշակերտին, դա քաջալերում է վերջինիս ավելի լավ սովորել, ավելի լավ ներգրավվել ու ավելի ակտիվ մասնակցել դասին: Խաղաղ, անվտանգ ու հարմարավետ միջավայր ստեղծելու համար ուսուցիչները պետք է նախաձեռնող լինեն: Օրինակ, երբ ուսուցիչները աշակերտների կողմից հարձակողական վարքի դսևորումներ են նկատում, կարող են փորձել հաշվի նստել դրա հետ՝ կարեկցանք ու մեղմ սոցիալական վարքագիծ խթանող խաղերի ու վարժանքների միջոցով: Այդպիսով դասարանը կկարողանա ձևավորել բոլորի կողմից ընդունված ու համաձայնեցված ներքին կանոններ:

Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union

Հուշում #1: Գրասեղանները դասավորել խմբերով

Գրասեղանները դասավորեք փոքր խմբերով (2-4 գրասեղան յուրաքանչյուր խմբում) այնպես, որ աշակերտները համատեղ սովորելու, աշխատելու և քննարկման հնարավորություն ունենան: Ինչպես նաև՝ ուսուցչի սեղանը տեղադրեք դասասենյակի ծայրամասում: Ներառական դասարանում ուսուցիչները հազվադեպ են նստում օրվա ընթացքում, և կարիք չկա, որ սեղանը տեղադրված լինի իր սովորական տեղում: Որոշ դեպքերում աշակերտները ոչ թե գրասեղանների, այլ սովորական սեղանների շուրջ են նստում: (Designing Classroom for Inclusive Learning, 2011): Հայաստանյան դպրոցների մեծ մասի համար սա խնդիր կլինի, քանի որ հաճախ գրասեղանները ամրացված են հատակին և հնարավոր չէ դրանք տեղաշարժել:

Հուշում #2: Հատկացնել կենտրոններ



Կենտրոնները կիրառելի են ուսումնառության տարբեր ձևերի համար, բայց դրանք պետք է բաց և հասանելի լինեն: Բացի այդ, յուրաքանչյուր կենտրոնում նյութերն ու օժանդակ առարկաները (manipulatives) պետք է համապատասխան լինեն և տեղադրված լինեն բոլոր աշակերտների համար հասանելի տեղերում: Գրքերը բարձր դարակում դնելը սահմանափակումներ է առաջացնում կարճահասակ կամ անվասայլակով աշակերտների համար:

Հուշում #3: Ստեղծել լայն միջանցքներ

Բավարար ընդարձակությամբ տարածք տրամադրելը ներառական դասասենյակ ապահովելու կարևոր գործոններից մեկն է: Չնայած դուք չեք կարող տնօրինել, թե ինչ կահույք պետք է լինի դասասենյակում, բայց կարող եք որոշել, թե ինչպես դասավորել այն: (Դարձյալ նշենք, որ Հայաստանում շատ դասասենյակներում չկա այդ ճկունությունը): Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի չափորոշիչների համաձայն՝ տարածքը պետք է երեք անգամ մեծ լինի անվասայլակով կամ շարժունակության օժանդակող այլ հարմարանքներով աշակերտների համար: Բացի այդ, շարժունակությանն օժանդակող հարմարանքների ու սարքերի համար կարող է օգտագործվել լրացուցիչ տարածք: Դասասենյակում կահույքի դասավորվածությունը պետք է լինի այնպիսին, որ սեղանների միջև բավականաչափ տարածք լինի շարժվելու համար: Ուսուցիչները պետք է այնպես անեն, որ սեղանների միջև ուղիները ընդարձակ լինեն (Annual Report 2012 | The National Diasability Authority):

Հուշում #4: Դասասենյակի ձևավորումը

Ներառական դասասենյակը պետք է այնպես ձևավորված լինի, որ աշակերտները չշեղվեն և զգայական խճողում չունենան: Չափազանց վառ գույները, պաստառները, խառնաշփոթը և

կահույքը կարող են հեշտությամբ շեղել աշակերտներին: Վերացրեք խառնաշփոթը, կարգավորեք կահույքը, ամրացրեք լարերն ու մալուխները և դասասենյակում ելքի ու մուտքի նշաններ ու ուղեցույցներ տեղադրեք արտակարգ իրավիճակների համար (Designing a Classroom for Inclusive Learning, 2011):

Հուշում #5: Գործնական աշխատանքների համար տարածքներ ու լաբորատորիաներ

Համընդհանուր օգտագործման տարածքներից (մուտք, նախասրահ, աստիճաններ, միջանցքներ) բացի, լաբորատորիաներում նույնպես պետք է կարգավորվող բարձրությամբ սեղաններ/նստարաններ և մատչելի սարքավորումներ լինեն, ինչպես օրինակ՝ լծակների պատշաճ բռնակներ ձեռքերի սահմանափակ շարժունություն ունեցող աշակերտների համար, և պարզ, հստակ տեսանելի գծանշաններ: Բոլոր ուղիները պետք է մալուխներից զերծ լինեն: Էկրանները պետք է անփայլ ու անդրադարձող չլինեն՝ տեսողական խանգարումներ ունեցող աշակերտների համար (Annual Report 2012 | The National Diasability Authority):

Հուշում #6: Մատչելի մուտք

Դպրոցի տարածքը պետք է մատչելի լինի փոխադրամիջոցների և անվասայլակների համար: Կարևոր է բոլոր մուտքերի մոտ շեմքին համապատասխան բարձրություն ապահովելը: Բազմահարկ շինությունների դեպքում պետք է լինեն նաև թեքահարթակներ և/կամ վերելակներ: Բոլոր ուղիները պետք է զերծ լինեն խոչընդոտներից: Այս չափանիշները պետք է կիրառել տարհանման բոլոր ուղիների համար: Ապակե դռներն ու պատերը պետք է հստակ տեսանելի լինեն տեսողական խանգարումներ

ունեցող անձանց համար (Annual Report 2012 | The National Diasability Authority):

Վարժություն: Մտապահելով վերը ներկայացված վեց հուշումները՝ խմբով կատարել հետնյալ առաջադրանքները:

Ձեր գործընկեր ուսուցիչների հետ քննարկեք, թե այս հուշումներից որոնք կարող են ներդրվել ձեր դպրոցում:

- Քննարկեք այս ներդրման համար անհրաժեշտ քայլերը՝ հանդիպում դպրոցի տնօրենի հետ, նվիրատուների կամ հովանավորող շինարարական կազմակերպության որոնում և այլն:
- Ձեր մտքերը փոխանակեք այլ ուսուցիչների հետ:

2.7. Համապատասխան հարմարություններ

Համապատասխան հարմարությունը նշանակում է կատարել անհրաժեշտ, համապատասխան և պատշաճ ձևափոխումներ կամ կարգավորումներ, որոնք անտեղի հավելումներ չեն, և որոնց շնորհիվ երաշխավորվում է, որ հաշմանդամություն ունեցող անձը կկարողանա գործարկել որոշակի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով իրավունքներ: *Համապատասխան հարմարություններ* ստեղծելը պահանջ է, որը սահմանված է Հոդված 9 –Հասանելիություն | United Nations Enable, 2019-ում:

Հաշմանդամություն ունեցող անձանց պետք է տրամադրել *համապատասխան հարմարություններ*՝ օգնելու, որ նրանք, մյուսների հետ հավասար հիմունքներով, կրթություն ստանան: Սյն կարող է ընդգրկել հարմարություններ ու ծառայություններ, որոնք կօգնեն հաղթահարել խտրականությունը: Որոշելու համար, թե հարմարությունը համապատասխան է, թե ոչ, պետք է գնահատել դրա տեղին և արդյունավետ լինելը նրա իսկ արժեքի

համեմատ: Անհրաժեշտ հարմարության տեսակը միշտ պետք է որոշել աշակերտի հետ, անհրաժեշտության դեպքում նաև՝ ծնողների կամ խնամակալների հետ: Հարմարություններ կարող են լինել, օրինակ՝

- Դասասենյակը փոխելը,
- Ներդասարանային հաղորդակցության տարբեր ձևերի ապահովումը,
- Տպագրված նյութի տառաչափը մեծացնելը, նշանների կամ և/կամ առարկաների, այլ այլընտրանքային ֆորմատի նյութերի ապահովումը,
- Աշակերտներին աղագրողներ կամ թարգմանիչներ տրամադրելը,
- Աշակերտներին ուսումնառության և գնահատման օժանդակ միջոցներ կիրառել թույլ տալը,
- Աշակերտին ավելի շատ ժամանակ տալը,
- Ոչ հիմնական աղմուկի կրճատումը և զգայական գերբեռնվածության հանդեպ զգայունակության ապահովումը,
- Գնահատման այլընտրանքային մեթոդների ապահովումը կամ ուսումնական ծրագրի տարրերը այլընտրանքային տարրերով փոխարինելը,
- Սեմինարների ժամանակ ժեստերի լեզվով թարգմանություն ապահովելը,
- Տեղեկություններն ու հաղորդագրությունները այլընտրանքային ձևաչափերով մատչելի դարձնելը (օրինակ՝ տեքստեր բրայլյան գրերով, խոշոր տպագիր տառեր, դյուրընթեռնելիություն, աուդիո ձայնագրություն և այլն),
- Դպրոցներում տեսողության խանգարումներ ունեցող անձանց էկրանից կարդացող ծրագիր տրամադրելը,
- Շինություն նախագծելիս, կառուցելիս կամ վերանորոգելիս հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի

առնելը, որպեսզի դասասենյակները, լաբորատորիաները, զուգարանները և այլ հարմարությունները մատչելի լինեն:

ԳԼՈՒԽ 3: ՀԵՆԱՆԻՇԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ (BENCHMARKING TOOL)

Այս բաժնում ներկայացված են վեց տարբեր հենանիշեր (benchmarks), որոնք ուսուցիչներին ու կրթության ոլորտի վարչական աշխատողներին կօգնեն վերանայել, թե իրենց դպրոցներն ինչպես են աջակցություն տրամադրում լրացուցիչ հարմարությունների կարիք ունեցող մեծ թվով աշակերտներին՝ կրթության բարձր որակ ապահովելու համար: Այս գործիքը ստեղծվել է ըստ՝ http://inclusionerasmus.org/ (Middlemas et al., 2018):

Հենանիշային վեց գործիքներն են `

- Հենանիշ 1. Մեր դպրոցի համատեքստը
- Հենանիշ 2. Դպրոցի կանոնակարգերը և ուղեցույցները
- Հենանիշ 3. Որակի ապահովում և բարձրացում
- Հենանիշ4. Հարմարություններ, շինություններ և կացարաններ
- Հենանիշ 5. Ուսումնառություն և ուսուցում
- Հենանիշ 6. Լրացուցիչ աջակցություն և խորհրդատվություն

Ներառման հենանիշային գործիքները նախատեսված են ուսուցիչների, վարչական աշխատողների և/կամ աշակերտների միջև խոսակցությունը խրախուսելու համար, ինչը կարող է հանգեցնել կանոնակարգային, ընթացակարգային կամ այլ փոփոխությունների, որոնք կիրականացվեն հաջորդող ամիսների կամ ուսումնական տարվա ընթացքում: Բոլոր շահակիցները (օրինակ՝տարբեր փորձառություններ և հմտություններ ունեցող աշակերտներն ու աշխատողները) պետք է ներգրավված լինեն խոսակցության մեջ՝ տարբեր տեսանկյուններից իրավիճակի

իրատեսական ու համապարփակ պատկերը ստանալու համար: Որոշ փոփոխություններ համեմատաբար հեշտ կարող են իրականացվել, մյուսների համար ավելի երկար ժամանակ կպահանջվի՝ ընթացակարգային, ֆինանսական կամ կադրային խնդիրների պատճառով: Այս գործընթացը պետք է կրկնել ամեն տարի՝ նոր մարտահրավերները առերեսելու և դպրոցի առաջընթացը գնահատելու համար:

Յուրաքանչյուր հենանիշային պնդման համար տրվում է 1-4 միավոր: Արդյունքը կընդհանրացվի յուրաքանչյուր էջի վերջում: Ավարտելուց ու վերանայելուց հետո հնարավոր կլինի որոշել առաջնահերթություններն ու սկսել նախագծման գործընթացը:

3.1. Հենանիշ 1. Մեր դպրոցի համատեքստը

Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

1.1. Մեր դպրոցի տեսլականը և/կամ առաքելությունը սատարում և խթանում է սոցիալական չափողությունը (social dimension), և ակտիվ կերպով շրջանառվում է դասախոսական կազմի, աշխատակազմի և ուսանողների շրջանում

1) Ներկայումս չկա որևէ տեսլական/առաքելություն

2) Ունենք տեսլական/առաքելություն, բայց այն չի ներառում սոցիալական չափողությունը

3) Մեր տեսլականը/առաքելությունը որոշ չափով ընդունում է սոցիալական չափողությունը

4) Մեր տեսլականը/առաքելությունը հստակ կերպով ընդունում է սոցիալական չափողությունը և հանրամատչելի է

1.2. Մենք պատրաստել ու հրապարակել ենք առաջիկա 3-5 տարիների մեր ռազմավարական նպատակները/ ռազմավարական ծրագիրը

1) Ներկայումս որևէ ռազմավարական ծրագիր չկա

2) Կա ռազմավարական ծրագիր, բայց առկա չէ սոցիալական բաղադրիչը

3) Ռազմավարական ծրագիրն ունի սոցիալական չափողության որոշակի ճանաչում

4) Ռազմավարական ծրագիրը հստակ կերպով ճանաչում է սոցիալական չափողությունը և այն հանրամատչելի է

1.3. Մենք հավաքագրում ենք ներառման և/կամ բազմազանության խնդիրներ ունեցող ուսանողների անհրաժեշտ տվյալներ

1) Տվյալների հավաքագրում ընդհանրապես չկա

2) Չկա ներառման/բազմազանության խնդիրներին վերաբերող տվյալների հավաքագրում

3) Առկա է ներառման/բազմազանության խնդիրներին վերաբերող տվյալների հավաքագրում որոշակի չափով

4) Ունենք ներառման/բազմազանության խնդիրներին վերաբերող տվյալների հավաքագրման համապարփակ համակարգ

1.4. Մենք հստակեցրել ենք սոցիալական ներգրավման խնդիրներով զբաղվող հանձնաժողովի ու ղեկավար կազմի պարտականությունները

1) Չկան ներառման, բազմազանության կամ սոցիալական ներգրավման խնդիրների պատասխանատուներ

2) Ղեկավարության պատասխանատվությունները լավ սահմանված չեն

3) Ղեկավարության պատասխանատվությունները լավ սահմանված են, բայց զարգացման փուլում են

4) Ղեկավարության պատասխանատվությունները լավ սահմանված են; կա սոցիալական ներգրավման հարցերով զբաղվող աշխատակից

1.5. Ուսուցիչները բազմազանության և ներառման համար հստակ պատասխանատվություններ ունեն

1) Ոչ մի ուսուցիչ չունի ներառման, բազմազանության և սոցիալական ներգրավման համար որևէ պատասխանատվություն
2) Դեռ ամբողջովին չենք սահմանել ուսուցիչների պատասխանատվություններն այս ոլորտում
3) Որոշ պատասխանատվություններ հստակեցվել են
4) Ուսուցիչների պատասխանատվությունները լավ սահմանված են, հիմնական հանձնաժողովներում ունեն մշտական ներկայացուցիչ

1.6. Կանոնավոր կերպով կազմակերպում ենք աշխատակազմի նախապատրաստում և/կամ վերապատրաստում սոցիալական ներգրավման խնդիրների վերաբերյալ

1) Հասանելի չէ
2) Սահմանափակ է
3) Որոշ չափով առկա է
4) Կան էական հնարավորություններ, դպրոցի աշխատակազմին տրամադրում ենք սոցիալական ներգրավման վերաբերյալ լիարժեք աջակցություն և վերապատրաստման հնարավորություններ

1.7. Լավ կապեր ունենք հաշմանդամների կամ փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող խմբերը ներկայացնող տեղական կազմակերպությունների հետ

1) Այս պահին չունենք

2) Ունենք սահմանափակ կապեր

3) Ունենք որոշակի կապեր

4) Ունենք կայուն կապեր

Հենանիշային գործիք # 1: Միավոր = /28

3.2. Հենանիշ 2. Դպրոցի կանոնակարգերը և ուղեցույցները

Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

2.1. Ստեղծել ենք փոխադրման (ավագ դպրոցից համալսարան/մասնագիտական վերապատրաստում/աշխատանք) հստակ համակարգ սոցիալական ներգրավման խնդիր ունեցող աշակերտների համար:
1) Ոչ մի աշակերտի համար
2) Սոցիալական ներգրավման խնդիր ունեցող աշակերտների համար ոչ մի առանձնահատուկ համակարգ չկա
3) Սոցիալական ներգրավման խնդիր ունեցող աշակերտների համար կան որոշ համակարգեր
4) Սոցիալական ներգրավման խնդիր ունեցող աշակերտների համար առկա է լավ սահմանված փոխադրման ծրագիր

2.2. Դասախոսական կազմն ու աշխատակազմը իրազեկված են սոցիալական ներգրավումն իրագործելու ազգային ուղեցույցներից:
1) Աշխատակազմի շատ քիչ մասն է իրազեկված սոցիալական ներգրավման իրագործման հետ կապված ազգային կանոնակարգերից/ուղեցույցներից
2) Աշխատակազմի որոշ մասը իրազեկված է
3) Աշխատակազմի մեծ մասը իրազեկված է
4) Մեր ողջ աշխատակազմը իրազեկված է ազգային կանոնակարգերից/ուղեցույցներից և հասկանում է, թե ինչպես է պետք դրանք իրագործել

2.3. Դասախոսական կազմն ու աշխատակազմը իրազեկված է սոցիալական ներգրավումն իրագործելու դպրոցի կանոնակարգերից:
1) Աշխատակազմի շատ քիչ մասն է իրազեկված սոցիալական ներգրավման իրագործման վերաբերյալ դպրոցի կանոնակարգերից/ուղեցույցներից
2) Աշխատակազմի որոշ մասը իրազեկված է
3) Աշխատակազմի մեծ մասը իրազեկված է
4) Մեր ողջ աշխատակազմը իրազեկված է դպրոցի կանոնակարգերից/ուղեցույցներից և հասկանում է, թե ինչպես է պետք դրանք իրագործել

2.4. Մեր դպրոցը ուղեցույցներ ունի, թե ինչպես պետք է ուսուցիչները/աշխատակազմը իրականացնեն/ի սոցիալական ներգրավումը և' ուսումնական ծրագրի շրջանականերում, և' հաստատության մակարդակում:
1) Դեռ չունենք սոցիալական ներգրավումն իրականացնելու վերաբերյալ որևէ կանոնակարգ/ուղեցույց
2) Ունենք սոցիալական ներգրավումն իրականացնելու վերաբերյալ մի քանի կանոնակարգեր/ուղեցույցներ
3) Ունենք որոշ կանոնակարգեր, որոնք վերաբերում են սոցիալական ներգրավումն իրականացնելուն
4) Ունենք սոցիալական ներգրավումն իրականացնելու վերաբերյալ մեծ թվով կանոնակարգեր

2.5. Մեր դպրոցն ունի իրազեկման ծրագիր (outreach program) աշակերտներին և նրանց ծնողներին տեղեկացնելու համար, թե ինչ է հասանելի մեր դպրոցում (ինչպես օրինակ՝ հասարակության համար առցանց կամ տպագրված տեղեկատվական նյութեր):
1) Չկա իրազեկման գործող ռազմավարություն

2) Կա իրազեկման սահմանափակ ռազմավարություն
3) Կա որոշակի իրազեկվածություն պոտենցիալ աշակերտների և նրանց ընտանիքների շրջանակում, բայց տեղեկատվական ռեսուրսների թիվը սահմանափակ է
4) Կա լայնածավալ իրազեկվածություն պոտենցիալ աշակերտների և նրանց ընտանիքների շրջանակում, և անհրաժեշտ ողջ տեղեկությունը հասանելի է շրջանառման համար

2.6. Դասախոսական կազմն ու աշխատակազմը սատարում են ներառական կրթությունը:
1) Նրանցից ոչ ոք այդ գաղափարի ջատագովը չէ
2) Դասախոսական կազմից/աշխատակազմից ոմանք կողմ են
3) Դասախոսական կազմի/աշխատակազմի մեծ մասը կողմ է
4) Մեր ողջ անձնակազմը կողմ է և հասկանում է ներառական կրթական միջավայրի կարևորությունն ու արժեքը

Հենանիշային գործիք # 2: Միավոր= /24

3.3. Հենանիշ 3. Որակի ապահովում և բարձրացում

Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

3.1. Սոցիալական ներգրավմանն առնչվող գործողությունների հետ կապված որոշումներ կայացնելուն սատարելու և առաջընթացը գնահատելու համար գնահատման համակարգ ունենք:
1) Դեռ չունենք գնահատման համակարգ
2) Նոր ենք սկսում ստեղծել այդպիսի համակարգ
3) Ունենք գնահատման համակարգ, բայց այն ամբողջովին չի գործածվում աշխատակազմի բոլոր անդամների/ուսուցիչների կողմից
4) Ունենք ամբողջովին կայացած գնահատման համակարգ՝ դպրոցի բոլոր ոլորտներում որակ ապահովելու համար

3.2. Ունենք տվյալների բազա, որն աջակցում է սոցիալական ներգրավման վերաբերյալ դասավանդման եղանակների և դասարանը կառավարելու հետ կապված որոշումներ կայացնելուն (օրինակ՝ ուսուցիչների դրսևորման/ուսումնական պլանի նախագծման և այլնի գրախոսում):
1) Տվյալների բազա չունենք
2) Այժմ մտածում ենք համապատասխան տվյալների բազայի ստեղծման եղանակների մասին
3) Ունենք տվյալներ, բայց դրանք շատ սահմանափակ են
4) Կանոնավոր կերպով հավաքագրում ենք համապատասխան տվյալներ և դրանք կիրառում ենք հետագա քայլերի մասին տեղեկացնելու համար

3.3. Ուսումնական պլանը և դասերը կազմելիս հաշվի ենք առնում աշակերտների տեսակետները:

1. Ոչ, ունենք մեր տարեկան ուսումնական պլանը, որը հաստատվում է Կրթության և գիտության նախարարության կողմից
2. Այո, հաշվի ենք առնում աշակերտների տեսակետները, բայց սահմանափակ չափով
3. Հաշվի ենք առնում աշակերտների տեսակետները, բայց ոչ ամբողջովին
4. Միշտ հաշվի ենք առնում աշակերտների տեսակետները

3.4. Ունենք ուսումնառության և դասավանդման գործընթացի որակի ցուցիչների մի խումբ, որը հաշվի է առնում աշակերտների թերի ներկայացչական խմբերի կարիքները:

1) Հաշվի չենք առնում աշակերտներին, որոնք ոչ թերի ներկայացչական խմբերից են
2) Հաշվի ենք առնում թերի ներկայացչական խմբերից աշակերտներին, բայց նվազագույն չափով
3) Հաշվի ենք առնում թերի ներկայացչական խմբերից աշակերտներին, բայց ոչ ամբողջովին
4) Միշտ հաշվի ենք առնում թերի ներկայացչական խմբերից աշակերտների կարիքները և տվյալները տրամադրում դասախոսական կազմին ու անձնակազմին

3.5. Թերի ներկայացչական խմբերին վերաբերող որակի խնդիրներն ու մտահոգությունները/հարցերը խողովակվում են դպրոցի բոլոր մակարդակներով:

1) Այս պահին պաշտոնական հաշվետվության համակարգերը շատ քիչ են (կամ ընդհանրապես չկան)

2) Նոր ենք սկսում ստեղծել հաշվետվությունների համակարգեր որակի ապահովման խնդիրների համար, որոնք ազդում են թերի ներկայացչական խմբերի վրա
3) Ունենք գործող որոշ համակարգեր, բայց այս ոլորտը դեռ զարգացման կարիք ունի
4) Կանոնավոր կերպով վերանայում ենք որակի ապահովման հարցերը և հաշվետվությունների արդյունքների մասին տեղեկացնում դասախոսական կազմին և անձնակազմին

3.6. Ներկայումս աշխատող և նոր ընդունված ուսուցիչները պարբերաբար վերապատրաստում են անցնում թերի ներկայացչական խմբերի աշակերտների կարիքներին վերաբերող որակի ապահովման հարցերի վերաբերյալ:
1) Կանոնավոր կերպով վերապատրաստումներ չեն անցկացվում
2) Նոր ենք սկսում որակի ապահովման վերաբերյալ վերապատրաստումներ կազմակերպելը
3) Այս ոլորտում կան որոշ վերապատրաստումներ, սակայն դրանք շատ սահմանափակ են
4) Բոլոր ուսուցիչները պարբերաբար վերապատրաստում են անցնում, որոնց ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում որակի ապահովմանը

Հենանիշային գործիք #3 : Միավոր = /24

3.4. Հենանիշ 4. Հարմարություններ, շինություններ և կացարաններ

Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

4.1. Մեր դասասենյակների, դպրոցական կառույցների ու գույքի մեծ մասը մատչելի է բոլոր աշակերտների համար, այդ թվում՝ ֆիզիկական և զգայական խանգարում ունեցողների. աշխատակազմը նախապես տեղեկանում է աշակերտների առանձնահատուկ կարիքների մասին:
1) Չունենք ոչ մի մատչելի դասասենյակ
2) Մեր դասասենյակներից մի քանիսը դարձրել ենք մատչելի
3) Որոշ դասասենյակներ մատչելի են, բայց դրանց հետ կապված դեռ կատարելիք աշխատանքներ ունենք
4) Մեր բոլոր դասասենյակները կամ դասասենյակների մեծ մասը մատչելի են բոլոր աշակերտների համար

4.2. Մեր դպրոցը/դասասենյակները մատչելի դարձնելու ռազմավարություններ ենք ուսումնասիրել:
1) Ոչ, չգիտենք ինչպես դա իրագործել
2) Նոր ենք սկսել ուսումնասիրել մեր դպրոցը/դասասենյակները մատչելի դարձնելու ռազմավարություններ
3) Ուսումնասիրել ենք ռազմավարություններ, բայց ոչ լիարժեք կերպով
4) Ուսումնասիրել ենք ռազմավարություններ և առանձնացրել ենք կյանքի կոչելու համար տեղին տարբերակները

4.3. Մեր դպրոցում ուսումնառությանն աջակցելու համար, հատկապես թերի ներկայացչական խմբերի համար, ինչպես

օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող աշակերտները, օգտագործում ենք տեխնոլոգիաներ ու ծրագրեր:

1) Այս պահին ակտիվորեն չենք խրախուսում տեխնոլոգիաների/ծրագրերի կիրառումը

2) Կան որոշ ուսուցիչներ, որոնք քաջահմուտ են տեխնոլոգիաներով ուսուցմանը

3) Մեր ուսուցիչների մեծ մասը սկսել է օգտագործել տեխնոլոգիաներ ուսուցմանն աջակցելու համար

4) Բոլոր ուսուցիչները քաջահմուտ են ուսումնառության մի շարք տեխնոլոգիաների կիրառությանը և սկսել են կիրառել դրանք աշակերտների ուսումնառության գործընթացին աջակցելու համար

4.4. Ունենք սննդի մի շարք տարբերակներ հատուկ սննդակարգ ունեցող աշակերտների համար՝ կրոնական կամ բժշկական կարիքներին համապատասխան:

1) Չկա սննդի մատակարարում

2) Չկան սննդի կարիքներին հարմարեցված տարբերակներ

3) Կա կարիքներին հարմարեցված սննդի սահմանափակ տեսականի

4) Կա սննդի տեսակների մեծ բազմազանություն՝ տարբեր սննդակարգերի պահանջներին համապատասխան

4.5. Ունենք տարածքի տարբեր հատվածներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված զուգարաններ:

1) Չունենք

2) Շատ սահմանափակ թվով

3) Կան որոշ հատվածներում

4) Ունենք մի քանի ամբողջովին մատչելի զուգարաններ, ինչպես նաև լվացվելու համար նախատեսված տարածքներ այն աշակերտների համար, որոնք դրանց կարիքը ունեն

4.6. Ունենք բժշկական կենտրոն/բուժօգնություն այն աշակերտների համար, որոնք ունեն անընդհատ հսկողության/օգնության կարիք (օրինակ՝ էպիլեպսիայով հիվանդ կամ խրոնիկ հիվանդություն ունեցող աշակերտների համար):

1) Չունենք բուժօգնության ծառայություն
2) Ունենք բուժօգնության ծառայություն, բայց սահմանափակ ժամերի
3) Աշխատում ենք բուժկետ ու բուժօգնության ծառայության հարմարություններ ստեղծելու ուղղությամբ
4) Ունենք բուժօգնության կենտրոն/բուժքույր, և աշակերտները օգտվում են այդ հնարավորությունից

Հենանիշային գործիք #4: Միավոր = /24

3.5 Հենանիշ 5. Ուսումնառություն և ուսուցում

Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

5.1. Մեր ուսումնական պլանն ու դասավանդման սկզբունքները հաշվի են առնում թերի Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

5.1. Մեր ուսումնական պլանն ու դասավանդման սկզբունքները հաշվի են առնում թերի ներկայացչական խմբերի կարիքները. յուրաքանչյուր առարկայի համար կա հատուկ նման պատասխանատվությամբ ուսուցիչ:
1) Ոչ այս պահին. չունենք ուսումնական պլան կազմելու հատուկ ուղեցույցներ
2) Որոշ աշակերտների կարիքներ հաշվի են առնված (օրինակ՝ օտարերկրյա կամ հաշմանդամ աշակերտներ)
3) Աշակերտների մեծամասնության կարիքները հասկանալի են մեր ուսուցիչների մեծամասնության համար
4) Մեր բոլոր աշակերտների ուսումնառության կարիքները ամբողջովին հասկանալի են, և ուսուցիչները տեղյակ են յուրաքանչյուր դաս կամ ուսուցման աղբյուր հնարավորինս ներառական և հասանելի դարձնելու անհրաժեշտության մասին

5.2. Ուսուցիչները քաջատեղյակ են մի շարք ներառական մանկավարժական մոտեցումներից և արդյունավետ կերպով կիրառում են դրանք՝ դասը պլանավորելիս (օրինակ՝ PowerPoint օգտագործելը, պարզ/հասկանալի ուսումնական նյութեր տրամադրելը, ապահովելը, որ բոլոր աշակերտներին նախապես

տրամադրվի ընթերցանության ցանկը, քննարկման տարբեր մեթոդների կիրառումը):
1) Ուսուցիչները քաջատեղյակ չեն
2) Ուսուցիչները սահմանափակ կերպով են տեղյակ տարբեր մոտեցումներից
3) Ուսուցիչները որոշ չափով տեղեկացված են
4)Բոլոր ուսուցիչները կիրառում են մի շարք տարբեր մանկավարժական մոտեցումներ՝ աշակետների ուսումնառության առավելագույն արդյունավետությունն ապահովելու համար

5.3. Աշակերտների հետ պարբերաբար հարցումներ են անցկացվում դասավանդման մեթոդների և գնահատման արդյունավետության վերաբերյալ:
1) Աշակերտների հետ հազվադեպ են հարցումներ անցկացվում այս հարցերի վերաբերյալ
2) Կախված է ուսուցչի քաջատեղյակությունից
3) Գործում է որոշ թույլ ներկայացչական խմբերի համար
4) Գործում է բոլոր թերի ներկայացչական խմբերի համար, աշակերտներին պարբերաբար հնարավորություն է ընձեռվում բարձրաձայնել իրենց մտահոգությունները դասավանդման և գնահատման ձևաչափերի վերաբերյալ

5.4. Մեր ուսուցիչները պահանջկոտ են թերի ներկայացչական խմբերից աշակերտների նկատմամբ:
1) Սա չի քննարկվել դպրոցի մակարդակով
2) Ուսուցիչները բավականին ցածր ակնկալիքներ ունեն որոշ խմբերից
3) Ուսուցիչները բոլոր աշակերտներից նույն ակնկալիքներն ունեն

4) Ուսուցիչները մեծ ակնկալիքներ ունեն բոլոր աշակերտներից և յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն են տալիս հասնելու լավագույն արդյունքի

5.5. Կազմակերպում ենք լեզվի և գրավոր խոսքի լրացուցիչ դասընթացներ ոչ լեզվակիրների կամ լրացուցիչ ուշադրության կարիք ունեցող աշակերտների համար (օրինակ՝ ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտներ, դիսլեքսիա ունեցող աշակերտներ):

1) Չկա լեզվի/գրավոր խոսքի լրացուցիչ աջակցություն

2) Կա շատ սահմանափակ չափով աջակցություն

3) Կա որոշակի չափով աջակցություն

4)Բոլոր աշակերտների համար լիովին հասանելի է աջակցությունը ուսումնառության մեջ՝ ըստ կարիքի

5.6. Դասախոսների կազմակերպած կրթական ուղևորություններն ու այցելությունները մատչելի/հասանելի են բոլոր աշակերտներին:

1) Մենք սովորաբար ուղևորություններ/այցելություններ չենք կազմակերպում

2) Ուղևորություններ/ճանապարհորդություններ կազմակերպվում են, բայց ֆինանսապես մատչելի չեն աշակերտների մեծամասնության համար

3) Կազմակերպվում են և ֆինանսապես մատչելի են, բայց հասանելի չեն բոլոր աշակերտների համար

4)Ուղևորությունները/այցելությունները ֆինանսապես մատչելի և հասանելի են բոլոր աշակերտների համար, ունենք ֆինանսավորում և լրացուցիչ աջակցություն

Հենանիշային գործիք #5: Միավոր =	/24

3.6 Հենանիշ 6. Լրացուցիչ աջակցություն և խորհրդատվություն

Ընտրեք այն պնդումները, որոնք լավագույնս նկարագրում են ձեր դպրոցը:

6.1. Մեր դպրոցն ունի աշակերտների աջակցության թիմ, որը համագործակցում/գնահատում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսումնառության ընթացքը:
1) Չունենք աշակերտների աջակցության թիմ
2) Նոր ենք ստեղծում աշակերտների աջակցության թիմ
3)Ունենք աշակերտների աջակցության թիմ, բայց այն արդյունավետ կերպով չի գործում
4) Ունենք աշակերտների աջակցության լիովին ձևավորված լավ գործող թիմ

6.2. Մեր դպրոցն ունի հատուկ սարքավորումներ կամ ծրագրեր գնելու համար նախատեսված ֆինանսական միջոցներ:
1) Չունենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար նախատեսված ֆինանսական միջոցներ
2) Նոր ենք սկսում հատկացնել միջոցներ այդպիսի գնումների համար
3) Ունենք օժանդակ միջոցների համար նախատեսված ֆինանսական միջոցներ, բայց այդ միջոցները քիչ են
4) Գնել ենք օժանդակ միջոցներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների և ուսուցիչների համար

6.3. Մեր դպրոցը թերի ներկայացչական խմբերին խորհրդատվություն է տալիս կրթաթոշակների/դրամաշնորհների մասին:

1) Չունենք տեղեկատվություն թերի ներկայացչական խմբերին տրամադրվող դրամաշնորհների մասին

2) Նախատեսում ենք մեր դպրոցում այդպիսի ծառայություն ներդնել

3) Ստանում ենք տեղեկություններ կրթաթոշակների, դրամաշնորհների մասին, բայց շատ քիչ

4) Ստանում ենք դրամաշնորհների մասին տեղեկություններ և ուսուցիչները, անձնակազմն ու աշակերտները քաջատեղյակ են հասանելի միջոցներից

6.4. Ունենք օժանդակ անձնակազմ (հոգեբան, լոգոպեդ, խորհրդատու, սոցիալական աշխատակից) աշակերտներին ծառայություններ մատուցելու համար:

1) Չունենք օժանդակ անձնակազմ

2) Նոր ենք կազմավորում օժանդակ անձնակազմ

3) Ունենք որոշակի թվով օժանդակ անձնակազմ, որը ծառայություններ է մատուցում աշակերտներին

4) Մեր դպրոցն ունի կայացած օժանդակ անձնակազմ

6.5. Պարբերաբար գնահատում և վերանայում ենք մեր աշակերտների աջակցության համակարգը:

1) Դեռ չունենք գնահատման կայացած համակարգ

2) Նոր ենք սկսում ձևավորել այդպիսի համակարգ

3) Ունենք գործող գնահատման համակարգ, բայց ոչ բոլոր ուսուցիչներն ու անձնակազմի ոչ բոլոր անդամներն են ըմբռնում դրա կարևորությունը

4) Պարբերաբար վերագնահատում ենք մեր ծառայությունները որակի ապահովման նկատառումներով

6.6. Կան ընթացակարգային ուղեցույցներ, որոնք երաշխավորում են, որ գնահատման արդյունքում ստացված տվյալները նպաստեն աշակերտների աջակցության համակարգի բարելավմանը:

1) Դեռ չունենք ընթացակարգեր

2) Նոր ենք սկսում սահմանել այդպիսի ընթացակարգեր

3) Ունենք գործող համակարգ, բայց այն լիովին չի կիրարկվում

4) Պարբերաբար վերագնահատում ենք մեր ընթացակարգերը, որպեսզի որակ ապահովենք թերի ներկայացչական խմբերի աշակերտների համար. այս գնահատականները հասանելի են ուսուցիչներին ու հիմնական աշխատակազմին

Հենանիշային գործիք # 6: Միավոր = /24

ԳԼՈՒԽ 4. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Շատ դեպքերում հաշմանդամություն ունեցող երեխաներին դպրոց գնալու և դասերին ներկա լինելու հնարավորություն տալն ընկալվում է որպես ներառում, մինչդեռ վերջինս ենթադրում է ուսումնական գործընթացին երեխայի լիարժեք մասնակցություն և ոչ թե պարզապես ֆիզիկական ներկայություն դասարանում (ՅՈՒՆԻՍԵՖ, 2012):

Ներառական դասարան հղացքի վերջին վերաձևակերպմամբ այն շատ է տարբերվում տասնամյակներ առաջվա դասարանից: Ներառական գործելակերպերն ու կարիքներն ամբողջովին փոխել են դասավանդման ձևերի, ուսումնական պլանի և դասարանի նախագծման մասին պատկերացումները: Ներառական դասարանում ուսուցիչները կազմակերպում են այնպիսի վարժանքներ ու դասեր, որոնք կարելի է հարմարեցնել աշակերտների կարողությունների տարբեր մակարդակներին՝ անընդհատ առաջնորդվելով հետևյալ հարցերով.

- Ինչպե՞ս դասարանը դարձնել աշակերտի համար հարմարավետ միջավայր:
- Ինչպե՞ս կիրառել տեխնոլոգիական գործիքներ դասարանում:
- Ինչպե՞ս գրավել աշակերտներին այս տեխնոլոգիական գործիքների կամ դասավանդման այլ ձևերի միջոցով:

Ուսումնասիրությունները ի հայտ են բերել կրթության մի քանի մոդելներ, որոնք արտացոլում են բարձրորակ կրթություն ապահովելու մի շարք մոտեցումներ, կրթություն, որն ապահովում է հնարավորություններ բոլոր աշակերտների համար և ընդլայնում ավագ դպրոցից հետո կրթությունը շարունակելու նրանց

հնարավորությունները (For All Kids, 2019; Inclusive STEM High School Design: 10 Critical Components, 2019):

Պետք է քաջատեղյակ լինեք, թե ինչ անարդար վերաբերմունք կարող եք ցուցաբերել աշակերտների նկատմամբ՝ չունենալով ներառական վերաբերմունք դասարանում: Բոլոր աշակերտների նկատմամբ, այդ թվում հաշմանդամություն ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող աշակերտների նկատմամբ ձեր դրական վերաբերմունքը, ինչպես նաև ուսուցման-ուսումնառության գործընթացին բոլոր աշակերտներին ներառելու ձեր ջանքերը պետք է ակնհայտ լինեն: Սա հնարավոր է միայն այն դեպքում, եթե դասարանում դրական մթնոլորտ ստեղծելու քայլեր ձեռնարկեք:

Դրական մթնոլորտը կարևոր է բոլոր աշակերտների ուսումնառության համար: Դրան նպաստում է ոչ միայն աշակերտների միջև, ինչպես նաև ձեր (ուսուցչի) ու աշակերտների միջև փոխադարձ հարգանքը, այլ նաև այն հանգամանքը, որ դուք՝ որպես ուսուցիչ, մեծ ակնկալիքներ (վարքի, արդյունքների, մասնակցության և այլնի տեսանկյունից) ունեք բոլոր աշակերտներից: Դուք նրանց խրախուսում եք արդարացնել ձեր ակնկալիքները ջերմ ու քաջալերող վերաբերմունքով և ձգտում եք դասը դարձնել հաճելի և՛ արտաքուստ, և՛ ուսումնառությանը խթանող բարեհաճ մթնոլորտով:

Ներառական կրթությունը բոլորին մատչելի կրթությունն է: Այն չի սահմանափակվում դասարան/դպրոց մուտք ունենալով: Հաճախ որոշ երեխաների համար ուսումնառությանը խոչընդոտում է կիրառվող լեզուն: Ասվածը չհասկանալը ուսումնառության գործընթացից «դուրս մնալու» պատճառ է:
րբ դիմում եք երեխաներին, կարևոր է, որ օգտագործեք այնպիսի բառեր ու կառույցներ, որոնք հեշտ ըմբռնելի են նրանց, անկախ նրանց կարողությունների մակարդակից: Ինչևէ, բոլոր

առարկաներում կարիք կլինի օգտագործել տեխնիկական բառեր՝ բեկված՝ աշխարհագրության մեջ, օսմոս՝ գիտության մեջ, կիսորդ՝ մաթեմատիկայում, եթե թվարկենք մի քանիսը: Բոլոր այս տեխնիկական բառերը նորություն են աշակերտների համար, բառեր, որոնք նրանք պետք է հասկանան, սովորեն ու մտապահեն:

- Դասարանի պատերին պաստառներ նոր բառերով, որոնք պետք է սովորել ու կիրառել, և դրանք բացատրող պատկերներ
- Պատերին նոր բառերով ու սահմանումներով ցուցանակներ
- Վարժանքներ նոր բառերը կիրառելու համար, ինչպես օրինակ՝ խաղեր և հանելուկներ:

Ներառական մանկավարժության հետևյալ օգտակար հուշումները վերամշակված են « TESSA Inclusive Educational Toolkit: A guide to the education and training of teachers in inclusive education», 2016, http://www.tessafrica.net/ և Open, Learn, Create: An Introduction to Inclusive Education, www.open.edu:

4.1. Դասի պլանավորում

Դասի պլանավորումը ուսուցման-ուսումնառության գործընթացին բոլոր աշակերտների ներառումը նախապատրաստելու կարևոր գործողություն է: Դասի պլանավորման ընթացքում է, որ ուսուցիչները անհրաժեշտ հմտությունների, գիտելիքի և փորձառության՝ (know-how) բոլորի համար հասանելիության հիմքն են դնում: Պլանավորման միջոցով կբացվեն նաև համատեղ ուսումնառության և համատեղ դասարանային կյանքի հնարավորություններ:

Հաճախ պատահում է, որ առարկայի կամ թեմայի մի հատված բարդ է, քանի որ մի քանի բաղադրիչներից է կազմված, կամ որովհետև նոր գիտելիք ու հմտություններ են պահանջվում, բայց նաև որովհետև երեխաները նոր գիտելիքներն ու հմտությունները ձեռք են բերում տարբեր արագությամբ: Այդ իսկ պատճառով

անհրաժեշտ է նրանց ուսուցում-ուսումնառությունը բաժանել փոքր քայլերի, որոնք հստակ ձևակերպված և տրամաբանորեն կազմակերպված կլինեն: Սա հնարավորություն կտա բոլոր աշակերտներին ըստ էության ընկալել դասը:

Դասի նպատակները պարզելուց և բոլոր բաղկացուցիչները որոշելուց հետո ժամանակն է դիտարկել այն վարժանքները, որոնք լավագույնս կօգնեն աշակերտներին մասնակցել ուսումնառության գործընթացին և ներըմբռնել դասի բովանդակությունը: Վարժանքներն այն վարժություններն են, որոնք աշակերտները կանեն դասի ժամանակ և որոնք ակտիվ կերպով կաշխատեցնեն նրանց միտքը: Կարևոր է հիշել, որ յուրաքանչյուրն ունի սովորելու իր նախընտրած ձևը.

- Տեսողական հակումներով սովորողները լավագույնս ըմբռնում են տեղեկությունը տեսողականացնելով. պատկերը կամ գծագիրը ուսումնական տեսանկյունից ավելի նպատակահարմար են:
- Լսողությամբ սովորողները ավելի լավ սովորում են լսելով. նրանք կարող են շատ քիչ գրառումներ անել և կարող են մտապահել խոսակցություններն ու բանավոր ելույթները:
- Կինեսթետիկ սովորողները սովորում են շարժվելու, շոշափելու կամ մի բան անելու միջոցով. նրանք նախընտրում են կիրառական ուսումնառություն և գործնական առաջադրանքներ:

Դասարանում դուք ունեք սովորելու տարբեր ունակություններով աշակերտներ: Հնարավոր է նաև ունենաք հաշմանդամություն ունեցող աշակերտներ և պետք է այնպիսի վարժանքներ ընտրեք, որոնց միջոցով նրանք կկարողանան սովորել: Տեսողական խնդիրներ ունեցող աշակերտները ամենայն հավանականությամբ լավ կարձագանքեն լսողական վարժանքներին: Գերակտիվ աշակերտների մոտ լավ կստացվեն

կինեսթետիկ սովորողների համար նախատեսված վարժանքները, որոնք նրանց շարժվելու հնարավորություն կտան, իսկ տեսողական հակումներով սովորողների համար մշակված մեթոդները օգտակար կլինեն խուլ կամ լսողական խնդիրներ ունեցող աշակերտների համար: Այսպիսով, դասին պատրաստվելիս կարևոր է պլանավորել մի շարք վարժանքներ, որոնք կհամապատասխանեն տարբեր կարիքներ ունեցող սովորողներին՝ հաշվի առնելով սովորելու բազմազան ոճերը: Պետք է հաշվի առնեք ոչ միայն ձեր աշակերտների սովորելու ոճերը, այլ նաև պետք է ապահովեք, որ աշակերտների մոտ զարգանան մեծ թվով հմտություններ:

Ուսուցման նյութեր ընտրելիս ու պատրաստելիս, անկախ նրանից դրանք անհատականացված են, թե քաղված են դասարանից, դպրոցից կամ համայնքից, ուսուցիչները պետք է դրանք վերլուծեն տարբեր տեսանկյուններից: Եթե դասարանում կա հաշմանդամություն ունեցող մեկ կամ ավել երեխա, արդյո՞ք այս նյութերը բոլոր երեխաներին են սովորելու հնարավորություն տալիս: Արդյո՞ք բազմազգայարանային լինելու առումով կիրառելի են դրանք, որպեսզի բոլորը կարողանան օգուտ քաղել դրանցից: Եթե երեխաները կույր են, կկարողանա՞ն շոշափել, զգալ դրանց բույրը կամ ձայնով հաղորդակցվել: Եթե խուլ են, կկարողանա՞ն տեսողական միջոցներով ըմբռնել նյութը, զգալ բույրը կամ շոշափելով զգալ: Այս նյութերի ներգործությունը միայն հաշմանդամություն ունեցող երեխաների վրա չէ, որ տարածվում է, քանի որ, ինչպես տարբեր աղբյուրներ են հաղորդում, բոլորն օգտվում են նույն հնարավորություններից՝ տղաները սովորում են տնային տնտեսություն, աղջիկները բնագիտական փորձեր են անում, անվասայլակներով երեխաները բասկետբոլ են խաղում և այլն:

4.2. Տարբերակում

Տարբերակումը գործընթաց է, որն ընդգրկում է դասավանդման-ուսումնառության գործնթացների հարմարեցումը բոլոր սովորողների կարիքներին. «Կրթության վերջնանպատակը նույնն է բոլոր երեխաների համար. նույնն են նպատակները: Բայց այդ նպատակներին հասնելու համար երեխաների ունեցած աջակցության կարիքները տարբեր են» (Warnock Report, Dickinson and Wright, 1993, էջ 2): Հետևաբար, տարբերակումը գործընթաց է, որի միջոցով ուսուցիչները հասկանում են իրենց դասարանում ներառված աշակերտների անհատական կարիքները և համապատասխան կերպով պլանավորում դասը, որպեսզի բավարարեն այդ կարիքները՝ յուրաքանչյուր աշակերտին իր անհատական կարողություններին համապատասխան ուսումնառության հնարավորություններ տալով և հաշվի առնելով նրանց ընկալման, կարողությունների և արդեն ունեցած գիտելիքի տարբերությունները, ինչպես նաև այն, թե նրանք ինչի կարող են հասնել:

Այս գործընթացն ինքնաբերաբար տեղի չի ունենում. այն պետք է խելամտորեն պլանավորել: Տարբերակումը նշանակում է, որ ուսուցիչ(ներ)ը ինչ-որ բան պետք է անի(են) կանխամտածված կերպով: Սա կապված է յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքները բավարարելու համար դասը պլանավորելու հետ: Այն հիմնված է անհատական տարբերությունները հասկանալու, ինչպես նաև յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության արժեքը գնահատելու վրա:

Պետք է իմանալ, որ երեխաները տարբեր եղանակներով և տարբեր արագությամբ են ձեռք բերում նոր գիտելիք, հմտություններ և տարբեր արագությամբ են հասկանում: Դասը պետք է այնպես ներկայացվի, որպեսզի սովորողին հասանելի լինեն դասավանդման նոր կողմնակի ձևերն ու պարագաները,

որոնք ուղղված են հենց նրա իսկ առաջընթացը ապահովելուն: Դասի վերջնարդյունքները աշակերտի ակնառու արտադրանքներն են. քանի որ աշակերտները շատ տարբեր են, կտարբերվեն նաև ուսման արդյունքները արտահայտող նրանց վերջնարդյունքները: Վերջնարդյունքները չեն կարող տարբերակվել ուսուցիչների կողմից նախապես՝ դասը պլանավորելիս ու դասին պատրաստվելիս: Ըստ վերջնարդյունքների տարբերակումը չի կարող վերահսկվել կամ կանխատեսվել ուսուցիչների կողմից:

4.3. Օժանդակել ուսումնառությանը բացատրելու և ցուցադրելու միջոցով

Բացատրելը մեկ ուրիշին ինչ-որ բան հասկացնելն է: Ցուցադրելը առարկաների կամ այլ մեթոդների կիրառմամբ բացատրելու գործընթացը օժանդակելու միջոց է, երբ աշակերտին, ավելի լավ հասկանալու համար, ցույց են տալիս ինչ-որ բան: Բացատրելը նույնքան կարևոր է, որքան առարկային լավ տիրապետելը: Պարզապես տեղեկություն տալը բավարար չէ: Գործնականորեն ինչ-որ գաղափար կամ հղացք ցուցադրելը հաճախ օժանդակում է աշակերտների ուսումնառությանը: Դա կարելի է անել.

- Պատկերներ, գծագրեր, մոդելներ և առարկաներ կիրառելով՝ ցույց տալու համար, թե ինչ ի նկատի ունեք:
- Աշակերտներին խրախուսելով, որ իրենք ուսումնասիրեն այն, ինչը դուք բացատրում եք:
- Բոլոր աշակերտներին հնարավորություն տալով հստակ տեսնել այն, ինչը դուք բացատրում եք (օրինակ՝ ցուցադրելու միջոցով):
- Հարցնելով աշակերտների կարծիքներն իրենց փորձառության մասին:

Միշտ հիշեք, որ ձեր բացատրությունների և ցուցադրությունների ժամանակ աշակերտների շփոթմունքից խուսափելու համար պետք է նրանց լիովին ներգրավեք՝ համոզվելու համար, որ նրանք հասկանում են ձեր ասածն ու արածը: Դասարանում ապահովեք հետևյալը.

- Նրանց հարցեր տվեք՝ պարզելու համար, թե ինչ գիտեն ու ինչ են հասկանում;
- Պարզեք այն մոլորությունները, որոնք նրանց հետ են պահում և որոնք պետք է «մտքներից հանեն»;
- Փոքր խմբեր կազմեք՝ մտքեր փոխանակելու և ձեր բացատրած թեմայից հասկացածը իրար փոխանցելու համար;
- Խնդրեք, որ նրանք ձեզ և միմյանց բացատրեն ընթացիկ թեմայից իրենց հասկացածը;
- Պատրաստ եղեք, որ ձեր բացատրություններն ավելի պարզ դարձնելու համար տարբեր աշակերտների հետ տարբեր բառեր օգտագործեք:

4.4. Աշխատել մեծ դասարանների հետ

Ահա մի քանի գաղափար մեծ դասարաններում դասավանդելու համար.

- Նախապես պլանավորեք դասը և լավ պատրաստվեք. խնդիրները կարող են ավելի մեծ լինել մեծ դասարաններում, բայց դրանք կարելի է արդյունավետ կերպով հաղթահարել:
- Ընդարձակեք դասասենյակի ազատ տարածությունը՝ ավելորդ կահույքը հանելով, և օգտագործեք դասարանից դուրս տարածքը ուսումնառության և վարժանքների համար: Աշակերտներին խնդրեք, որ դասասենյակը հարմարավետ դարձնելու առաջարկներ անեն:
- Հնարավոր ամեն ինչ արեք ձեր աշակերտներին ճանաչելու համար: Ձեր աշակերտների հետ լավ հարաբերություններ

ունենալը ենթադրում է, որ նրանք ավելի ակտիվ կերպով կմասնակցեն դասերին:

- Աշակերտներին հնարավորություն տվեք անձամբ ներկայանալու դասարանին:
- Խոսելիս շրջեք դասասենյակում. սա գրավում է աշակերտներին և կարող է նվազեցնել ձեր և աշակերտների միջև ֆիզիկական և սոցիալական տարածությունը:
- Եղեք բնական և ցույց տվեք ձեր անհատականությունը դասարանում և դրանից դուրս, եղեք ինքներդ:
- Աշակերտներին տեղեկացրեք, որ դասից առաջ և հետո պատրաստ եք պատասխանել նրանց հարցերին:
- Մտապահեք հաճախ տրվող հարցերն ու տարածված սխալները: Օգտագործեք դրանք դասերը պատրաստելիս և օգնեք աշակերտներին խուսափել սխալներից:
- Ուշադիր եղեք դասարանի նկատմամբ: Եթե նկատում կամ զգում եք, որ ինչ-որ բան այն չէ, հարցրեք որևէ աշակերտի, թե ինչ է կատարվում: Աշակերտներին փոքր խմբերով հրավիրեք ձեզ հետ հանդիպման՝ քննարկելու դասարանի հետ կապված կարևոր հարցերը: Անհրաժեշտության դեպքում ներգրավեք աշակերտներին և վատ վարքի դեմ պայքարելու համար կարգապահական դրական մեթոդներ կիրառեք:
- Ստուգեք ձեր դասերի բովանդակությունը և ձեր աշակերտների գիտելիքներն ու հմտությունները՝ պարզելու համար, թե որ աշակերտներն ունեն ձեր առանձնահատուկ ուշադրության կարիքը:
- Իմացեք, որ աշակերտների կենտրոնացած ուշադրության սահմանափակություն ունեն. իդեալական է 15 րոպե դասախոսությունը, որին հաջորդում է որևէ վարժություն, իսկ հետո նորից դասախոսություն անհրաժեշտության դեպքում: Որոշեք, թե որ տեղեկությունը կարելի է փոխանցել

դասախոսությունից բացի այլ ձևերով և մշակեք այդ մեթոդները: Օրինակ՝ խմբային աշխատանքը, դերակատարման խաղերը (role play), աշակերտների՝ որևէ թեմայի շուրջ ելույթը (presentations), դասից դուրս ընթերցանությունը և դասի ժամանակ գրավոր աշխատանքը կարող են լինել դասարանային մշտական աշխատելաոճը փոփոխող և ուսումնառությունը խթանող գերազանց միջոցներ:

- Ձեր դասավանդումը կազմակերպելու համար մշակեք դասի հիմնական/պաշտոնական պլան. այս կերպ կարող եք տեսնել, թե ձեր աշակերտները յուրացնում են, թե ոչ ձեր սովորեցրածը: Սա նաև ձեզ հնարավորություն կտա մտածել ձեր հետագա անելիքների մասին և այն մասին, թե ինչպես բարելավեք դասավանդման ձեր մեթոդները: Ձեր ծրագրում նշեք, թե ինչ թեմա եք ներկայացնելու, նշեք ուսումնառության նպատակները, դասավանդման մեթոդները, դասաժամի դասավորվածությունը, հիմնական վարժանքները, ռեսուրսները և գնահատման մեթոդները:
- Ձեր աշակերտներին բացատրեք, թե ինչպես և ինչու եք դասավանդում հենց այդ ձևով: Օրինակ՝ «Այս պատճառով եմ դասի վերջում ձեզ թեստեր տալիս (ստուգելու համար, թե որքանով եք հասկացել) »:
- Օրվա թեմաների և ուսումնառության նպատակների պատկերային ցուցադրություն կազմակերպեք (օրինակ՝ ցուցակ գրատախտակին): Սա ձեզ և ձեր աշակերտների համար ավելի կհեշտացնի դասի ընթացքին հետևելը: Պլանավորեք հստակ սկիզբ դասի համար, նույն կերպ շարունակեք ու ավարտեք այն:
- Օգտագործեք «հուշումներ»՝ զարգացնելու համար աշակերտների հարց ու պատասխանի հմտությունները, և

հարցը տալուց հետո հաշվեք մինչև տասը՝ ժամանակ տալով աշակերտներին պատասխանելու հարցին:

- Հանձնարարեք այնպիսի առաջադրանքներ, որոնք իսկապես ստուգում են, թե արդյոք ձեր աշակերտները յուրացնում են ձեր դասավանդածը, թե ոչ: Կարող են արդյո՞ք բացատրել խնդրի լուծման ընթացքը և կարո՞ղ են սովորածը կիրառել առօրյա կյանքում: Բոլոր առաջադրանքների համար հստակ ու մանրամասն ցուցումներ տվեք:
- Մշակեք պորտֆոլիոյի համակարգ կամ այլ ձևեր՝ հետևելու համար աշակերտների առաջադիմությանը (և՛ հաջողությունները, և՛ զարգացման կարիք ունեցող պահերը), և հասկանալու համար, թե որ աշակերտները լրացուցիչ ուշադրության կարիք ունեն:
- Այնպիսի քննություններ կազմակերպեք, որոնք ցույց կտան, որ ձեր աշակերտները յուրացրել են և կարող են կիրառել ձեր դասավանդածը, այլ ոչ թե պարզապես հիշում են ձեր ասածը:
- Առաջադրանքների և քննությունների ձեր գնահատումը և կարծիքը արագ տվեք: Ներառեք աշակերտներին գնահատման գործընթացում՝ այն ավելի արագացնելու համար:
- Վերլուծեք ձեր դասավանդման մեթոդները: Ձեր գործընկերների և աշակերտների հետ քննարկեք, թե ինչպես կարող եք բարեփոխել ձեր դասավանդումը: Դասալսումների գնացեք ձեր գործընկերների մոտ, ովքեր նույնպես մեծ դասարաններում են դասավանդում և նյութեր ու գաղափարներ փոխանակեք: Ի վերջո, մեծ դասարաններում դասավանդելու մարտահրավերը դիտարկեք որպես հնարավորություն և ոչ թե խնդիր:

4.5. Ընդունել ու խրախուսել աշակերտների ինքնադրսևորումը

Քանի որ Ներառումը կենտրոնանում է այն եղանակների վրա, որոնց միջոցով բոլոր աշակերտները կարող են հավասար հնարավորություններ ունենալ դասարանում և հավասարապես արտահայտել իրենց զգացումներն ու տեսակետները, դուք՝ որպես ուսուցիչ, կարևոր դերակատարում ունեք այդ հարցում: Պետք է աջակցեք ձեր աշակերտներին զարգացնել այս հմտությունները: Կարևոր է, որ բոլոր աշակերտները դասարանում և կրթական համայնքում ներառված զգան՝ անկախ առողջական վիճակից, ընտանեկան պայմաններից կամ հաշմանդամության որևէ տեսակից: Պետք է ապահովեք, որ բոլոր աշակերտները անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերն ու զգացմունքները:

Հարցեր տալ՝ մտածելու կարողությունը զարգացնելու համար

Հարցեր տալու ունակությունը կարևոր հմտություն է ձեր՝ որպես ուսուցիչ կայանալու համար: Հարցերի միջոցով կարելի է պարզել, թե ինչ գիտեն ձեր աշակերտները և գնահատել նրանց առաջադիմությունը: Դրանք կարող են օգնել նաև ոգևորելու աշակերտներին՝ նրանց մտածելու հմտությունները զարգացնելու և պրպտուն միտք զարգացնելու հարցում: Հարցերը, որոնք կարող եք տալ, կարելի է բաժանել երկու մեծ խմբի.

- Ավելի մակերեսային ու նախնական հարցեր, որոնք ներառում են արդեն սովորած փաստերը և ձեռք բերած գիտելիքները մտաբերելը՝ հաճախ «այո կամ ոչ» հարցերի միջոցով;
- Ավելի բարձր մակարդակի ու խորացված հարցեր, որոնք աշակերտից պահանջում են արդեն սովորած տեղեկության միջոցով ձևակերպել պատասխան կամ տրամաբանորեն ստանալ պատասխան: Այս հարցերը հաճախ ազատ շարադրանք պահանջող են:

Երկու պարագայում էլ կա երկու խնդիր: Դրանք են՝

- Խրախուսել, որ աշակերտները պատասխանեն,
- Բարձրացնել նրանց պատասխանների որակը:

Շատ ուսուցիչներ ընդամենը մեկ վայրկյան են տալիս, այնուհետև հենց իրենք են պատասխանում հարցին կամ մեկ այլ հարց են տալիս: Սա աշակերտներին իրենց պատասխանը մտածելու ժամանակ չի թողնում: Նախքան ինչ-որ բան ասելը՝ երեքից վեց վայրկյան սպասելը, աշակերտներին հնարավորություն է տալիս մտածել իրենց պատասխանների շուրջ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սա դրական ազդեցություն ունի աշակերտների նվաճումների վրա: Հարց տալուց հետո սպասելը ավելացնում է՝

- Աշակերտների պատասխանների տևողությունը,
- Պատասխան ունեցող աշակերտների թիվը,
- Աշակերտների հարցերի հաճախականությունը,
- Ոչ փայլուն ընդունակություններ ունեցող աշակերտների պատասխանների քանակը,
- Աշակերտների միջև դրական շփումները:

Սխալ պատասխաններին արձագանքելու կերպը կորոշի, թե արդյո՞ք աշակերտները կշարունակեն պատասխանել ուսուցչի հարցերին: «Սխալ է», «Հիմար ես», կա՛մ նվաստացնելու կա՛մ պատժելու այլ ձևեր հաճախ աշակերտներին հետ են պահում ինքնակամ պատասխաններ տալուց, քանի որ վերջիններս վախենում են անհարմար իրավիճակում հայտնվելուց կամ ծաղրի առարկա դառնալուց: Փոխարենը, եթե պատասխաններից առանձնացնեք այն հատվածները, որոնք ճիշտ են և աշակերտներին խնդրեք մի փոքր էլ մտածել իրենց պատասխանի շուրջ, կարող եք ավելի ակտիվ մասնակցություն խրախուսել: Սա աշակերտներին օգնում է սովորել իրենց սխալներից, ինչը չի լինում բացասական վերաբերմունքի դեպքում: Այս

նախադասությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող եք քաջալերելով արձագանքել սխալ պատասխանին.
«Ճիշտ ասացիք, որ ամպերը առաջանում են գոլորշացման արդյունքում, բայց կարծում եմ մի փոքր էլ պետք է մտածենք այն մասին, թե ինչ ասացիք անձրևի հետ կապված: Ինչ-որ մեկը կարո՞ղ է օգնել մեզ»:

Ռազմավարության մեկ այլ ձև է բանավիճելը: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին լսել մյուսների տեսակետները և քննադատաբար մտածել: Երբ բանավեճի թեմաներ եք ընտրում, համոզված եղեք, որ այդ թեմաները կարևոր են ձեր աշակերտների համար, որպեսզի նրանք իսկապես ցանկություն ունենան արտահայտելու իրենց տեսակետները: Ապահովելու համար, որ բանավեճերը պատշաճ կերպով անցնեն, պետք է ձեր աշակերտներին ծանոթացնեք բանավեճի կանոններին և կարգին: (Վերցված և մշակված է http://www.triviumpursuit.com/speech_debate/what_is_debate.htm կայքից):

- Միջնորդության կամ առաջարկության բացատրությունը. խորհրդարանում կամ կարևոր հանձնաժողովներում, երբ անդամները որոշում են կայացնում, ինչ-որ մեկը կարող է բանավեճի միջնորդություն ներկայացնել: Միջնորդությունը հիմնավորումն է նրա, ինչը պետք է անել կամ քննարկել: Բանավեճը դիտարկում է փաստարկի բոլոր կողմերը: Օրինակ՝ եթե խորհրդարանի անդամը վեր է կենում և ասում. «Ես առաջարկում եմ վերացնել մահապատիժը», ապա այս գաղափարը պաշտոնապես քննարկվում է և որոշում է կայացվում, որի արդյունքում միայն բաղձալի նախաձեռնությունը կարող է գործի դրվել կամ ոչ: Աշակերտները կամ աջակցում են միջնորդությունը կամ հակադրվում դրան: Բանավեճը մրցույթ է, հավանաբար

խաղի նման, որի ժամանակ երկու կամ ավել բանավիճողներ ներկայացնում են իրենց փաստարկները՝ նպատակ ունենալով համոզել մեկը մյուսին:

- Ինչո՞ւ բանավեճ. բանավեճերին պատրաստվելիս և մասնակցելիս աշակերտները սովորում են գտնել և օգտագործել իրենց փաստարկները հիմնավորող տեղեկություն: Նրանք սովորում են նաև հստակ և համոզիչ կերպով ներկայացնել իրենց մտքերը: Բանավիճելու միջոցով նրանք սովորում են հասկանալ իրենց սեփական տեսակետից տարբերվող տեսակետներ, որովհետև բանավիճելու ընթացքում նրանք հնարավոր է ստիպված լինեն փաստարկել մի բան, որի հետ իրենք լիովին համաձայն չեն, բացի այդ՝ նրանք պետք է լավ ծանոթ լինեն հակառակ կողմի տեսակետին:
- Նախապատրաստում. լավ բանավիճողները լավ պատրաստված են լինում: Դասի ժամանակ ձեր կազմակերպած բանավեճը կարող է ոչ ֆորմալ լինել, բայց այն կարող է հանգեցնել նրան, որ ձեր աշակերտները լուրջ բանավեճերի մրցույթների մասնակցեն: Նախքան խոսքը ձևակերպելը բանավիճողները գրադարաններից, լրագրերից, ամսագրերից և մարդկանց հետ քննարկումներից թեմայի շուրջ հնարավորինս շատ տեղեկություններ են հավաքում: Նրանք բազմաթիվ կետեր են մտածում հօգուտ և ընդդեմ միջնորդության: Այլ կերպ ասած՝ ծանոթանում են ինչպես ընդդիմախոսի, այնպես էլ իրենց տեսակետներին: Նախապատրաստվում են բոլոր հնարավոր հարցերին, որոնք կարող են հնչել հակառակ կողմից, և բոլոր հնարավոր մարտահրավերներին, որոնց կարող են առերեսվել: Լավ բանավիճողները իրենց փաստարկները շատ համոզիչ են ձևակերպում: Նրանք լսում են ուրիշների բանավեճերը,

որպեսզի հմտանան բանավիճելու արվեստի մեջ: Նրանք միանում են բանավեճերի խմբակներին և բանավիճում են հնարավորինս շատ:

- Ընթացքը. 1) Երկու թիմ կա՝ յուրաքանչյուրը բաղկացած երկու կամ երեք անդամից: Մի թիմը (որը կողմ է) աջակցում է միջնորդությունը, իսկ մյուսը (որը դեմ է) հակադրվում է; 2) կա նախագահ, ով վերահսկում է ընթացքը; 3) ելույթներն ու խոսելուն հատկացվող ժամանակը հավասար բաժանված են երկու թիմերի միջև; 4) յուրաքանչյուր բանավիճող ներկայացնում է իր պատրաստած խոսքը՝ փաստարկելով իր դիրքորոշումը: Կողմերը խոսում են հերթով՝ սկսելով միջնորդությունն առաջարկողից (կողմ, դեմ, կողմ, դեմ): Յուրաքանչյուր բանավիճող խոսելու որոշակի ժամանակ ունի (օրինակ՝ երեք կամ հինգ րոպե); 5) բանավեճի մեջ կարելի է ընդգրկել նաև լսարանը, որտեղից ելույթ ունեցողները կանգնում են՝ միջնորդությանը կողմ կամ դեմ արտահայտվելու: Լսարանից յուրաքանչյուր ելույթ ունեցողի տրվում է որոշակի ժամանակ (օրինակ՝ մեկ կամ երեք րոպե); 6) այնուհետև յուրաքանչյուր թիմ կարող է «հակաճառել»՝ իր թիմի հետ հատկացված ժամանակում խորհրդակցելուց հետո: Սա նշանակում է, որ նրանք հնարավորություն ունեն վիճարկելու հակառակորդ թիմի առաջ քաշած կետերը: Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մեկ կամ ավել հակադարձող ելույթ: Առաջին հակադարձող ելույթը ընդդիմադիր կողմինն է, իսկ վերջինը՝ աջակցող թիմինը:
- Կարևոր կանոններ. 1) միջնորդությանը աջակցող թիմը չպետք է փոխի իր տեսակետը, նույնը վերաբերում է ընդդիմադիր թիմին, որը պետք է ամբողջությամբ ընդդիմանա միջնորդությանը (անկախ անհատական կարծիքներից) 2) եթե բանավիճողը պնդում է անում, պետք է կարողանա այդ

պնդումը հիմնավորող ապացույցներ կամ պատճառներ ներկայացնել (օրինակ՝ բանավեճի ժամանակ ներկայացված փաստերը պետք է ճշգրիտ լինեն, կամ բանախոսները հակադարձող խոսքի ժամանակ չեն կարող բանավեճի կարգի մասին նոր կետեր առաջ քաշել ու նոր տեղեկություն տալ); 3) բանավեճի մասնակիցները կարող են ընդհատել բանավիճողին՝ ձեռք բարձրացնելով և նշելով, որ «ըստ կարգի» ասելիք ունեն (սա նշանակում է, որ նրանք ցանկանում են մատնանշել, որ բանավեճի ինչ-որ մի կարգ խախտվում է, օրինակ՝ բանավիճողը թույլատրված ժամանակից երկար է խոսում կամ իր տեսակետը հիմնավորող ապացույց չունի); և 4) մասնակիցները նույնպես կարող են ձեռք բարձրացնել, եթե «տեղեկություն» են տալիս (հարց կամ ինչ-որ տեղեկություն, որ ուզում են առաջարկել):

- Վճիռը. բանավեճում հաղթող թիմը սովորաբար որոշվում է ըստ բանավիճելու որակի՝ դատավորի կամ դատավորների կողմից, կամ էլ քվեարկության միջոցով:

Առանձին (նմուշ) դեպքի հետազոտություն: Բանավեճ

Այն բանից հետո, երբ Գայանեն ու իր աշակերտները գրել էին «դուրս մնացած» լինելու մասին, դասարանն սկսեց քննարկել որոշ երեխաների դեպքերը, որոնք ինչ-ինչ պատճառներով դպրոցում չէին: Այդ երեխաներից ոմանք հաշմանդամ էին, ոմանք միայն մեկ ծնող ունեին, ոմանք որբ էին, վետերանների երեխաներ էին կամ դպրոց չէին գալիս, որովհետև աղքատ էին ու համազգեստ գնելու գումար չունեին: Գայանեն դասարանին ներկայացրեց բանավեճի միտքը և միջնորդություն ներկայացրեց. «Այս դասարանը կարծում է, որ դպրոցից «դուրս մնացած» բոլոր պատանիներին, որոնք մեկուսացել են ուսումնառության խոչընդոտների պատճառով, պետք է դպրոց բերել»: Նա աշակերտներին վեց հոգանոց խմբերի բաժանեց ու խմբերի կեսին խնդրեց քննարկել միջնորդությանը կողմ կետերը, իսկ մյուս կեսին՝ դեմ կետերը: Այնուհետև նրանց իրենց խոսքը պատրաստելու ընդհանուր շրջանակը տվեց: Յուրաքանչյուր խումբ պատրաստեց իր խոսքը՝ կողմ կամ դեմ, և ընտրեց, թե թիմից ով է խոսելու: Բանավեճը անցկացվեց հաջորդ օրը: Միջնորդությունն ընդունվեց (մեծամասնության քվեով) երեխաները սկսեցին կապ հաստատել դպրոցից «դուրս մնացած» երեխաների հետ և սկսեցին աշխատել իրենց ուսուցչի ու տնօրենի հետ, որպեսզի այդ երեխաներին վերադարձնեն դպրոց: Գայանեն հասկացավ, որ բանավեճը

Առանձին (նմուշ) դեպքի հետազոտություն: Նամակ գրել

Ներառման գաղափարը առաջին անգամ ներկայացնելուց մի քանի ամիս անց Գայանեի դասարանում երկու նոր աշակերտ կար: Մեկը խուլ էր, իսկ մյուսը մի թև ուներ: Գայանեն և իր աշակերտները աստիճանաբար սովորում էին նրանց ներառել իրենց դասարանում, հաղորդակցվել նրանց հետ և աջակցել նրանց այնպես, որ նրանք իրենց շատ «տարբեր» չզգային: Գայանեն երեխաներին առաջարկեց նախարարությանը նամակ գրել դպրոցում բոլոր աշակերտներին ներառելու կարևորության մասին:

Աշակերտներին այս միտքը դուր եկավ, ու նրանք սկսեցին համատեղ մտածել, թե ինչ կարող են ասել: Կազմեցին նամակի ուրվագիծը.

- Թեմա. Դպրոցները պետք է ջանքեր գործադրեն « դպրոցից դուրս մնացած » պատանիներին ներգրավելու համար,
- Պատճառները,
- Հավանական փաստարկներին հակազդելու միջոցներ,
- Մեր փորձառությունը,
- Հաջողություններ ու մարտահրավերներ,
- Կրկնել առաջին կետը:

Գայանեն աշակերտներն ուղղորդեց, թե ինչ արտահայտություններ կարող են օգտագործել փաստարկը ներկայացնելիս:

Գնահատող հարցեր.

- Արդյո՞ք նամակը սկսվում է իրավիճակը կամ փաստարկը հստակ ներկայացնելով:
- Արդյո՞ք ներկայացնում է պնդումը հիմնավորող փաստարկներ:
- Արդյո՞ք ներառում է տեղեկություն, որն այն կապում է

տեղական հանգամանքներին կամ իրադարձություններին ու մարդկային հանգամանքներին:

- Արդյո՞ք վերջին պարբերության մեջ իրավիճակը ևս մեկ անգամ ամփոփիչ կերպով ներկայացված է:
- Արդյո՞ք այն լավ է ձևակերպված, բաժանված է պարբերությունների՝ յուրաքանչյուրը հիմնական գաղափարով:
- Արդյո՞ք այն գրագետ է գրված, առանց քերականական, ուղղագրական կամ կետադրական սխալների:

Հնարավոր է նամակը ուղարկելուց առաջ այն խմբագրելու կարիք լինի, բայց փորձեք պահել աշակերտների բառերը: Մտածեք, թե ձեր աշակերտներն ինչ են սովորել՝ բանավեճի փաստարկներից նամակ կազմելով: Քննադատական մտածողության և խնդիրներ լուծելու ստեղծարար հմտությունների համար ժամանակ ու փորձառություն է պահանջվում, բայց ամենաանորոշ կողմը արժեքների և վերաբերմունքի վրա ազդեցություն ունենալն է:

4.6. Ուսումնառության համընդհանուր նախագիծ

Ուսումնառության համընդհանուր նախագիծը (Universal Design for Learning) ուսումնառության անհատական տարբերությունները բավարարելու նպատակով ճկուն ուսումնական միջավայրեր զարգացնելու կարևոր կրթական հիմք է: Ուսումնառության համընդհանուր նախագիծը հաշվի առնելու պարագայում ուսուցիչները ուսումնական միջավայրը կազմակերպում են ճկուն միջոցների, մեթոդների և նյութերի առումով, որոնք նրանց թույլ են տալիս անդրադառնալ յուրաքանչյուր աշակերտի կարիքներին: Քանի որ յուրաքանչյուր անհատի ուսումնառության ոճը տարբեր է, ուսումնառության

համընդհանուր նախագիծը առաջարկում է ուսումնական ծրագիր հետևյալ բաղադրիչներով.

- Նյութը ներկայացնելու բազմաթիվ միջոցներ՝ սովորողներին գիտելիքի ձեռքբերման ու տեղեկատվություն ստանալու տարբեր ուղիներ առաջարկելու համար;
- Արտահայտվելու բազմաթիվ միջոցներ՝ սովորողներին իրենց գիտելիքը ցույց տալու միջավայր ստեղծելու համար;
- Ներգրավելու բազմաթիվ միջոցներ՝ յուրաքանչյուր սովորողի հետաքրքրություններին մոտ մնալով, ուսումնառության ընթացքում նրանց քաջալերելու և խելամիտ կերպով նրանց մարտահրավերներին առերեսելու:

Չնայած ուսումնառության համընդհանուր նախագիծը ուղղված է որոշակի աշակերտների ընդհանուր դասարանում, փորձը ցույց է տալիս, որ այդ նախագծի (UDL) սկզբունքներից առանձնահատուկ կարիքներ ունեցող աշակերտներն են առավելագույն օգուտ քաղում: Ավելին, ուսումնառության համընդհանուր նախագծի սկզբունքները կարող են կիրառվել նոր, դասավանդման փորձարարական մոտեցումներ ներմուծելու համար, երբ աշակերտը դժվարանում է և հետ է մնում: Համընդհանուր բառը կարող է խնդրահարույց թվալ. կարող է թվալ, թե այն վերաբերում է դասարանում բոլոր աշակերտների ուսումնառության մեկ սխեմայի, բայց հակառակը՝ այն խրախուսում է բազմակողմանի և ճկուն ուսուցման/ուսումնառության մոտեցում, որը միաժամանակ բավարարում է բազմաթիվ կարիքներ: Այն բազմաչափ գործիք է՝ ուսումնառության մեջ ճանաչողական, ֆիզիկական, մտավոր և կազմակերպչական խոչընդոտները նվազեցնելու միջոցով գիտելիքի հասանելիության մակարդակը բարձրացնելու համար (Morin, 2019): Այն անդրադառնում է դասի պլանավորման չորս

հիմնական կողմերին՝ 1) մեթոդներ, 2) նյութեր, 3) դասավանդման նպատակներ և 4) գնահատում:

Ուսումնառության համընդհանուր նախագծի առաջին սկզբունքը ուսուցիչներին առաջարկում է օգտագործել «նյութը ներկայացնելու բազմաթիվ միջոցներ»: Սա հաշվի առնելով՝ հարցնում ենք. ինչպե՞ս եք ձեր աշակերտներին տալիս նյութի բովանդակությունը դասախոսությունների, ընթերցանության, քննարկումների, գրաֆիկական պատկերումների, տեսագրությունների և գործնական մոդելների միջոցով: Ուսուցիչները տեղեկություն տալու բազմաթիվ միջոցներ ունեն: Սրանցից յուրաքանչյուրը ինքնին արժեքավոր կարող է լինել, բայց մի քանիսի միաժամանակ կիրառումը կարող է ապահովել, որ նյութի բովանդակությունը հասանելի լինի բոլորին:

Օրինակ 1

Վարժություն. *Կարդացեք նյութը ներկայացնելու բազմաթիվ միջոցներ կիրառող ուսուցչի մասին այս օրինակը:*

Տասներորդ դասարանի աշխարհագրության ուսուցչուհի Անահիտ Այվազյանը նյութի բովանդակությունը ներկայացնում է ենթագրեր պարունակող տեսագրության միջոցով՝ այսպիսով անդրադառնալով նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող աշակերտներին: Ենթագրեր ավելացնելը բարձրացնում է նյութի մատչելիությունը տարբեր աշակերտների համար՝ լսողական խանգարումներ ունեցողների, նոր լեզու սովորողների, կարդալու հմտությունները կամ ուղղագրական իմացությունը զարգացնելու վրա աշխատող աշակերտների համար: Ներառական դասարաններում կարևոր է տեղեկություն տալու և աշակերտներին ներգրավելու համար տարբեր հաղորդամիջոցներ (ու տարբեր հարթակներ) կիրառելը:

Այժմ մտովի ընտրեք ձեր դասերից մեկը և մտածեք, թե ինչ այլընտրանքային միջոցներով կարող եք նույն նյութը ներկայացնել այնպես, որ անդրադառնաք ուսումնառության տարբեր ոճեր և տարբեր կարիքներ ունեցող աշակերտներին: Այնուհետև փոքր խմբում ներկայացրեք ձեր օրինակները:

Օրինակ 2

Ուսումնառության համընդհանուր նախագծի երկրորդ սկզբունքը ուսուցիչներին կոչ է անում կիրառել «գործելու ու արտահայտվելու բազմաթիվ միջոցներ», թե ինչպես են աշակերտները ցույց տալիս, որ հասկացել են դասը: Որոշ աշակերտներ՝ որպես արտահայտվելու լավագույն միջոց, նախընտրում են գրել, մինչդեռ մյուսների մոտ ավելի լավ է ստացվում բանավոր ներկայացումը, դերակատարման կամ արվեստի գործ ստեղծելու միջոցով արտահայտվելը: Երբ աշակերտներին իրենց գիտելիքը տարբեր միջոցներով արտահայտելու հնարավորություն ենք տալիս, մենք հասկանում ենք, թե նրանց համար անհատապես ինչն է ավելի արդյունավետ և հայտնաբերում ենք նախկինում չարտահայտված ուժեղ կողմերը:

Վարժություն: *Կարդացեք նյութը ներկայացնելու բազմաթիվ միջոցներ կիրառող ուսուցչի մասին այս օրինակը:*

Ուսումնառության համընդհանուր նախագծի մասին իմանալուց հետո 9-րդ դասարանի կենսաբանության ուսուցչուհի Սյուզաննա Կարապետյանը որոշեց աշակերտներին իրենց նախագծերը ներկայացնելու ավելի շատ տարբերակներ և ընտրության հնարավորություն տալ: Այդպիսով նա թուլացրեց լարվածությունը և տեսավ, որ բարձր առաջադիմություն

ունեցող աշակերտների թիվը մեծանում է:

Մտաբերեք նույն դասը, որի մասին մտածեցիք նախորդ վարժության ժամանակ: Այժմ մտածեք մի քանի գործողություն, որոնք հաշվի կառնեն ուսումնառության տարբեր ոճեր ունեցող ձեր աշակերտների՝ իմացածն արտահայտելու տարբեր կարիքները: Այնուհետև փոքր խմբում ներկայացրեք ձեր օրինակները:

Օրինակ 3

Ուսումնառության համընդհանուր նախագծի երրորդ սկզբունքը ուսուցիչներին խրախուսում է կիրառել ներգրավելու բազմաթիվ միջոցներ, ինչի համար հնարավոր է անհրաժեշտ լինեն ստեղծարար մոտեցումներ՝ ստեղծելու համար իսկական կապ աշակերտների ու դասի միջև:

Վարժություն: Կարդացեք դասը իր աշակերտների փորձառության հետ կապել փորձող ուսուցչի մասին հետևյալ օրինակը:

Չնայած բազմաթիվ նյութեր, հաղորդամիջոցներ ու հարթակներ (թատրոն, արվեստ, տեսագրություն, համակարգչային ծրագրեր) կարող են գրավել աշակերտներին, դասերը աշակերտների նախասիրությունների հետ կապելը նույնպես կարևոր է նրանց ներգրավվածությունը խթանելու առումով: Ավագ դպրոցի գրականության ուսուցչուհի Արմինե Վարդանյանն ընդունում է, որ շատ ժամանակ է տրամադրում աշակերտներին իրենց ընտանիքների, հանգստյան օրերի և հետաքրքրությունների մասին հարցնելու համար: «Սա ոչ միայն մեր միջև հարաբերություններ է ձևավորում, այլ նաև ինձ՝ դասի բովանդակությունը աշակերտների հետաքրքրությունների հետ

կապելու հիանալի գաղափարներ է տալիս: Դա երբեք ժամանակի վատնում չէ, և աշակերտները սիրում են իմ դասին հաճախելը»: Ժամանակ հատկացրեք աշակերտների հետ իրենց կյանքի փորձից խոսելու, հնարավորության դեպքում ընտրության հնարավորություններ ու ճկունություն տվեք:

Նորից մտաբերեք նույն դասը: Տարբեր միջոցներով ձեր աշակերտներին ներգրավելու մի քանի ռազմավարություն առաջարկեք: Այնուհետև փոքր խմբում ներկայացրեք ձեր օրինակները:

Օրինակ 4

Անկախ նրանից, թե դասարանը որքան միատարր կամ բազմազան կարող է լինել, յուրաքանչյուր աշակերտ օգուտ է քաղում, երբ ներառումն ու բազմազանությունն առաջնային են: Երբ ուսումնական ծրագրի մեջ ներառված են հասարակության տարբեր շերտերից բազմաթիվ կերպարներ, լեզուներ և մշակույթներ, աշակերտները սովորում են հասկանալ, կարեկցել ու ընդունել: Երբ տարբեր մշակութային փորձառություններ ունեցող աշակերտներ դասի նյութերի ու դասավանդման մեջ տեսնում են իրենք իրենց դրական կերպով ներկայացված, կապվածության զգացողություն է առաջանում: Ի վերջո նրանք տեսնում են, որ իրենց ուսուցիչը գնահատում է տարբեր մշակույթների պատկանող և տարբեր ծագում ունեցող աշակերտներին:

Վարժություն: Կարդացեք հետևյալը:

Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի շրջանավարտ Թամարա Բաղդասարյանը խոսում է իր դպրոցի գրադարանավարի հետ՝ դպրոցի և դասարանների գրադարաններին հաշմանդամության և բազմազանության

վերաբերյալ ավելի շատ գրքեր տրամադրելու մասին: «Հաշմանդամության մասին խոսելն ու հաշմանդամությունը որպես բազմազանություն դիտարկելը կօգնի, որ մեր դպրոցի համայնքն ու հուսանք նաև մյուսները հասկանան, որ բազմազանությունը «նորմալ» է»:

Ձեր դասի տեսանկյունից մտածեք օրինակներ, թե ինչպես կարող եք անդրադառնալ բազմազանությանը: Ձեր գաղափարները ներկայացրեք ձեր գործընկեր(ներ)ին:

Կողմնակալության, անհավասարության, բախումների, հասարակական անարդարության և նմանատիպ խնդիրների դեմ պայքարելը կարող է դժվար լինել ուսուցիչների համար: Այլ ուսուցիչների հետ խնդիրների լուծման ուղիները քննարկել-փնտրելը կարող է օգնել մեր հանրույթների համատեքստին համապատասխան լուծումներ գտնել: Երբ այս խնդիրները մտածվում ու պատշաճ կերպով լուծվում են և ուսուցանվում, աշակերտների մոտ զարգանում են բազմազանությամբ լի աշխարհում հաջողության հասնելու ողջ կյանքում պետքական հմտություններ: Աշակերտների մոտ զարգանում են քննադատական մտածողության կարևոր հմտություններ, որոնք օգնում են պայքարել նախապաշարմունքների դեմ և ստեղծում կարեկցելու ունակություն:

Մտագրոհ (brainstorming), խմբային աշխատանք և մտքերի քարտեզագրում (mind mapping) դասարանում:

Մտագրոհը խմբային աշխատանք է, որի արդյունքում որոշակի խնդրի կամ հարցի շուրջ ծնվում են հնարավորինս շատ գաղափարներ, այնուհետև որոշվում է, թե որ գաղափարն է լավագույն լուծում առաջարկում: Այն իր մեջ ներառում է խմբի անդամների՝ իրենց առջև ծառացած հարցը կամ խնդիրը լուծելու նոր գաղափարներ գտնելու համար ստեղծարար կերպով մտածելը: Մտագրոհը օգնում է աշակերտներին՝

- Հասկանալ նոր թեման,
- Խնդիրը լուծելու տարբեր ուղիներ գտնել,
- Ոգևորվել նոր գաղափարով,
- Ներգրավված զգալ խմբային աշխատանքում, որը համաձայնեցման է հանգեցնում:

Մինչ աշխատանքը սկսելը պետք է հստակ կերպով հասկանաք խնդիրը կամ թեման: Կարող եք վերցնել մի պարզ բառ, ինչպես օրինակ՝ «էներգիա» և քննարկել, թե դա ինչ նշանակություն ունի խմբի համար, կամ՝ որևէ թեմա, օրինակ՝ «Ինչպե՞ս զարգացնենք մեր դպրոցի միջավայրը»: Հաջող մտագրոհ անելու համար կարևոր է ունենալ որևէ բառ, հարց կամ խնդիր, որի շուրջ խումբը կարող է մտածել: Մեծ դասարաններում հարցերը կարող են տարբերվել տարբեր խմբերի համար: Խմբերը պետք է հնարավորինս բազմազան լինեն սեռի և կարողությունների տեսանկյունից:

Պետք է վերցնել մեծ թուղթ, որը 6-8 աշակերտից կազմված խմբի բոլոր անդամների համար լավ տեսանելի լինի: Խմբի անդամների մտքերը պետք է գրի առնել ողջ աշխատանքի ընթացքում, որպեսզի բոլորը իմանան, թե ինչ է ասվել, և հավելումներ անեն: Յուրաքանչյուր միտք, որքան էլ անսովոր լինի, պետք է գրի առնել: Աշակերտներին պետք է պարզ լինեն հետևյալ կանոնները՝

- Խմբի բոլոր անդամները պետք է ընդգրկված լինեն,
- Ոչ ոք չպետք է քննադատի մեկ ուրիշի գաղափարներն ու առաջարկները,
- Անսովոր և նորարարական գաղափարները ողջունելի են,
- Անհրաժեշտ են բազմաթիվ իրարից տարբերվող գաղափարներ,
- Բոլորը պետք է արագ աշխատեն: Մտագրոհը արագ ու բուռն գործելաեղանակ է:

Ուսուցչի սկզբնական դերը քննարկումը, ներգրավումը և գաղափարները գրի առնելը խթանելն է: Երբ աշակերտները փորձում են գաղափարներ գտնել, կամ երբ ժամանակն ավարտվել է, խմբին (կամ խմբերին) հանձնարարեք, որ ընտրեն իրենց առաջարկած լավագույն երեք գաղափարները և բացատրեն, թե ինչու են դրանք ընտրել: Եզրափակելով՝

- Ամփոփեք դասարանի աշխատանքը և մատնանշեք, թե ինչն են լավ արել;
- Աշակերտներին հարցրեք, թե նրանց համար ինչն էր օգտակար այդ մտագրոհում և թե ինչ նոր բան սովորեցին:

Խմբային աշխատանք

Խմբային աշխատանքը կարող է շատ արդյունավետ միջոց լինել աշակերտներին սովորել մղելու՝ խրախուսելով նրանց մտածել, հաղորդակցվել, մտքեր ու գաղափարներ փոխանակել և որոշումներ կայացնել: Խմբերում աշակերտները կարող են սովորեցնել մեկը մյուսին ու իրարից սովորել այն եղանակներով, որոնք հանգեցնում են ուսումնառության արդյունավետ ու ակտիվ միջոցի: Խմբային աշխատանքը կարող է կիրառվել.

- Դասի կամ թեմայի սկզբում՝ պարզելու համար, թե աշակերտներն ինչ գիտեն;
- Դասի ընթացքում՝ հասկանալուն օգնելու կամ թեմայի մասին կարծիքներ ու տեսակետներ հայտնելու համար;
- Դասի վերջում՝ օգնելու աշակերտներին մտածել իրենց սովորածի շուրջ, պարզել, թե ինչ գիտեն և թե դեռ ինչ պետք է հասկանան:

Խմբային աշխատանք սկսելուց առաջ հստակ իմացեք, թե ինչ եք ուզում անել դրանով: Այն պետք է հստակ նպատակ ունենա: Օրինակ՝ «Խմբային աշխատանքի ավարտին կկարողանանք

նկարագրել, թե ինչպես է առաջանում անձրևը և թե ինչպես է այն ազդում մեր տեղական լանդշաֆտի վրա»:

Խմբային աշխատանք կազմակերպելու քայլերը.

- Դասարանը բաժանեք կառավարելի խմբերի՝ կախված աշակերտների թվից, բայց ոչ շատ մեծ խմբերի, որպեսզի յուրաքանչյուրն իր ներդրումն ունենա: Հնարավոր է կարիք լինի տեղաշարժել կահույքը կամ որոշ խմբերի դրսում նստեցնել:
- Յուրաքանչյուրին առաջադրանք տվեք: Դա կարող է լինել՝ սղագրող, կազմակերպիչ, սատանայի փաստաբան, խաղաղապահ, խոսնակ, բանագնաց:
- Որոշեք, թե ինչ սկզբունքով եք աշակերտներին խմբերի բաժանում: Կարող եք ներառել ընկերներին նույն խմբում, նման անհատներին ընդգրկել նույն խմբում, իրարից տարբեր անհատներին՝ միասին, նույն կարողություններ ունեցողներին, խառը կարողություններ ունեցողներին կամ ընդհանրապես ոչ մի սկզբունք չկիրառել: Ո՞ր տարբերակն ամենաարդյունավետը կլինի ձեր ծրագրած իրավիճակում:
- Բավարար ժամանակ նախատեսեք աշակերտներին եզրակացության գալու, ինչպես նաև յուրաքանչյուր խմբային աշխատանքի վերջում, և ձեզ՝ եզրակացությունները ամփոփելու համար:

Խմբային աշխատանքին ծանոթացնելը.

- Երբ խմբերն արդեն ձևավորված են, բացատրեք, որ որոշում կայացնելու կամ որևէ խնդիր լուծելու համար միասին աշխատելը նրանց ուսումնառության և անհատական զարգացման կարևոր մասն է: Ներկայացրեք, թե ինչ եք ակնկալում նրանցից վարքագծի տեսանկյունից (օրինակ՝ հարգանք մեկը մյուսի հանդեպ, լսելու կարողություն,

որոշումների կայացում) և տվեք նրանց անհատական դերեր (օրինակ՝ խոսնակ, սղագրող):

- Հստակ բացատրեք առաջադրանքը, ինչպես նաև գրեք այն գրատախտակին: Աշակերտներին ներկայացրեք իրենց անելիքները և թե ինչպիսին պետք է լինի նրանց խմբային աշխատանքի վերջնարդյունքը: Սա շատ կարևոր է, քանի որ եթե նրանք չհասկանան ինչ պիտի անեն, աշխատանքն սկիզբից ի վեր վատ ընթացք կստանա: Նախքան սկսելը աշակերտներին թույլ տվեք հարցեր տալ, և ձեր պատասխաններով օգնեք նրանց:

Խմբային աշխատանք ղեկավարելը.

- Ստուգեք խմբերի աշխատանքի ընթացքը: Ջերծ մնացեք ժամանակից շուտ միջամտելու գայթակղությունից: Թողեք, որ մի ընթացք նրանք ջանք թափեն: Եթե չափազանց շուտ հուշումներ տաք, նրանք կսկսեն հույսը ավելի շատ ձեր և ոչ թե իրենց վրա դնել: Անհրաժեշտության դեպքում պարզաբանեք ցուցումները: Կարևոր է հիշել, որ սովորելու համար պետք է դժվարությունների ու անորոշությունների միջով անցնել: Ձեր աշակերտներից մեծ ակնկալիքներ ունեցեք, խմբերին մոտենալիս ասեք, թե որքան վստահ եք նրանց ուժերին:

Խմբային աշխատանքը եզրափակելը.

- Խմբային աշխատանքն ավարտեք ամբողջ դասարանով. օրինակ՝ յուրաքանչյուր խմբից վերցրեք մեկ գաղափար մինչև կհասնեք ձեր սկզբնական նպատակին, կամ յուրաքանչյուր խմբին հարցրեք, թե որն էր նրանց սովորած ամենահետաքրքիր բանը: Փորձեք վերջին փուլն ավելի շատ

մտքերի փոխանակման վերածել, այլ ոչ թե կենտրոնացեք նրանց բացթողումների վրա:

- Ամփոփեք խմբերի աշխատանքն այնպես, որ նրանք հպարտանան իրենց արածով: Նաև խնդրեք նրանց գնահատել իրենց աշխատանքը խմբում: Սա ձեզ պատկերացում կտա, թե ինչպես են նրանք վերաբերվում խմբային աշխատանքին:
- Ի վերջո, մտածեք, թե ձեզ որքանով հաջողվեց ղեկավարել խմբային աշխատանքը: Առանձնացրեք հաջողված հատվածները և ձեզ համար նշեք այն մասերը, որտեղ կարող էիք այլ կերպ վարվել՝ խմբերի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար: Այս տվյալներն օգտագործեք հետագայում ձեր մեթոդները զարգացնելու համար, արձանագրեք ձեր և ձեր աշակերտների առաջընթացը:

Մտքերի քարտեզագրում (mind mapping)

Սա հիմնական թեմայի առանցքային կողմերը ներկայացնելու եղանակ է: Մտքերի քարտեզագրումը տեսողական գործիք է, որն օգնում է աշակերտներին դասակարգել ու կազմակերպել հղացքի կամ թեմայի շուրջ իրենց մտքերը: Մտքերի քարտեզագրումը մեծ քանակությամբ տեղեկությունը խտացնում է հեշտ հասկանալի գծապատկերի մեջ, որը ցույց է տալիս թեմայի տարբեր կողմերի միջև կապն ու հարաբերությունը:

Երբ կիրառել մտքերի քարտեզագրումը.

- Մտքերի քարտեզագրումը օգտակար է ստեղծարար մտածողությունը քաջալերելու համար, քանի որ քարտեզագրման հիմքում ազատ մտածելն է:
- Երբ փորձում եք խնդիրը լուծել, մտքերի քարտեզագրումը օգնում է ընգծել խնդրի տարբեր կողմերն ու այն, թե դրանք ինչպես են առնչված միմյանց:

- Մտքերի քարտեզագրումը կարող է օգնել արագ և կազմակերպված կերպով վերանայել դասարանի հետ նախորդ դասի աշխատանքը:
- Կիրառեք մտքերի քարտեզագրումը, երբ ցանկանում եք դասարանում խրախուսել քննարկումը, բազմազանությունը, փորձարկումները և մտածելը:

Ինչպես կազմել մտքերի քարտեզ.

- Թղթի մեջտեղում քառակուսի նկարեք: Դրա մեջ գրեք հիմնական թեման կամ գաղափարը, որ պատրաստվում եք ներկայացնել:
- Քառակուսուց ճառագայթներ տարեք, որոնց վրա գրված են հիմնական թեմայի հետ կապված ենթաթեմաները:
- Ստեղծագործաբար մոտեցեք հիմնական քարտեզը ստեղծելուն՝ ենթաթեմաների շուրջ նոր մտքեր ավելացնելով:
- Նախքան աշակերտների հետ փորձելը ինքներդ գծեք ձեր մտքերի քարտեզը: Այն կարող եք օգտագործել որպես նմուշ:

Հաջորդ էջում ներկայացված է մտքերի քարտեզ, որն ուսուցիչների հնչեցրած ողջ մտքերն են «այն ամենն ինչ գիտենք ջրի մասին» թեմայի շուրջ աշխատաժողովին:


WATER
Sources
UNDERGROUND
wells
springs
fountains
boreholes
iqula ↔ ichibi
AIR
clouds
mist
fog
rain
hail
snow
spray
steam
SURFACE
Dams
Resevoirs
Canals
tanks
streams
What water is like
water vapour
usually a liquid
ice
blue
green
brown
no colour
H2O
feels wet
amanzi
No smell
Cultural beliefs
sea water for health
baptism
intsemi
sayings
'one hand washes the other'
Fetch water late in morning
after circumcision wash in the river.
ancestors + rivers
sangomas exams at the river
Uses
Pleasure
swimming
boats
nature
Home
brew
boil
cooking
steam
stew
washing
clothes
bodies
toilet flushing
cool
garden
drink
Plants
to live
to make food
Animals
to drink
to live in
frogs
fish
crocodile
to wash
to find food in
Birds
Solvent
Factories and Industry
washing
moving
mixing
cooling
cleaning
transport
Building
cement
Put out fire
To Make Electricity
Hydro electric power
STEAM
Dangers
POLLUTANTS
paper
plastic
fertilisers
factories
acid rain
dust
carries disease
drought
Drowning
with electricity
floods
destroys
erosion
potholes

4.7. Զուգահեռ համատեղ դասավանդումը որպես ուսումնառության համընդհանուր նախագծի (UDL) մոդել

Ուսումնառության համատեղ նախագծի մեկ այլ ռազմավարություն է համատեղ դասավանդման զուգահեռ տեսակը (Keeley, 2015). այս դեպքում ուսուցիչներն աշխատում են զույգերով՝ ունենալով իրենց դասարանի համար լիարժեք հաշվետվողականություն, իսկ առարկայի ծրագրման, դասավանդման և աշակերտներին գնահատելու համար՝ հավասար պատասխանատվություն: Համատեղ դասավանդումը հաճախ ենթադրում է հանրակրթության և հատուկ կրթության ուսուցիչների զույգերով աշխատելը՝ ավելի ներառական միջավայր ստեղծելու համար (Stein, 2016):

Աշակերտները, ըստ կարողությունների, բաժանվում են խմբերի, նրանց տվյալ թեմայի վերաբերյալ տրվում է նույն հարցը: Այդպիսով, յուրաքանչյուր աշակերտ իր կարողությունների չափով ներդրում է ունենում խմբի գործունեության մեջ: Աշակերտների կարողությունները նկատի առնելով՝ ուսուցիչները տարբեր աշակերտների միջև փոխազդեցությունը խթանելու այլընտրանքային ուղիներ են մտածում, օրինակ՝ստեղծում են մեծ ու փոքր խմբեր և տարբեր առաջադրանքներ են տալիս (մի խումբը գրավոր աշխատանք է կատարում, մյուսները լսում են իրենց դասընկերներին, հետո վերապատմում լսածը): Այսպիսով, չնայած խմբերի քննարկման թեման նույնն է, յուրաքանչյուր աշակերտ/խումբ արձագանքում է թեմային՝ ըստ իր գիտելիքների ու կարողությունների: Դասավանդման այս մոդելի դեպքում ուսուցիչը, որը հաշվի է առնում տեղեկությունը ներկայացնելու բազմազան միջոցները և այն, թե ինչպես են աշակերտները համադրում ու ներկայացնում իրենց սովորածը, դասարանում ներառական միջավայր է ստեղծում:

Մելիսաա Ֆերրին (Ferry, 2013) տարբեր կարողություններ ունեցող աշակերտների համատեղ դասավանդման որոշ առավելություններ է նկարագրում, ինչպես օրինակ՝ հանրակրթական ուսումնական ծրագրերին ու առհասարակ հանրակրթական միջավայրին հասանելիության ձեռք բերում. մասնագիտացված հատուկ դասավանդում ստանալու հնարավորություն. ինտենսիվ, անհատականացված ուսումնառություն. դասավանդման ավելի մեծ ինտենսիվություն և տարբերակված դասավանդում. ընդհանուրից առանձնացված գործող ծրագրերի ստեղծած բացասական լարման նվազում. դասընկերների ու խմբի հետ ավելի մեծ կապվածություն. գիտելիքների ու հմտությունների ավելի ընդգրկուն շրջանակ ունեցող ուսուցիչներ:

Քուքը և Ֆրենդը (Cook and Friend (1995)) առաջարկում են համատեղ դասավանդման հետևյալ մոդելները, որոնք խթանում են նեառական գործելակերպը դպրոցներում՝ Մեկը դասավանդում է, մյուսը դիտարկում է դասը. մի ուսուցիչը դասավանդում է, իսկ մյուսը հետևում է աշակերտների ուսումնառությանը և գնահատում, թե ինչպես են նրանք յուրացնում դասավանդվող նյութերը ու ինչպես է գործում կրթական միջավայրը: Մեկը դասավանդում է, մյուսն աջակցում է. մի ուսուցիչը դասավանդում է, իսկ մյուսը շրջում է դասարանում և օգնում այն աշակերտներին, որոնք դժվարանում են կամ լրացուցիչ օգնության կարիք ունեն:
Զուգահեռ դասավանդում. դասարանը բաժանվում է երկու մասի, և երկու ուսուցիչները միաժամանակ ներկայացնում են նույն նյութը:
Հանգրվանային դասավանդում (station teaching). երկու ուսուցիչն էլ ակտիվորեն դասավանդում են, իսկ աշակերտները տեղափոխվում են մի հանգրվանից մյուսը՝ սերտելով նոր նյութը:
Այլընտրանքային ուսուցում. ուսուցիչներից մեկը վերցնում է ուսանողների մի փոքր խումբ և մեծ խմբին դասավանդվող նյութից

ու դասավանդման մեթոդներից տարբեր նյութերով ու մեթոդներով ուսուցում իրականացնում:

Թիմային դասավանդում. երկու ուսուցիչները ուսուցանում են նույն նյութը ներկա գտնվող բոլոր աշակերտներին:

Նշում: Համատեղ դասավանդման հղացքի վերաբերյալ անգլերենով հավելյալ տեղեկություններ ու աղբյուրներ կարող եք գտնել հետևյալ կայքերում.

Two Teachers in the Room blog by Elizabeth Stein
Need to Know: Successful Co-Teaching, by Wendy Murawski. Ph.D.
Collaborative Team Teaching: What You Need to Know, by Amanda Morin
6 Steps to Successful Co-Teaching, by Natalie Marston
Collaborative Team Teaching: Challenges and Rewards , by Marisha Kaplan

4.8. Ներառական դասապլաններ

Վարժություն: Կարդացեք ստորև ներկայացված դասապլանների նմուշները: Քննարկեք փոքր խմբերով:

Համընդհանուր ուսումնառության ի՞նչ առանձնահատուկ սկզբունքներ են կիրառվել դասապլաններում: Ի՞նչ առանձնահատուկ գաղափարներ կամ մեթոդներ կարող են կիրառվել ձեր դասերին:

Դասի նմուշ

Դասի նմուշ

Այս դասի թեման է կրթություն հանուն կայուն զարգացման (education for sustainable development, ESD): Ի՞նչ է դա:

Հանուն կայուն զարգացման կրթությունը մարդկանց հնարավորություն է տալիս զարգացնել գիտելիքներ, արժեքներ ու հմտություններ, որոնք օգնում են մասնակցություն ունենալ այն որոշումների կայացմանը, որոնք վերաբերում են անհատապես և հավաքական կերպով ինչ-որ բան անելուն՝ թե՛ տեղական, թե՛ համաշխարհային մակարդակներում, որոշումներ, որոնք կբարելավեն կյանքի որակը այսօր՝ առանց վնասելու մոլորակը ապագայում: (Հանուն կայուն զարգացման կրթության հանձնաժողով, սեպտեմբերի 14, 1998)

Կայուն զարգացումը քաղաքացի լինելու անքակտելի մասն է, որը աշակերտներին հնարավորություն կտա՝

- Հասկանալ, որ չնայած ֆիզիկական, նյութական և մշակութային տարբերություններին, կան շատ բաներ, որ մեզ կապում են աշխարհի հետ:
- Մտածել քննադատաբար և պայքարել անարդարության ու անհավասարությունների դեմ:
- Ընդունել, հարգել ու արժևորել բազմազանությունը:
- Զարգացնել շրջակա միջավայրի խնդիրների և կայուն զարգացման մտահոգություն և դրանց
- հանդեպ հանձնառություն:
- Պատրաստակամ լինել գործելու՝ աշխարհին ավելի արդար ու կայուն վայր դարձնելու
- ուղղությամբ:
- Պատասխանատվություն կրել իրենց իսկ գործողությունների համար:

Ե՛վ քաղաքացի լինելու հանձնառությունը, և՛ հանուն կայուն զարգացման կրթությունը (ESD) հիանալի հնարավորություններ են տալիս ակտիվ, ուսանողակենտրոն ուսումնառության համար, ինչի արդյունքում ուսանողները գիտակցում են աշխարհի քաղաքացի լինելու իրենց դերը: Ուսումնառության այսպիսի

մոտեցումն ընդգրկում է դասեր, որոնց ժամանակ ուսումնասիրվում են հեռավոր տարածաշրջանների և շրջակա միջավայրի վերաբերյալ խնդիրներ: Տեղական, այնուհետև հեռավոր համայնքների ուսումնասիրությունը աշակերտներին կօգնի ընդլայնել իրենց պատկերացումները տարբեր հասարակությունների ու մշակույթների մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես կարելի է նույն խնդիրը լուծել տարբեր միջոցներով. այն նաև նոր գաղափարներ կներշնչի: Հանուն կայուն զարգացման կրթությունը (ESD) նաև ավելի ինքնաբավ լինելու միջոցներ է ուսումնասիրում: Այն ենթադրում է լավագույնս օգտվել մեզ շրջապատող ռեսուրսներից, բայց լիովին չսպառել դրանք: Սպառածի համալրման կամ վերընձյուղման ուղիների մասին մտածելը ապահովում է շարունակականություն: Դա նշանակում է օգտագործել միայն այն, ինչի կարիքը ունես: Տեղական ռեսուրսներն անսահմանափակ չեն, եթե չփորձենք դրանք ավելի խելամիտ կերպով օգտագործել ու հնարավորության դեպքում փոխարինել: Մշակված է հետևյալ սկզբնաղբյուրից՝ http://www.bbc.co.uk/:

Ստորև ներկայացված է բնագիտության դաս, որը կարելի է մշակել ուսումնառության համընդհանուր նախագծի համար՝ աշակերտների մեջ պատասխանատվություն զարգացնելու համար: Թեման կայուն ռեսուրսների կարևորության մասին է: Ներկայացված առանձնակի (նմուշ) դեպքի ուսուցմամբ ուսուցիչները փորձում են աշակերտներին քաջատեղյակ դարձնել, որ Երկիր մոլորակի վրա շատ ռեսուրսներ սահմանափակ են: (Սկզբնաղբյուր՝ http://www.footprintnetwork.org Հաշվեք ձեր թողած էկոլոգիական ոտնահետքը:)

Ուսուցիչն աշակերտներին խրախուսում է դուրս գալ իրենց սեփական համայնքների շրջանակից և մտածել շրջակա միջավայրի վրա մարդկանց ազդեցության մասին: Դասարանը

հետազոտություններ է անում, նախագծում ու իրականացնում է երկարաժամկետ պարարտախառնուրդ (կոմպոստ) ստեղծելու ծրագիր: Կարող եք սկսել «կենսաքայքայվող» և «ոչ կենսաքայքայվող» հասկացությունները ներկայացնելով և բացատրելով, թե ինչն է քայքայման պատճառ դառնում՝ բակտերիան: Աշակերտները կարող են այս խմբերից յուրաքանչյուրից շատ նյութերի օրինակներ բերել: Սա կարող է լինել մտագրոհի մեթոդով: Այնուհետև կարող եք անցնել պարարտախառնուրդի եկամտաբեր արտադրությանը՝ պարարտախառնուրդի վերածվող տեղական թափոնների անվտանգ հավաքում և դրանց հետագա վաճառք կամ օգտագործում դպրոցի բանջարանոցում:

Նախորդ աշխատանքից հետո աշակերտները արդեն կսկսեն հասկանալ, որ պետք է շատ զգույշ լինել չվերականգնվող ռեսուրսներն օգտագործելիս: Պետք է սկսենք մտածել, թե ինչպես կարող ենք այս խնդրի լուծմանը մասնակից դառնալ և ոչ թե խնդիրն էլ ավելի խորացնել: Ցանկալի է աշակերտներին ինչ-որ կերպ ներգրավել շրջակա միջավայրը դրականորեն փոխելուն ուղղված աշխատանքների մեջ: Աշակերտները կարող են ուսումնասիրել այլ ուղիներ, թե ինչպես վերամշակել կամ վերագործարկել այն նյութերը, որոնք հակառակ դեպքում կդառնային թափոններ: Առավել աղքատ հասարակությունների մարդիկ, անհրաժեշտությունից ելնելով, շատ ստեղծարար կերպով են մոտենում այս հարցին:

Էկոլոգիական ոտնահետքը չափում է, թե մարդկությանը որքան ցամաքային ու ջրային տարածք է անհրաժեշտ իրեն պետքական ռեսուրսները ստեղծելու և թափոնները վերցնելու համար: Որպեսզի ապրենք, մենք սպառում ենք բնության ստեղծածը: Ամեն մի գործողություն ազդում է Երկրի էկոհամակարգի վրա: Սա այնքան էլ մտահոգիչ չէ, եթե

ռեսուրսների օգտագործումը մարդկանց կողմից չի գերազանցում այն, ինչը Երկիրը կարող է վերականգնել: Բայց արդյո՞ք մենք ավելին ենք վերցնում:

Այսօր մարդկության էկոլոգիական ոտնահետքը 23% -ով ավել է, քան Երկիրը կարող է վերստեղծել: Այլ կերպ ասած, այժմ մեկ տարի և երկու ամսից ավելի շատ ժամանակ է հարկավոր, որ Երկիրը վերականգնի այն, ինչը մենք օգտագործում ենք մեկ տարվա ընթացքում: Մենք գոյատևում ենք՝ սպառելով Երկրի պահեստային պաշարները: Օգտագործում ենք ինչպես չվերականգնվող (ինչպես օրինակ՝ հանքանյութեր, հանքաքարեր և նավթ), այնպես էլ վերականգնվող ռեսուրսներ՝ ձկնային պաշարներ, կենդանիներ, անտառներ և ստորերկրյա ջրեր: Մենք այս ամենն ավելի արագ ենք սպառում, քան Երկիրը կարող է դրանք վերականգնել: Գոյատևելու համար մենք կախված ենք այս էկոլոգիական հարստություններից: Կենսապահովման միջոցներն անհետանում են, տեղի են ունենում ռեսուրսների բախումներ, հողը դառնում է ամուլ և ռեսուրսները դառնում են զգալիորեն ավելի թանկ կամ անմատչելի: Իրավիճակը, բնակչության աճով, ինչպես նաև կենսակերպի փոփոխմամբ պայմանավորված, վատթարանում է, ինչը բնական ռեսուրսների ավելի մեծ պահանջարկ է ստեղծում:

Բնակչության (անհատ, քաղաք, ազգություն կամ ողջ մարդկությունը) էկոլոգիական ոտնահետքը հաշվելով՝ կարող ենք գնահատել, թե մոլորակի ռեսուրսների որ չափն ենք օգտագործում, ինչն էլ օգնում է մեզ ավելի զգուշորեն տնօրինել մեր ռեսուրսները: Էկոլոգիական ոտնահետքն օգնում է մարդկանց անհատական և հավաքական քայլեր ձեռնարկել, որ ապրենք այն ռեսուրսների սահմաններում, որը Երկիրը կարող է վերականգնել:

Մարտահրավերն ու նպատակը «կայունությունն» է: Կայունությունը պարզ գաղափար է: Այն հիմնված է այն փաստի

վրա, որ երբ ռեսուրսներն ավելի արագ են օգտագործվում, քան ստեղծվում կամ վերականգնվում են, վերջինիս քանակը նվազում է և ի վերջո՝ սպառվում: Կայուն աշխարհում մարդու պահանջարկը բնությունից հավասարակշռության մեջ է այդ պահանջարկը բավարարելու բնության կարողության հետ:

Պատասխանեք հետևյալ հարցերին՝ հասկանալու համար, թե որքան է ձեր էկոլոգիական ոտնահետքը:

Գումարեք ձեր միավորները, որոնք նշված են յուրաքանչյուր հարցի վերջում (օրինակ [2]), որպեսզի հասկանաք, թե դուք մեծ, միջին, թե փոքր ազդեցություն ունեք շրջակա միջավայրի վրա: Հիշեք՝ որքան փոքր է էկոլոգիական ոտնահետքը, այնքան ավելի լավ:

1. Ձեր սննդի ո՞ր մասն է ինչ-որ մշակում անցած, փաթեթավորված կամ շատ հեռվից բերված:
ա) Իմ սննդի մեծ մասը մշակում անցած է և հեռվից է բերված: [3]
բ) Իմ սննդի գրեթե կեսը փաթեթավորված է: [2]
գ) Շատ քիչ մասը: Իմ սննդի մեծ մասը վերամշակված չէ, փաթեթավորված չէ և աճեցվում է տեղում: [1]

2. Որքա՞ն է ձեր տան մակերեսը:
ա) 30 քառակուսի մետր կամ ավելի փոքր [1]
բ) 90-130 քառակուսի մետր [2]
գ) 200 քառակուսի մետր կամ ավելի մեծ [3]

3. Դուք տեղաշարժվո՞ւմ եք հեծանիվով, ոտքով կամ ինչ-որ լծակառք եք օգտագործում:
ա) Հիմնականում [1]
բ) Երբեմն [2]
գ) Հազվադեպ [3]

4. Միջին հաշվով ամեն շաբաթ ինչքա՞ն եք երթևեկում հասարակական փոխադրամիջոցներով (ավտոբուս, մետրո, տաքսի)։
ա) Շաբաթական 25-100 կմ [3]
բ) Շաբաթական 20 կմ [2]
գ) Շաբաթական 0 կմ [1]

5. Միջին հաշվով ինչքա՞ն եք մեքենայով երթևեկում յուրաքանչյուր շաբաթ (որպես վարորդ կամ ուղևոր)։
ա) Շաբաթական 0 կմ [1]
բ) Շաբաթական 250-500 կմ [2]
գ) Շաբաթական 700 կմ [3]

6. Ձեր հարևանությամբ ապրողների համեմատ որքա՞ն թափոն եք գոյացնում։
ա) Գրեթե նույն չափով [2]
բ) Շատ ավելի քիչ [1]
գ) Շատ ավելի [3]

Այժմ գումարեք ձեր միավորներն ու նայեք ստորև ներկայացված աղյուսակին։

Եթե հավաքել եք 0-6 միավոր, ներկայումս ձեր էկոլոգիական ոտնահետքի ազդեցությունը փոքր է: Հիանալի է: Փորձեք բարելավել ձեր արդյունքը՝ օգտվելով ստորև ներկայացված որոշ գաղափարներից:	Եթե հավաքել եք 7-12 միավոր, ներկայումս ձեր էկոլոգիական ոտնահետքը միջին մակարդակի է: Փորձեք բարելավել ձեր արդյունքը՝ օգտվելով ստորև ներկայացված որոշ գաղափարներից:	Եթե հավաքել եք 13-18 միավոր, ներկայումս ձեր էկոլոգիական ոտնահետքը ՄԵԾ է: Փորձեք բարելավել ձեր արդյունքը՝ օգտվելով ստորև ներկայացված որոշ գաղափարներից:

Ձեր տարածաշրջանում ստեղծեք խումբ, որպեսզի հարցեր քննարկեք ու բարձրացնեք շրջակա միջավայրի վրա մարդկանց ազդեցության մասին իրազեկվածության մակարդակը:	Փորձեք ուտել տեղական սնունդ, որպեսզի կրճատեք ապրանքներ փոխադրելու համար ծախսվող վառելանյութի քանակը: Փորձեք քայլել կամ օգտվել հասարակական փոխադրամիջոցներից անձնական մեքենայով երթևեկելու փոխարեն:	Փորձեք քայլել կամ օգտվել հասարակական փոխադրամիջոցներից անձնական մեքենայով երթևեկելու փոխարեն: Փորձեք կրճատել փաթեթավորված կամ այլ տեղերից բերված ձեր սպառած սննդի քանակը: Փորձեք նորից օգտագործել և վերամշակման ենթարկել տալ ձեր ընտանիքի կողմից

Այս օրինակով խրախուսվում է, որ դուք այս մտածելակերպը սերմանեք ձեր աշակերտների մեջ փոխանակ մարդ արարածների միջև ընդհանրությունների ու այլազանությունների լարման: Հաջորդ քայլը կարող է լինել այն, որ կիրառեք այս գաղափարները՝ ձեր աշակերտներին ընդգրկելով իրենց շրջակա միջավայրը բարելավելու ուղիներ փնտրելու քննարկումներում:

4.9. Ներառական գնահատում

Գնահատման գործընթացում *ներառականությունը* կարևոր գրավական է հաջող դասավանդման համար:

Գնահատումն իր կառուցվածքով պետք է արտացոլի բազմազանությունը, որպեսզի համապատասխանի դասարանում տարբեր աշակերտների զանազան կարիքներին ու խնդիրներին: Այն պետք է ապահովի նաև արդարություն ու հավասարություն: Թեև հնարավոր է կիրառել միատեսակ (single-design) գնահատում (օրինակ՝ տարբեր աշակերտների նույն առաջադրանքը հանձնարարել), սակայն բոլոր աշակերտների կարողությունների մակարդակը արտացոլող մշակված ու իրականացվող անհատական գնահատման մեխանիզմների կիրառությունը նախընտրելի է: Ամբողջ առաջադրանքներն ու գնահատման մեխանիզմները պետք է բոլոր աշակերտներին իրենց կարողություններն ու ձեռքբերումները ցուցաբերելու հավասար հնարավորություններ տան: Ստորև ներկայացված նյութը հիմնականում մշակված է «TESSA Inclusive Education Toolkit: A guide to the education and training of teachers in inclusive education», 2016, http://www.tessafrica.net և Բաց համալսարանի «Open, Learn, Create: an Introduction to Inclusive Education»-ից, տե՛ս www.open.edu:

Ներառական գնահատման ռազմավարությունը ուսուցչից պահանջում է՝

- Հասկանալ, թե որ աշակերտներն ունեն գնահատման տարատեսակ գործիքների կարիք:
- Ապահովել, որ առկա լինեն ուսումնառությունը չափելու և գնահատելու բազմաթիվ միջոցներ:
- Ապահովել, որ իր՝ ուսուցչի գնահատման ռազմավարությունները մշակութային առումով ներառական լինեն:
- Վերջնաժամկետներ սահմանելիս հաշվի առնել աշակերտների կարողությունները:

- Իմանալ աշակերտների՝ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ նախընտրությունները (օրինակ՝ առաջադրանքի կամ քննության համար ճկուն մոտեցում առաջարկել):
- Ապահովել, որ գնահատման ժամանակ հաշվի առնվեն այն գիտելիքն ու հմտությունները, որոնք տրվել են դասի ժամանակ:

Գնահատումը երկու տիպի է լինում: Մեկի ժամանակ հետադարձ հայացք է նետվում նրան, թե ինչ է աշակերտն արդեն սովորել: Ամփոփիչ գնահատումը (ուսումնառության գնահատումը) կարելի է տեսնել թեստերի և գնահատականների տեսքով: Դրանք աշակերտներին պատկերացում են տալիս, թե որքան լավ են իրենք հասկացել կոնկրետ թեման կամ աշխատանքը: Ֆորմատիվ գնահատումը բավականին տարբեր է: Այն հիմնված է այն մոտեցման վրա, որ աշակերտների առաջադիմությունը լավագույնս կփոխվի, եթե աշակերտները՝ հասկանան, թե ինչ պետք է սովորեն. իմանան, թե ինչ գիտեն արդեն. հասկանան, թե ինչպես կարող են լրացնել այս երկուսի միջև առկա բացը: Որպես ուսուցիչ դուք ձեր աշակերտներից լավագույն արդյունք կստանաք, եթե փորձեք կիրառել վերը նշված երեք կետերը, ինչի արդյունքում գնահատումը որքան ուսուցչի, նույնքան էլ աշակերտների պատասխանատվությունը կդառնա: Ինչպե՞ս է սա հնարավոր: Երբ սահմանել եք որևէ թեմայի կամ աշխատանքի ուսումնառության վերջնարդյունքները, դրանց մասին տեղեկացրեք աշակերտներին: Պետք է հստակ տարբերակեք ոչ թե պարզապես այն, թե նրանք ինչ պետք է անեն, այլ նաև այն, թե ինչ է ակնկալվում, որ նրանք սովորեն: Այսպիսով, ստուգելու համար, թե արդյոք նրանք հասկացել են, «Բոլորդ հասկացա՞ք» հարցնելու փոխարեն այնպիսի հարց տվեք, որի միջոցով կկարողանաք գնահատել, թե արդյո՞ք նրանք իսկապես հասկացել են: Օրինակ՝

«Ո՞վ կարող է իր բառերով բացատրել, թե ինչ պետք է անենք և թե ինչ ենք ուզում սովորել»: «Ինչպե՞ս կարող եք ինձ վստահեցնել, որ հասկացել եք այն, ինչը հենց նոր ասացի»: «Եվ այսպես, ի՞նչ ենք անելու այսօր»:

Նրանց պատասխանները ձեզ հնարավորություն կտան հասկանալու, թե արդյոք նախքան սկսելը նրանք հասկանում են ինչ են սովորելու: Նրանց ժամանակ տվեք հասկանալու ձեր սահմանած ուսումնառության վերջնարդյունքների իմաստը: Որպեսզի օգնեք աշակերտներին առաջխաղացում ունենալ, պետք է և՛ իրենք, և՛ դուք իմանաք, թե այդ պահին նրանք ինչ գիտելիքներ ունեն: Ակնկալվում է, որ դուք զգայուն, կառուցողական և շահագրգռված լինեք՝ պարզելու ձեր աշակերտների այդ պահին ունեցած գիտելիքները: Անտարբեր մեկնաբանություններն ու վարվելակերպը կարող են բացասական ազդեցություն ունենալ աշակերտների ինքնավստահության, մոտիվացիայի և ոգևորության վրա: Հիշեք այն ուսուցիչներին, ովքեր բացասական ազդեցություն են ունեցել ձեր ինքնավստահության և ոգևորության վրա, և նույն կերպ մի վարվեք: Փոխարենը, երբ աշակերտների հետ խոսում եք նրանց ներկայիս ուսումնառության մասին, համոզվեք, որ նրանց համար ձեր տված գնահատականը և՛ օգտակար է, և՛ կառուցողական: Դրա համար՝ Ի հայտ բերեք աշակերտների ուժեղ կողմերն ու առաջարկեք նրանց, թե ինչպես կարելի է ավելի բարելավել իրենց առաջադիմությունը: Ի հայտ բերեք թույլ կողմերն ու դրական տրամադրվածություն ցուցաբերեք այն հարցի շուրջ, թե ինչպես կարելի է դրանք վերացնել, համոզվեք, որ աշակերտները հասկանում և ընդունում են ձեր խորհուրդը: Ուսումնառության գնահատումը դիտարկեք որպես երկկողմանի գործընթաց:

Լրացնել ուսումնառության բացը

Հարկավոր է աշակերտներին իրենց աշխատանքը զարգացնելու հնարավորություններ տալ: Սա նշանակում է, որ նրանց հետ իրենց աշխատանքի մասին խոսելով կարող եք հայտնաբերել թյուրըմբռնումները, ինչը նշանակում է, որ պետք է փոփոխեք ձեր դասավանդման բովանդակությունն ու ոճը, որով դուք դասավանդում եք հիմա, եթե ուզում եք լրացնել այն բացը, որը կա նրանց ներկա գիտելիքների ու նրանցից ձեր ակնկալած արդյունքի միջև: Շատ հաճախ աշակերտների մի խմբի հետ աշխատանքային ընթացքը դանդաղեցնելով՝ փաստացի արագացնում եք այն, քանի որ դանդաղելով դուք նրանց ժամանակ եք տվել մտածելու ու հասկանալու, թե ինչի վրա պետք է աշխատեն առաջադիմությունը բարձրացնելու համար: Աշակերտներին թույլ տալով իրար մեջ քննարկել իրենց աշխատանքն ու մտածել, թե որտեղ են բացերն ու ինչպես կարելի է դրանք լրացնել՝ դուք նրանց իրենք իրենց գնահատելու հնարավորություն եք տալիս: Այս ամենի առանցքում դուք եք, դուք՝ որպես ուսուցիչ, որը, աշակերտների հանդեպ հավատ դրսևորելով, կառուցողական կերպով ուղղություն է տալիս, թե ինչպես կարող են բարձրացնել առաջադիմությունը, ու նրանց հնարավորություն է տալիս պատասխանատվություն ստանձնել իրենց ուսումնառության համար:

Եթե ֆորմատիվ գնահատումը շահավետ է աշակերտներին, այն շահավետ է նաև ուսուցիչներին. եթե ուսուցիչները մտածում են աշակերտների արձագանքի, ուսումնառության վերջնարդյունքների, դասի ընթացքի և վարժությունների որակի մասին, ապա նրանք կարող են բարձրացնել իրենց աշխատանքի արդյունավետությունը: Սա ուսուցչին հնարավորություն է տալիս գնահատել ինքն իրեն: Ֆորմատիվ գնահատման (կամ հանուն կրթության գնահատման) դեպքում առանցքային բառը

«կառուցողականն» է: Կառուցողական գնահատական տալն ու ստանալը գնահատման գործընթացի շատ կարևոր մասն է: Կարևոր է, որ ուսուցիչն աշակերտներին գրավոր կամ բանավոր գնահատի՝ հստակ բացատրելով, թե իրենց աշխատանքի մեջ ինչն է լավ, ինչն է, որ այնքան էլ լավ չէ և թե ինչպես կարելի է զարգացնել: Սա հնարավորություն է տալիս առանձին աշակերտների առջև անհատական թիրախներ դնել, որպեսզի նրանք իրենց կարիքներին ու կարողություններին համապատասխան իրենց հարմար արագությամբ բարձրացնեն առաջադիմությունն ու կատարելագործվեն: Սա է, որ Դիկինսոնն ու Րայթը (Dickinson and Wright) անվանում են «տարբերակում ըստ արձագանքի» (differentiation by response):

Ինչ վերաբերում է գնահատման մեջ գրավոր մեկնաբանություններին, երբ ուսուցիչներն աշխատում են մեծ թվով աշակերտների հետ, աշակերտների ցուցակ կազմելը կարող է լավ լուծում լինել: Եթե աշակերտի կատարած ինչ-որ աշխատանք ձեզ զարմացնում է, քանի որ այն իսկապես շատ լավ է արված, կամ ոչ այնքան լավ, ինչպես սովորաբար նա անում է, փորձեք վերլուծել, թե ինչը կարող է լինել դրա պատճառը, որպեսզի օգնեք աշակերտին շարունակել որակյալ աշխատանք ներկայացնել կամ այնպես անել, որ նա փորձի բարելավել իր աշխատանքի որակը:

Մտածեք, թե ինչպես կարող եք օգտագործել նախորդ դասերի ընթացքում ստացված կարծիքները ձեր դասապլանը կատարելու, վարժությունները կազմելու և հետագա գնահատման հետ կապված: Հիշեք, որ սովորողին իր գնահատմանը մասնակից դարձնելը կօգնի ուսումնառության գործընթացին:

Ներառական դպրոց դառնալը հեշտ չէ. չափազանց կարևոր է հաշվի առնել, թե ինչ աջակցության կարիք ունեն թե՛

աշակերտները և թե ուսուցիչները: Ուսուցիչները կարող են խրախուսման տարբեր միջոցներ կիրառել՝ բոլորի ներառումն ու ուսումնառությունը խթանելու համար: Կարևոր է հիշել, որ ներառական դպրոց ստեղծելու ուղղությամբ աշխատող ուսուցիչներն աջակցության կարիք կունենան: Այդ գործընթացը հաճախ մարտահրավերներ է նետում նրանց սեփական (հաճախ վաղեմի) արժեքներին, հայացքներին ու գործելաեղանակներին:

Ներառական գնահատման շրջանակ (FutureLearn, 2018)

Ստորև ներկայացված գծապատկերում երեք հատվող շրջանները ցույց են տալիս, թե ինչպես են գնահատման բաղադրիչները՝ նյութի ներկայացումը, բովանդակությունը և արդյունքը, համընկնում՝ խթանելով ներառումը:



Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

Ստորև ներկայացված է երկու օրինակ:

10-րդ դասարանի աշխարհագրության ուսուցիչ պրն. Հունանյանը բանավոր քննություն է անցկացնում: Նրա աշակերտներից մեկը, որը խոսելու խանգարում ունի, այս խոչընդոտի պատճառով չի կարողանում լիարժեք ցույց տալ իր գիտելիքները: Այդ պատճառով, մինչ մյուսները բանավոր քննություն են հանձնում, նա գրում է հարցերի պատասխանները: Այս աշակերտի տարբերվելը քողարկելու համար պրն. Հունանյանը պատահականորեն ընտրում է մի քանի աշակերտի և նրանց նույնպես խնդրում է քննությունը գրավոր հանձնել:

9-րդ դասարանի գրականության ուսուցչուհի տկն. Վարդանյանը հանձնարարում է խմբային ներկայացումներ՝ որոշ հայտնի հեղինակների ներկայացնելու համար: Լսողական խնդիրներ ունեցող մի աշակերտի, ով համակարգչային հմտություններ ունի, հանձնարարվում է առաջադրանքի տեխնիկական մասը (օրինակ՝ էջերի գլխագրերը, նկարներ ընտրելը և ուրվագիծը կազմելը): Նույն տեխնիկական առաջադրանքները կարելի է հանձնարարել խմբի մյուս անդամներին, ովքեր նախընտրում են ելույթ չունենալ: Բանավոր ելույթ չունեցողների աշխատանքը առանձնացնելու համար ուսուցիչը «ձևավորողների» կատարած ներդրումները գնահատում է «ամենաստեղծարար մտածողները» կամ «ամենապատասխանատու աշակերտը» կոչումներով

ԳԼՈՒԽ 5: ՆԵՐԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ներառական ուսումնառության գործիքները կարելի է բնութագրել որպես այն տեխնոլոգիաները (թե՛ ծրագրային (software), թե՛ գործիքային-տեխնիկական (hardware), որոնք օգնում են աշակերտներին յուրացնել իրենց դժվարությունները շրջանցելու, դրանց վրա աշխատելու կամ դրանք հաղթահարելու ռազմավարություններ: Այս տեխնոլոգիաներից շատերը ներառում են համընդհանուր նախագծի (Universal Design) հատկանիշներ, որոնք ուղղված են սովորողների տարբերությունները հաշվի առնող ուսումնառության ռեսուրսների տրամադրմանը: Ներառական տեխնոլոգիաները կարող են նախագծվել ու մշակվել այնպես, որ կոնկրետ դժվարություններ հարթեն (կամ առնվազն օգնեն հաղթահարել), մինչդեռ մյուսները ունեն հատկանիշներ, որոնք աջակցում են ուսումնառության մի շարք կարիքներ հաղթահարելուն: Դրանք կարող են լինել անկախ, ինքնուրույն աշխատող ծրագրեր կամ կարող են իբրև ծրագրային հավելված ավելացվել լայն տարածում ունեցող այլ կիրառական ծրագրերի: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառությունը դարձել է դասարանների ու մանկավարժական մեթոդների (որոնք ձգտում են ներառական դառնալ) արդիականացման հիմնական գործիք:

Ներառական դասերը ուսուցիչների ու դպրոցի աշխատակազմի այլ անդամների համար բազմաթիվ մարտահրավերներ են ծնում: Թեև նորարարական տեխնոլոգիաներն ու գործիքները ուսուցիչներին աջակցում են դասարանում կառավարել բոլոր աշակերտներին, սակայն ուսուցիչները նույնպես պետք է ձեռք բերեն դասավանդման համապատասխան հմտություններ՝ նորարարական այս գործիքները գործի դնելու համար: Տեխնոլոգիաները պետք է

հեշտացնեն ուսումնառության գործընթացը և նպաստեն բազմազան աշակերտների գրագիտության, հաղորդակցման և սոցիալական հմտությունների զարգացմանը:

Տեխնոլոգիաների կիրառումը ոչ միշտ կարող է հավասարապես օգտակար լինել բոլոր աշակերտների համար, քանի որ այն կախված է նրանց տեխնոլոգիական նախընտրություններից, ուսումնառության ոճերից և հաղորդակցման միջոցների հանդեպ ունեցած վերաբերմունքից: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքների ընտրությանը՝ տեսողական, լսողական, լեզուն հասկանալու և այլ խնդիրներ ունեցող աշակերտների համար այս գործիքների շահավետ կողմերը առավելագույնի հասցնելու համար: Տեխնոլոգիաների հարմարեցման բացակայության օրինակներից մեկը սեռային պատճառ ունի: Տղաներն ավելի հակված են համակարգչից օգտվելուն, անգամ ոչ ուսումնական նպատակներով, քան աղջիկները, ովքեր միշտ չէ, որ համապատասխան թվային հմտություններ ունեն համակարգչից անկաշկանդ կերպով օգտվելու համար (Bagon, Gačnik, & Starcic, 2018):

5.1. Տեսողական խանգարման դեպքում կիրառվող օժանդակող գործիքներ

Հատուկ հաշվիչ	Հատուկ հաշվիչներն ունեն բրայլյան էկրան, մեծ ստեղներ և գործողությանարդյունքը խոսքով արտահայտելու փոխակերպման կարգավորում: Հատուկ հաշվիչների շատ

	տեսակներ ունեն ընդհանուր, գիտական հաշվար կման և կորերի գծման կարգավորումներ:
Գրպանի խոշորացույց	Գրպանի խոշորացույցները կոմպակտ գործիքներ են (ոսպնյակներ), որոնք խոշորացնում են ընթերցանության նյութը: Որոշ խոշորացույցներ կոմպակտ են, բայց կան նաև խոշորացույցներ, որոնք կարելի է տեղադրել պատվանդանի վրա ու ավելի ընդարաձակ տարածք խոշորացված տեսնել:
Էլեկտրոնային վիդեո խոշորացնող համակարգեր (CCTV)	Այս համակարգը կարող է որևէ տպագրված նյութ կամ պատկեր խոշորացված ցույց տալ հեռուստացույցի կամ համակարգչի էկրանին:
Բրայլյան թարգմանությա ն ծրագրեր	Այս ծրագիրը գրավոր նյութը փոխակերպում է բրայլյան գրերի, որն այնուհետև կարելի է ուղարկել ընթերցման անհատական գործիքին կամ բրայլյան գրերը ցույց տվող սարքին:
Էկրանային ընթերցիչներ	Էկրանային ընթերցման ծրագիրը տեսողական խանգարում ունեցող աշակերտներին հնարավորություն է տալիս համակարգչի էկրանից «կարդալ» որևէ տեքստ՝ կա՛մ խոսքի վերածող սարքի, կա՛մ բրայլյան էկրանի փոխակերպիչի միջոցով:

Շոշափվող էկրաններ, գծապատկերնէ ր, քարտեզներ, մոդելներ և պատկերներ	Այս էկրանները տեղեկություն են տալիս քարտեզի վրա երկրների տեղակայման մասին (աշխարհագրության դասերին):
Հավելվածներ հարմարանքներ ի (gadget) համար	Accessnote, Evernote (գրառումներ անող ծրագրեր) Dragon Dictation – Այս հավելվածը հնարավորություն է տալիս թելադրել որևէ հաղորդագրություն և այն բանավոր կերպով կետադրել: Տեքստն անմիջապես հայտնվում է էկրանին: Talking scientific calculator – Այս հաշվիչը արտաբերվող ձայնի մեծ ընտրանի ունի (ըստ նախասիրության, առոգանության և այլն) և թույլ է տալիս ձայնագրել սովորողի ձայնը: Այն աշխատում է «VoiceOver» կույրերին օժանդակող հավելվածի հետ: MyScrypt հաշվիչ (ավելին՝ http://www.perkinselearning.org/technology/blog/five-calculator-apps-help-students-low-vision-classroom հղումով)

Վերջերս Բրայլ ինստիտուտը ViA- Visually Impaired Apps հավելվածն է մշակել IOs համակարգում, որը App store-ում գտնվող ավելի քան 500 000 հավելված մատչելի է դարձնում տեսողական խանգարում ունեցողներին: Այն կարող է

տեսողական խանգարումներ ունեցող կամ կույր աշակերտների համար գտնել նաև ամենահամապատասխան հավելվածներ:

5.2. Հոգեմտավոր խանգարման (mental disorder) (այդ թվում ուշադրության պակասի) դեպքում օժանդակող գործիքներ

Storybird	Դասարանում տրամադրող ուսումնական միջավայր ստեղծելու համար կարելի է օգտագործել Storybird (https://storybird.com/) : Այն լեզվական արվեստի հարմարավետ գործիք է: Սովորողը կարող է հասանելի ստեղծագործ պատկերազարդումներով պատմություններ գրել: Այս հարթակն անվճար է: Ուսուցիչները կարող են կիրառել այս հարթակը աշակերտների առաջադիմությանը հետևելու, մեկնաբանություններ անելու և առաջադրանքներ տալու համար: Աշակերտները կարող են միմյանց հետ կիսվել իրենց պատկերազարդումներով ու կարծիքներ փոխանակել: Ծնողները նույնպես կարող են հետևել իրենց երեխաների առաջադիմությանը և մեկնաբանություններ անել: Այս ծրագիրը գործածելու համար դասարանում պետք է համակարգիչներ լինեն կամ գոնե դպրոցը/ուսուցիչը պետք է վստահ լինի, որ աշակերտը տանը համակարգչից օգտվելու տարբերակ ունի: Այս ծրագիրը կարող է օգտակար լինել շատ աշակերտների համար, քանի որ այն

	խոսակցական խանգարումներ ունեցող երեխաներին հնարավորություն կտա ստեղծելու իրենց պատմություններն ու դրանք լսելի դարձնել:
Inspiration - Mind Mapping	Այս ծրագիրը գրառումներ է կատարում, դասակարգում է տեղեկությունները, նախագծերի, աշխատանքների ու զեկույցների կաղապարներ է տալիս, կիրառում էOutline View՝ հիմնական ու օժանդակ գաղափարների վրա կենտրոնանալու համար, ինչպես նաև օգնում է միտքը հստակ արտահայտել գրավոր կերպով: Ծրագրի Presentation Manager-ի գծապատկերները, մտքերի սխեմաներն ու կաղապարները կարող են վերափոխվել հղկված ելույթների, որոնց միջոցով հստակորեն ներկայացվում են գաղափարները ու ի ցույց են դրվում աշակերտի գիտելիքները: (Հավելյալ տեղեկության համար՝

	http://www.inspiration.com/):
Overlays (կարող է ներառվել տեսողական մասում)	Գունավոր պատիճները երանգավորված ֆիլտրի մի տեսակ են, դրվում են տեքստի վրա ընթերցանության հետ կապված մի շարք դժվարություններ (օրինակ՝ ընթերցանության դանդաղ տեմպ, ընթերցածի ըմբռնում ու ճշգրիտ ընթերցանություն) վերացնելու համար:

Սրանք փոքր կամ միջին բյուջեի մեջ տեղավորվող գործիքներից մի քանիսն են, որոնք նախատեսված են դասարանում օգտագործվելու համար: Այս տեխնոլոգիաները, սակայն, չեն բացառում, որ դպրոցի շենքի, սարքավորումների ու գույքի տեղափոխության կարիք առաջանա:

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

ԳԼՈՒԽ 6: ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կրթության և ուսումնառության մեջ *կայուն զարգացումը* կայուն ապագա ձևավորելու համար բոլորին գիտելիք, հմտություններ ձեռք բերելու, արժեքներ ու մոտեցումներ ձևավորելու հնարավորություն է տալիս: Այն պահանջում է մասնակցության վրա հիմնված դասավանդման նուսումնառության մեթոդների կիրառում, որոնք զինում և մոտիվացնում են սովորողներին և դասավանդողներին, որպեսզի նրանք փոխեն իրենց վարվելակերպն ու անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն կայուն զարգացումը խթանելու համար: Ուսումնառության ոլորտում կայուն զարգացումը նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը, ապագա սցենարներ երևակայելու հմտությանը և համագործակցությամբ որոշումներ կայացնելուն: Հաճախ սա պահանջում է փոփոխություններ կրթության կազմակերպման (դասարանային ուսումնառություն) մեջ: «Հանուն կայուն զարգացման կրթությունը կարևոր է կայուն հասարակություն ստեղծելու համար և այն ցանկալի է ինչպես ֆորմալ կրթության ու վերապատրաստման բոլոր մակարդակներում, այնպես էլ ոչ ֆորմալ ուսումնառության մեջ» (The European Council 2010, 2011): Դե Սիլվիան և Փադմանաթանը (Padmanathan & De Silva, 2013) ներառական մոտեցումներ որդեգրող դպրոցների կայուն զարգացման համար առաջարկում են հետևյալ բաղադրիչները`

6.1. Դպրոցի մշակույթը

Ուժեղ ու միասնական դպրոցական մշակույթն ապահովում է որակյալ կրթության երկարատև կայունություն: Սա վերաբերում է դպրոցում ներառական մոտեցումներին: Հետևյալ բաղադրիչները

նպաստում են միասնական դպրոցական մշակույթի զարգացմանը՝

- Վերաբերմունքը փոխելը. 1) Ստեղծեք առաքելություն/տեսլական, 2) Սահմանեք նպատակներ դասախոսական կազմի, աշխատակազմի, ծնողների, աշակերտների, շահառուների հետ համագործակցությամբ, 3) Իրագործեք սահմանված նպատակները թիմային համագործակության միջոցով, 4) Բաշխեք պարտականություններն ու պատասխանատվությունները:
- Առաջնորդություն.1) Դարձեք փոփոխության գործորդ՝ ձեր իսկ օրինակով, 2) Շարունակական ինքնազարգացման ապահովում, 3) Դասախոսական կազմի, աշխատակազմի, դպրոցի ծրագրերի ու ընդհանուր առմամբ դպրոցի համայնքի վերահսկում ու մշտադիտարկում, 4) Դասարանում դասավանդումն ու ուսումնառությունը զարգացնելու միջոցների կազմակերպում:

Ծնողները, մասնավորաբար հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները, հաճախ վախենում են գնալ իրենց երեխայի դպրոց: Ինչևէ, եթե ծնողների ու ուսուցիչների միջև հաղորդակցությունն ավելի դյուրին լինի, ուսուցիչներն ավելի լավ ու ավելի արագ կիմանան երեխաների կարիքների մասին, ինչը կօգնի երեխաների ավելի արագ առաջընթացին: Մտածեք հետևյալ հարցերի շուրջ՝

- Ի ՞նչ տեսակի միջոցառումներ են ծնողներին ու համայնքի անդամներին գրավում դեպի դպրոց և նրանց ու ուսուցիչների միջև հաղորդակցումը հնարավոր դարձնում:
- Կարո ՞ղ են ուսուցիչներն այցելել ծնողներին ու համայնքի անդամներին, ի՞նչ հանգամանքներում:

- Ի՞նչ եք անում դուք, ուսուցիչներն ու աշխատակազմի մյուս անդամները, որպեսզի խրախուսեք ծնողներին կրկին ու կրկին գալ դպրոց:
- Ովքե՞ր են այն աշակերտները, որոնց ծնողները գալիս են, և նրանք, որոնց ծնողները երբեք չեն գալիս: Կա՞ն հատուկ պատճառներ, որոնք խոչընդոտում են վերջիններիս դպրոց գալուն:
- Ի՞նչ են անում դպրոցները խրախուսելու համար, որ դպրոց չեկող ծնողները սկսեն գալ:

Միմյանց հետ ծանոթությունների ցանց ստեղծելը (networking) միջոց է առավելագույն արդյունավետությամբ կիրառելու գիտելիքներն ու փորձը տարբեր թեմաների վերաբերյալ համայնքի տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու համար, ինչպես նաև խրախուսելու համար բոլոր ծնողներին իրենց երեխաներին դպրոց ուղարկել, ստիպել նրանց մնալ դպրոցում ու բացահայտել իրենց ողջ ներուժը: Դրա շնորհիվ կրկնակի ջանքեր չեն գործադրվում, իսկ արդյունքը լինում է ավելի մեծ ու ազդեցիկ:

Հնարավորությունների հզորացմանը միտված դրույթները վերաբերում են դպրոցական համայնքի առանցքային շահակիցներին (stakeholder)՝

- Աշխատակազմի հմտությունների շարունակական զարգացում. 1) Վերապատրաստումներ և աշխատաժողովներ դասախոսական կազմին, աշխատակազմին ու վարչական կազմին ներառական կրթության վերջին զարգացումների մասին իրազեկված պահելու համար, 2) Ուսումնառության խնդիրներ ունեցող աշակերտներին առնչվող մասնագիտացված ոլորտների մասնագետները պետք է կիրառեն մանկավարժության արդի ու ամենահամապատասխան մոտեցումները, 3) Պաշտոնակից ուսուցիչների (ներդպրոցական և միջդպրոցական)

դիտարկումները պետք է լինեն միմյանց հետ խորհրդակցությամբ աշխատելու գործընթացի մաս, 4) Վարչական մշտադիտարկում և ներառական կրթության/ուսումնառության մեջ լավագույն գործելաեղանակների որակի ապահովման նշաձողերի երաշխավորում, 5) Առկա պայմանների SWOT (ուժեղ, թույլ կողմեր, հնարավորություններ ու սպառնալիքներ) վերլուծություններ բոլոր ներգրավված շահակիցների հետ (2018 թ. SWOT վերլուծության օրինակը տե՛ս Հավելված 6-ում):

- Ծնողների իրազեկվածություն. 1) Բաց դռների օր, որը ներառում է այցելություն դասարաններ ու շրջագայություն դպրոցի տարածքում, 2) Ծանոթացում հատուկ ծրագրերին, սարքավորումներին և դպրոցում գործող ծառայություններին, 3) Վարչակազմի թույլտվությամբ դասին ներկա գտնվելու հնարավորություն, 4) Առանձնահատուկ կարիքներ ունեցող աշակերտների ծնողների համար նախատեսված իրազեկման դասընթացներ, 5) Կանոնավոր ծնողական ժողովներ, 6) Ֆորումի ստեղծում, որտեղ ծնողները կարող են շփվել, մտքեր փոխանակել և աջակցել միմյանց (օրինակ՝ խումբ Viber-ում, ֆեյսբուքի մեսսենջերում (FB Messenger)):

6.2. Փորձի փոխանակման ֆորումներ ու հարթակներ

Ստորև առաջարկվող միջոցառումները հատուկ են դպրոցական համատեքստին և արդյունավետ են կայուն ներառական գործելակերպի իրականացման համար: ուսուցիչների ու աշխատակազմի հանդիպումներ.

- հանդիպումներ շահակիցների հետ, այդ թվում՝ տեղական ու միջազգային կազմակերպությունների, որոնք ներկայացնում են օրինակ՝ հաշմանդամների/փոքրամասնությունների խմբերը.

- ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ.
- լուսաբանում լրատվամիջոցներով և ընդհանուր փորձի տարածում. առցանց և/կամ տպագրված տեղեկատվություն.
- իրազեկվածության բարձրացմանը միտված գործողություններ:

Վարժություն: Այժմ, երբ ծանոթ եք կայուն զարգացում հասակցությանը երեք տարբեր կողմերից՝ դպրոցի մշակույթ, հնարավորությունների հզորացում և ֆորումներ ու հարթակներ, կատարեք հետևյալ վարժությունը:

Երեք կամ չորս հոգուց կազմված փոքր խմբերով քննարկեք կայուն զարգացման վերաբերյալ ձեր փորձառությունը և ներկայացրեք կայուն զարգացմանն ուղղված գործողությունների ցանկ, որը ձեր դպրոցն արդեն իրականացրել է: Հետո համեմատեք ձեր պատասխանները մյուս խմբերի պատասխանների հետ՝ առանձնացնելով ընդհանուր ուժեղ ու թույլ ոլորտները: Այնուհետև թվարկեք կայուն զարգացմանն ուղղված մի քանի գործողություններ, որոնք կցանկանայիք իրականացնել ապագայում:

ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Վարժություն 1

Ստորև ներկայացվածը մշակված է «TESSA Inclusive Education Toolkit A guide to the education and training of teachers in inclusive education»-ից (2016):

Թիրախային լսարան՝ ուսուցիչներ
Ուսուցիչների քանակ՝ 50
Վարժության նպատակը՝

- Ուսուցիչներին հնարավորություն տալ տարբերակել դպրոցների տարբեր տեսակները:
- Կիրառել դպրոցի մասին ունեցած իրենց գիտելիքները ներառական կրթության վերաբերյալ իրենց սեփական գաղափարները/սահմանումները մշակելիս:
- 4-5 հոգուց բաղկացած փոքր խմբերով ընթերցեք տարբեր տեսակի դպրոցների սահմանումները (Հավելված 2):
- Որոշեք յուրաքանչյուր դպրոցի տեսակին համապատասխան անվանումն ու կապակցեք ըստ սահմանման:
- Ստուգեք ձեր պատասխանները՝ օգտագործելով աղյուսակում ներկայացված տեղեկությունը (Հավելված 3):
- Ձեր խմբի հետ առաջարկեք *ներառական կրթության* ձեր սահմանումը:
- Խնդրեք կամավորներին մյուսների հետ փոխանակվել որոշ գաղափարներով:
- *Ներառական կրթության* ձեր սկզբնական սահմանումը համեմատեք հետևյալ սահմանումների հետ:

Ներառական կրթությունը բոլոր սովորողներին նույն դասարանում գրկաբաց ընդունելն է, նրանց բարձրորակ դասավանդում և ուսումնական հաջողություններին անհրաժեշտ

օժանդակող գործիքներ տրամադրելը: Այն հաջող կերպով ներդնելու համար ավելի շուտ դպրոցներն ու դպրոցական համակարգերը պետք է հարմարեցնել յուրաքանչյուր աշակերտի կարիքներին, և ոչ թե փորձել աշակերտին հարմարեցնել համակարգին՝ նրան «ուղղելով»: Ծնողները, ուսուցիչներն ու մյուս աշակերտները նույնպես պետք է ընդունեն, որ տարբեր տեսակի աշակերտները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողները, իրենց հասակակիցների հետ դպրոց հաճախելու իրավունք ունեն (Handicap International | Humanity & Inclusion, 2019) :

«Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան (1960) և մարդու իրավունքների վերաբերյալ այլ պայմանագրեր արգելում են սոցիալական հիմքով վերագրվող կամ դրանցով ընկալվող տարբերությունների հիման վրա (ինչպես օրինակ՝ սեռը, էթնիկական ծագումը, լեզուն, կրոնը, ազգությունը, սոցիալական ծագումը, տնտեսական վիճակը, կարողությունը և այլն) կրթություն ստանալու հնարավորությունից որևէ բացառում կամ սահմանափակում: Կրթական կառույցները կարիք ունեն առավել գործուն կերպով պարզել այն խոչընդոտներն ու արգելքները, որոնց հետ աշակերտներն առերեսվում են, երբ փորձում են գտնել որակյալ կրթություն ստանալու հնարավորություններ, ինչպես նաև բացառման հանգեցնող այդ արգելքներն ու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ քայլեր պետք է ձեռնարկեն: (Կոնվենցիա կրթության բնագավառում խտրականության դեմ, 1960, 2003) :

- Ընդգծեք այն հատկանիշները, որոնք կարևոր եք համարում արդար կրթական միջավայր ստեղծելու համար, և տվեք ձեր սահմանումները՝ վեր հանելով նոր, ավելի առաջադիմական հատկանիշներ:

Ներառական դասարանը ենթադրում է նաև, որ ուսուցիչը պետք է ստեղծի ու կիրառի համագործակցային կրթական

մոդելներ: Դրանցից մեկը համատեղ դասավանդումն է: Համատեղ դասավանդող ուսուցիչը (աջակցող ուսուցիչը) հիմնական ուսուցչի հետ միասին նախագծում է դասը, դասարանի բոլոր աշակերտների համար (անկախ նրանց կարողությունների մակարդակից) ընդհանուր վարժանքներ է կազմակերպում, քննարկում է դասի թույլ կողմերը, վերակազմում է դասը (ըստ անհրաժեշտության) և իրականացնում է փոփոխությունները (համագործակցող կողմի հետ նոր դասը գնահատելով):

Ներառական ուսումնառության հղացքը նույնն է բոլոր դասարաններում, բայց գործնականության տեսանկյունից, այն դասարանից դասարան տարբեր կլինի՝ առարկայի բովանդակությամբ, տեխնոլոգիաների կիրառությամբ և աշակերտների կարիքներով պայմանավորված: Հետևաբար, ուսուցիչն իր դասը վարելու լավագույն ուղին պետք է գտնի: Օրինակ՝ կարող է կիրառել *ինտերակտիվ* դասավանդման-ուսումնառության մեթոդ: Ուսուցիչն ու նրա օգնականը պետք է աշակերտներին նույն թեմայից հարցեր տան՝ այն ակնկալիքով, որ յուրաքանչյուրը հարցին հնարավորինս լավ կպատասխանի: Կարճ ասած՝ բոլոր աշակերտները կսովորեն նույն բանը, բայց տարբեր միջոցներով:

Վարժություն 2

Այս վարժանքը մշակվել է http://www.open.edu կայքից (Distant Learning Courses and Adult Education – The Open University, 2019):

Այս վարժանքը նախատեսված է օգնելու ուսուցիչներին որոշել, թե որ գործելաոճն է ավելի համապատասխանում որոշակի տեսակի աշակերտների:

- Վերցրեք ձեր կատարած գրառումները՝ վերջին երկու դասերին պատրաստվելիս:

- Աղյուսակ գծեք (Հավելված 4) և յուրաքանչյուր դասին նախապատրաստվելու թերթիկի համար արեք հետևյալը՝
- 1-ին սյունակում հերթով գրի առեք աշակերտների արած վարժանքները:
- 2-րդ սյունակում նշեք, թե որ աշակերտների համար են այս վարժանքները (տեսողական, լսողական կամ կինեսթետիկ) կիրառելի և թե նրանք ինչ հմտություններ կզարգացնեն:
- Ի վերջո, վերջին սյունակում նշեք, թե որ աշակերտների համար կցանկանայիք անհատականացնել տվյալ վարժանքը. հաշվի առեք սեռը (տղա/աղջիկ), հաշմանդամության տեսակը և այլն:

Քննադատաբար վերանայեք ձեր կազմած ցանկը: Յուրաքանչյուր դասին ունե՞ք տարբեր տեսակի աշակերտների համար նախատեսված վարժանքներ: Եթե ոչ, ապա ի՞նչ վարժանքներ կարող եք ընդգրկել, որպեսզի բոլոր տեսակի աշակերտները հասնեն ուսումնառության նպատակներին: Եթե հնարավոր է ձեր գաղափարները քննարկեք գործընկերների հետ:

Վարժություն 3

Այս վարժությունը մշակվել է Success for all Students in Inclusion Classes, 2019 գրքից:

Այս վարժանքի նպատակը ներառական և ուսումնառության տրամադրող դասարանների մասին գաղափար տալն է: Որոշեք, թե ստորև ներկայացված դասարաններից որն է ներառական և ուսումնառության տրամադրող. Դասարան Ա կամ Դասարան Բ:

Դասարան Ա

Քառասուն աշակերտ նստած են գրասեղանների մոտ, փայտե նստարաններին՝ տետրերը՝ բաց, գրիչները՝ ձեռքներին:

Ուսուցիչը դասագրքից գրատախտակին մի պատմություն է գրում՝ ճիշտ այնպես, ինչպես գրված է դասագրքում: Դասասենյակի աջ կողմում նստած տղաները գրատախտակից արտագրում են ուսուցչի գրածը: Դասասենյակի ձախ կողմում նստած աղջիկները սպասում են, որ ուսուցիչը մի կողմ գնա, որպեսզի տեսնեն գրատախտակին գրվածն ու արտագրեն իրենց տետրերում: Գրելու ընթացքում ուսուցիչը հարցնում է. «Արտագրո՞ւմ եք գրածս պատմվածքը»: Բոլորը պատասխանում են. «Այո, գրում ենք»:

Դասարան Բ

Երկու խումբ աշակերտներ շրջան կազմած նստած են գետնին: Երկու խմբում էլ կան և՛ տղաներ, և՛ աղջիկներ: Ուսուցիչը երկրաչափություն է ուսուցանում: Մի խմբում աշակերտները խոսում են շրջանի մասին: Ուսուցիչը նրանց մի քանի կլոր առարկա է ցույց տվել, որոնք նախապես խնդրել էր բերել տնից: Աշակերտները ձեռքից ձեռք են փոխանցում առարկաները, հետո միասին շրջանաձև այլ առարկաների ցանկ են կազմում: Մյուս խմբում աշակերտների ձեռքին գլանաձև փաթաթված թերթեր են, որոնք երկար ձողերի են նման: Ուսուցիչը թիվ է ասում, և այդ թիվը կրող աշակերտն իր ձողը դնում է գետնին՝ կենտրոնում՝սկսելով քառակուսի կազմել: Լսողական խնդիրներ ունեցող մի աշակերտ իր ձողն այնպես է դնում, որ եռանկյունի կազմի ու ժպտում է ուսուցչին: Ուսուցիչը նույնպես ժպտում է և ասում է. «Շատ լավ է», այնպես, որ աշակերտն իր շրթունքներից հասկանա ասածը: Մի ծնող, որը մեկ շաբաթով կամավոր օգնում է դասին, թփթփացնում է նրա թևին ու շրջվում է, որ օգնի մեկ այլ աշակերտի, ով շփոթված է ու չգիտի որտեղ դնի իր ձողը՝ երկրաչափական նոր մարմին կազմելու համար:

Այժմ պատասխանեք հետևյալ հարցերին՝

Այս դասարաններից ո՞րն է ներառական և ուսումնառության տրամադրող (ներառական դասարանի ամբողջական բնութագիրը տե՛ս Հավելված 5-ում):
Ի՞նչ առումով է այն ներառական և ուսումնառության տրամադրող: Մտածեք ու կազմեք ձեր ցանկը և համեմատեք այն գործընկերների ցանկի հետ: Ցանկի ո՞ր տարրերն են նույնը և որո՞նք են տարբեր:

Հնարավոր է՝ դուք տարբեր պատասխաններ ստանաք: Որոշ պատասխաններ հնարավոր է անդրադառնան աշակերտների նստած ձևին, ուսումնական պարագաները օգտագործելու ձևին, թե ովքեր են դասարանում և թե ինչ հարաբերություններ ունեն միմյանց հետ: Այս բնութագրիչները շատ տարբեր են երկու դասարաններում ու խոսում են այն մասին, թե ուսուցիչն ուսումնառության ինչպիսի միջավայր է ստեղծել:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ուսումնառության տրամադրող դասարանի որոշ առանձնահատկություններ: Կարող եք շատ այլ առանձնահատկություններ մտածել:

Տեսանյութեր

Ինքնագնահատող վարժություն (Reflection Activity)
Ինչպիսի՞ն է իրավիճակը ձեր դպրոցում:
Մտածեք ներառական, ուսումնառության տրամադրող դասարանի հատկանիշների շուրջ (Հավելված 3) և տվեք ձեզ հետևյալ հարցերը՝

- Ինչպիսի՞ դասարանում եմ ես աշխատում:
- Ի՞նչ փոփոխություններ կարող եմ ես ներմուծել՝ իմ դասարանն ավելի ներառական ու ուսումնառության տրամադրող դարձնելու համար:

- Ինչպե՞ս կարող եմ իմ դասավանդած թեմաներն ավելի հետաքրքիր դարձնել աշակերտներիս համար:
- Նրանք ի՞նչ կցանկանան իմանալ այդ թեմաների մասին:
- Ինչպե՞ս կարող եմ դասավորել դասասենյակը, որպեսզի ԲՈԼՈՐ աշակերտները սովորեն համատեղ:
- Ո՞վ կարող է օգնել ինձ՝ ստեղծելու ուսումնառության տրամադրող ներառական դասարան (օրինակ՝դպրոցի տնօրենը, այլ ուսուցիչներ, իմ աշակերտները, ծնողները և համայնքի ղեկավարները):

Ստորև տեղակայված են ՀԱՀ-ի պատրաստված եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) տեսանյութի հղումները, որտեղ խոսվում է ներառական կրթության և ներառական դասարանների մասին:

https://m.youtube.com/watch?v=_3-TzhoFsjg

https://youtu.be/bDvKnY0g6e4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Anapiosyan, A., Hayrapetyan, G., & Hovsepyan, S. (2014). *Approximiation of Inclusive Education in Armenia to International Standards and Practices*. Retrieved from http://www.osf.am/wp-content/uploads/2015/09/Policy-Paper_Inclusive-Education_AAnapiosyan.pdf
2. Annual Report 2012 | The National Disability Authority. (2012). Retrieved May 22, 2019, from http://nda.ie/Publications/Others/National-Disability-Authority-Annual-Reports/Annual-Report-2012.html
3. Article 1 - Purpose | United Nations Enable. (2019). Retrieved May 21, 2019, from https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities/article-1-purpose.html
4. Article 2 - Definitions | United Nations Enable. (2019). Retrieved May 21, 2019, from https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities/article-2-definitions.html
5. Article 9 - Accessibility | United Nations Enable. (2019). Retrieved May 21, 2019, from https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities/article-9-accessibility.html
6. Bagon, Š., Gačnik, M., & Starcic, A. I. (2018). Information Communication Technology Use among Students in Inclusive Classrooms. *International Journal of Emerging Technologies in Learning (IJET)*, *13*(06), 56–72.

7. Booth, T., & Ainscow, M. (2002). *Index for inclusion: developing learning and participation in schools,*. Retrieved from http://www.eenet.org.uk/resources/docs/Index%20English.pdf
8. CDC. (2018, December 3). Disability and Health Disability Barriers | CDC. Retrieved May 22, 2019, from Centers for Disease Control and Prevention website: https://www.cdc.gov/ncbddd/disabilityandhealth/disability-barriers.html
9. *'Community Action for Full Inclusion in Armenia".* (2017). Retrieved from https://caritas.am/wp-content/uploads/2008/08/Final_Mapping_Report_2018-1-21_ENG.pdf
10. Convention against Discrimination in Education, 1960. (2003). *UNESDOC, UNESCO Dgital Library*, 1–9. Retrieved from https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000132598
11. Cook, L., & Friend, M. (1995). Co-Teaching: Guidelines for Creating Effective Practices. *Focus on Exceptional Children*, *28*. https://doi.org/10.17161/fec.v28i3.6852
12. Distance Learning Courses and Adult Education - The Open University. (2019). Retrieved May 22, 2019, from http://www.open.ac.uk/
13. Ferry, M. (2013). The Benefits of Co-Teaching for Students with Special Needs - Friendship Circle - Special Needs Blog: Friendship Circle — Special Needs Blog. Retrieved May 21, 2019, from Friendship Circle website: https://www.friendshipcircle.org/blog/2013/03/25/the-benefits-of-co-teaching-for-students-with-special-needs/
14. For All Kids: How Kentucky is Closing the High School Graduation Gap for Low-Income Students. (2019). Retrieved May 21, 2019, from America's Promise website:

http://americaspromise.org//resource/all-kids-how-kentucky-closing-high-school-graduation-gap-low-income-students

15. FutureLearn. (2018). Creating inclusive assessments. Retrieved May 22, 2019, from FutureLearn website: https://www.futurelearn.com/courses/inclusive-learning-teaching/0/steps/29573)
16. Handicap International | Humanity & Inclusion. (2019). Retrieved May 22, 2019, from https://www.handicapinternational.be/
17. Hunt, F. P. (2009). *Evaluation of Inclusive Education Policies and Programmes in Armenia | Evaluation database* (pp. 1–58). Retrieved from https://www.unicef.org/evaldatabase/index_57756.html
18. *Inclusive STEM High School Design: 10 Critical Components*. (2019). *53*(1). Retrieved from https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/00405841.2014.862125
19. Keeley, R. (2015). Measurements of Student and Teacher Perceptions of Co-teaching Models. *The Journal of Special Education Apprenticeship*, *4*(1). Retrieved from https://scholarworks.lib.csusb.edu/josea/vol4/iss1/4
20. Middlemas, B., Spanjers, L., & Rubiano, C. (2018). *Guidelines fot inclusive learning and teaching in high schools and universities*. Retrieved from http://inclusionerasmus.org/wp-content/uploads/2017/06/FINAL-DRAFT-INCLUSION-Guidelines-November-2018-SENT-1.pdf
21. Morin, A. (2019). Universal Design for Learning. Retrieved May 21, 2019, from https://www.understood.org/en/school-learning/for-educators/universal-design-for-learning/understanding-universal-design-for-learning

22. Padmanathan, P., & De Silva, M. J. (2013). The acceptability and feasibility of task-sharing for mental healthcare in low and middle income countries: a systematic review. *Social Science & Medicine (1982)*, *97*, 82–86. https://doi.org/10.1016/j.socscimed.2013.08.004
23. Special Education Terms and Acronyms. (2019). Retrieved May 21, 2019, from https://www.lewispalmer.org/cms/lib/CO01900635/Centricity/Domain/629/Special%20Education%20Terms%20and%20Acronyms.pdf
24. Stein, E. (2016). Elevating Co-Teaching Through UDL. Retrieved May 21, 2019, from CAST Professional Publishing website: http://castpublishing.org/books-media/udl-co-teaching/
25. Success for all Students in Inclusion Classes. (2019). Retrieved May 22, 2019, from http://www.ascd.org/publications/books/107040/chapters/Success-for-all-Students-in-Inclusion-Classes.aspx
26. TESSA Inclusive Education Toolkit A guide to the education and training of teachers in inclusive education. (2016). Retrieved May 22, 2019, from https://www.open.edu/openlearncreate/mod/oucontent/view.php?id=81337&printable=1
27. The European Council in 2010. (2011). Retrieved May 22, 2019, from https://www.consilium.europa.eu/media/21369/qc3010507enc.pdf
28. UNICEF. (2012). *It's about Inclusion*. Retrieved from UNICEF Armenia website: https://www.un.am/up/library/Its%20about%20Inclusion_eng.pdf

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 – Հայաստանում ներառական կրթության SWOT վերլուծության արդյունքներ (ՀԱՀ, 2018)

Ստորև ներկայացված են Հայաստանում ներառական կրթության շուրջ Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցած կլոր սեղան քննարկումների ամփոփում SWOT վերլուծության արդյունքները: Այստեղ ոչ միայն ներկայացված են լսողական, տեսողական և հենաշարժական խանգարում, այլ նաև հոգեբանական, զարգացման և հոգեկան խնդիրներ ունեցող աշակերտների ներառման հնարավորություններն ու մարտահրավերները, այլ նաև առաջարկվում են ներառական կրթության իրականացման խոչընդոտները հաղթահարելուն միտված գործողություններ:

Լսողական, տեսողական և հենաշարժական խնդիրներ ունեցող աշակերտների ներառումը

Ուժեղ կողմերը

- Օրենսդրությունը պարտավորեցնում է շրջակա միջավայրի համապատասխան հարմարեցումներ (օրինակ՝ ձայնային ազդանշանով լուսացույցներ, թեքահարթակներ ու այլ հարմարություններ շինություններում և այլն):
- Մի քանի դպրոց ձեռք է բերել օժանդակող տեխնոլոգիաներ:
- Նախաձեռնություններ են իրականացվել (օրինակ՝ արտ-թերապիա, էրգոթերապիա կամ «օկուպացիոն թերապիա», անձնական ուղեկցողներ, SOURCE հիմնադրամ):
- Ներառականության օրակարգին իրազեկվածությունը բարելավվում է՝ պայմանավորված ծնող-ուսուցիչ համագործակցության աճով:

- Գնահատման և վերականգնողական կենտրոնների հասանելիություն:
- Բարձրագույն կրթական հաստատություններում աշխատող մասնագետների անվճար վերապատրաստում:
- I և II կարգի հաշմանդամություն ունեցող ուսանողների անվճար կրթություն:
- Նոր ծնվածների լսողության ստուգումները և բժշկական/վիրաբուժական միջամտությունները թույլ են տալիս ավելի վաղ շրջանում հայտնաբերել և կանխարգելել խնդիրները:

Թույլ կողմերը

- Վերոնշյալ «ուժեղ կողմերից» շատերը համատարած հասանելի չեն Երևանի ու մարզերի դպրոցներում (օրինակ՝ տեխնոլոգիաների հասանելիություն, մանկավարժության ոլորտում լավագույն փորձ, երեխաների համար ակադեմիական և մասնագիտական ուղղվածություններ, ֆիզիկական սարքավորումներ, մասնագիտացված աջակցող աշխատակազմ, երեխաների հետազոտություններ՝ հնարավոր խնդիրները հայտնաբերելու համար և այլն), այդ պատճառով չկան պատշաճ հարմարություններ:
- Տերմինաբանության (օրինակ՝ երեխաները թույլ/հիվանդ/հաշմանդամ/ոչ աշխատունակ են և այլն) ոչ հետևողական կիրառությունը կարող է հանգեցնել էթիկայի նորմերի սխալ կիրառմանը:
- I և II կարգի հաշմանդամություն ունեցող երեխաների ցուցակի համահավաք, ազգային տվյալների բազայի բացակայություն:
- Օրենսդրության մեջ նշված պահանջները հիմնականում չեն ֆինանսավորվում և դպրոցներում աջակցող անձնակազմի

հաստիք ունենալու համար անհրաժեշտ ռեսուրսներն անբավարար են:

- Առանց իրական ներառման, այս երեխաները կշարունակեն լինել մեկուսացած և առանձնացված:
- Ուսումնառության տարբերակված մոտեցումների և այլընտրանքային ուսումնական նյութերի ու միջոցների հարմարեցման բացակայություն:

Հնարավորություններ

- Օրենսդրական դաշտը առկա է. անհրաժեշտ է լիարժեք կերպով կյանքի կոչել այն:
- Առկա է պետական ֆինանսավորում. անհրաժեշտ է, որ պատշաճ կերպով բաշխվի դպրոցներին (Երևան և մարզեր):
- Համընդհանուր նախագծի միջոցով միասնական ուսումնական ծրագրի, ուսումնառության նպատակների և դասավանդման եղանակների ներմուծում:
- Մոտիվացիայի ու փորձի բարձր մակարդակ ներկայիս հայաստանյան կառույցներում ու հաստատություններում:
- Համագործակցություն միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության տեղական ցանցերի, փորձագետների հետ և նվիրատուների աջակցություն (գլոբալ և սփյուռքից):
- Արվեստին ու սպորտին առնչվող նախագծերի ծրագրավորում՝ դպրոցներում ու դպրոցներից դուրս, այդ թվում պարալիմպիկ և հատուկ օլիմպիական կառույցների հետ կապեր հաստատելու հնարավորություններ:
- Անհատականացված կրթական ծրագրեր, որոնք սահմանում են երեխաների կարիքներին համապատասխան դասավանդման եղանակները, աշակերտների ուսումնառության վերջնարդյունքները:

- Դպրոցների միջև լավագույն փորձի փոխանակում: Ծառայությունների բազմապատկում, որի արդյունքում ստեղծվում է մրցակցային դաշտ և մատուցվում են բարձրորակ ծառայություններ:

Սպառնալիքներ

- Ներառման սոցիալական/մշակութային ճանաչման ու աջակցության բացակայություն (օրինակ՝ երեխայի ու ընտանիքի վրա ազդող բացասական տերմինաբանության շարունակական կիրառություն և այլն):
- Դպրոցի շինությունների ու գույքի ձևափոխված ու երեխաների կարիքներին հարմարեցված չլինելը:
- Ռեսուրսների ոչ պատշաճ բաշխվածությունը:
- Տեսողական և լսողական խանգարումներ ունեցողների համար ուսումնառության նյութեր մշակելու թարգմանչական կենտրոնների բացակայությունը:
- Համապատասխան վերապատրաստում անցած մասնագիտացված անձնակազմի պակաս:
- Ֆինանսավորման բացերը լրացնելու համար սահմանափակ պետական (և/կամ միջազգային) դրամաշնորհներ:

Անհրաժեշտ քայլեր

- Իրականացնել հանրակրթական (1-12 դասարաններ, K-12) գործող դպրոցների ցանկագրում՝ օրենսդրական պահանջներին դրանց համապատասխանությունը գնահատելու համար, մասնավորապես սահմանափակ ֆիզիկական կարողություններ ունեցողների համար դրանց հասանելիության տեսանկյունից:
- Առանձնացնել ներկայիս լավագույն փորձը լսողական և տեսողական խանգարումներ ունեցող երեխաների համար՝

օժանդակող տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից (օրինակ՝ դասավանդման լավագույն փորձ, ուսումնական ռեսուրսներ):

- Սահմանել երիտասարդների հետ աշխատելու համար անհրաժեշտ մասնագիտական անձնակազմի մասնագիտացվածությունը (օրինակ՝ նրանց կրթական աստիճան(ներ)ը, մասնագիտական վերապատրաստումները, ոլորտում ունեցած տարբեր փորձերը և այլն):
- Առաջարկել Կրթության և գիտության նախարարությանը նշանակել կադրերի անբավարարության ու ֆինանսական հարցերի համար անհրաժեշտ դրամաշնորհների ու այլ ռեսուրսների պատասխանատու:

Հոգեբանական, զարգացման և հոգեկան առողջության հարցեր

Ուժեղ կողմերը

- Երեխաները/աշակերտները ներկայումս հաճախում են սովորական դպրոցներ և ապրում են ընտանիքների հետ:
- Գոյություն ունեն աշակերտներին պաշտպանող օրինական հիմքեր:
- Առկա են մասնագետների վերապատրաստման ծրագրեր:
- Համայնքում կարծրատիպերը կոտրելու դրական միտում. կան համագործակցային ցանցեր:
- Անհատականացված կրթական ծրագրերի կիրառում և երեխաների/աշակերտների
- կարիքների գնահատում:
- Միջգերատեսչական թիմերն ու ռեսուրսային կենտրոնները հաճախ ներառում են հոգեբաններ՝ աջակցություն տրամադրելու համար:
- Ուսուցիչների օգնականներն ու ուսուցիչները վերապատրաստված են և պատրաստ են աջակցել երեխաներին/աշակերտներին:
- Համագործակցություն հաստատությունների, դպրոցների ու կազմակերպությունների միջև:

Թույլ կողմերը

- Հայաստանի ողջ տարածքում մասնագետների, վերապատրաստողների ու ուսուցիչների վերապատրաստման դասընթացների անբավարար ու ոչ կայուն թիվ:
- Անհատականացված կրթական ծրագրերում նշված ծառայությունները մատուցելու անկարողություն, երեխայի կարիքների պատշաճ գնահատման և աշակերտի

ուսումնառության վերջնարդյունքների վերահսկման բացակայություն:

- Համընդհանուր ներառական նախագիծը իրատեսական չէ:
- Գնահատման մշակույթը ներկայումս կայացած չէ ամբողջ համակարգով:
- Հաշմանդամության նոր դասակարգումների և երեխայի/աշակերտի գնահատման նոր մեթոդների առկայության արդյունքում աշակերտներին աջակցող աշխատողների հաստիքների քանակի նվազում:
- Մարդկային ու ֆինանսական ռեսուրսների պակաս տեղական և որ ամենակարևորն է՝ տարածաշրջանային մակարդակներում:
- Մանկավարժահոգեբանական և ռեսուրսային կենտրոնների բացակայություն կամ անբավարար քանակ և ոչ արդյունավետություն:
- Ուսումնական առողջ մթնոլորտը խաթարվում է դասարանում հաշմանդամություն չունեցող աշակերտների համար:
- Ծանր հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ դժվար է աշխատել համընդհանուր կենսամիջավայրում:
- Միասնական տերմինաբանության բացակայություն:
- Սահմանափակ մտավոր կարողություններ ունեցողներն առերեսվում են ավելի բիրտ կարծրատիպերի, քան նրանք, ովքեր դասակարգելի են «բժշկական մոդել»-ով:

Հնարավորություններ

- Գնահատման նոր մեթոդները կարող են բարձրացնել համակարգի արդյունավետությունը:
- Ուսուցիչների, մասնագետների վերապատրաստման դասընթացների քանակը և ծնողների/համայնքի հետ հաղորդակցումն ավելացնելու ներունակությունը:

- Գոյություն ունեն դպրոցների, հասարակական կազմակերպությունների և մանկավարժահոգեբանական կենտրոնների միջև ավելի սերտ համագործակցության հնարավորություններ:
- Կան մարդկային ու ֆինանսական հավելյալ ռեսուրսներ հայտնաբերելու հնարավորություններ:
- Կարելի է կազմակերպել համաժողովներ, ֆորումներ և տարբեր հարցերի շուրջ նմանատիպ միջոցառումներ տարբեր թեմաներով (օրինակ՝ Աուտիզմ, Ուշադրության պակասի գերակտիվության խանգարում (ՈւՊԳԽ)):
- Անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ՝ անհատականացված կրթական ծրագրերն ավելի գործուն դարձնելու համար:
- Հավելյալ այլընտրանքային ծառայությունները կարող են դասավանդման եղանակների ավելի մեծ բազմազանություն ապահովել (օրինակ՝ արտ-թերապիա, ավազաթերապիա, հեքիաթաթերապիա, մշակութային և սպորտային միջոցառումներ):
- Ստեղծել խթաններ, որոնք մասնագետներին խրախուսում են աշխատել մարզերում, ինչպես նաև Հայաստանում ՏՀՏ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ) զարգացում:

Սպառնալիքներ

- Դպրոցներում և դրանցից դուրս նախաձեռնությունների պատշաճ ֆինանսական աջակցության բացակայություն:
- Մարդկային ռեսուրսների անբավարարություն (օրինակ՝ աշակերտ/ուսուցիչ հարաբերակցություն):
- Միայն մեկ պետական ԲՈՒՀ է պատրաստում ուսուցիչներ ու մասնագետներ:

- Ընտանիքներում լրացուցիչ կրթական ծառայությունների (SES) ցածր մակարդակը ազդում է մի շարք հարցերի վրա, այդ թվում՝ դպրոցներ/ռեսուրսային կենտրոններ հաճախելու համար փոխադրամիջոցներից օգտվելը. վերականգնողական կենտրոններից օգտվելու հնարավորության բացակայություն:
- Բոլոր շահակիցների մոտ առկա են տարածված կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ:
- Ուսուցիչները համապատասխան կերպով պատրաստված չեն՝ երեխաների/աշակերտների հետ աշխատելու համար:
- Հասանելի ռեսուրսների անհավասար բաշխում մարզերում:
- Իրավական ոլորտում խոչընդոտները խանգարում են ներառական կրթության արդյունավետ իրականացմանը:
- Սոցիալական ներառումը հավասարազոր չէ ներառական կրթությանը:

Անհրաժեշտ քայլեր

- Ընդլայնել «հաշմանդամության» քննարկումը բժշկական մոդելի սահմաններից դուրս՝ ընդգրկելով զարգացման, հոգեբանական և հոգեկան առողջության հարցերը:
- Ապահովել, որ ուսուցիչների և մասնագետների վերապատրաստման դասընթացներն ու կրթական ծրագրերը բավարար չափով անդրադառնան «հաշմանդամության» այս ավելի լայն շրջանակին:
- Հետազոտել և ներդնել դասավանդման այլընտրանքային եղանակների լավագույն փորձը՝ աուտիզմ և ուշադրության պակասի գերակտիվության խանգարում (ՈւՊԳԽ) ունեցող երեխաներին/աշակերտներին ներգրավելու համար:

- Վերանայել անհատականացված կրթական ծրագրերն ու գնահատումները՝ համոզվելու համար, որ աշակերտների կարիքները պատշաճ կերպով որոշվում և հաշվի են առնվում:

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

Հավելված 2 – Դպրոցի տեսակները

Կարդացեք դպրոցների տարբեր տեսակների սահմանումներն ու որոշեք դպրոցի համապատասխան տեսակը (վերցված և մշակված է TESSA Inclusive Education Toolkit A guide to the education and training of teachers in inclusive education, 2016)։



1.Հատուկ դպրոց – Դպրոց, որն իր դռներն է բացում բոլոր երեխաների առջև՝ անկախ այն բանից, թե նրանք հաշմանդամություն կամ ուսումնառության հետ կապված դժվարություններ ունեն, թե ոչ։
2.Ներառական դպրոց – Սովորական դպրոց, որն ընդունում է բոլոր երեխաներին, որտեղ, սակայն, հաշմանդամություն և ուսումնառության հետ կապված դժվարություններ ունեցող երեխաները պետք է հարմարվեն ուսումնառությանը մյուսների հետ, այլապես կարող են հաջողություն չունենալ։

3.Ինտեգրատիվ դպրոց – Միայն որոշակի հաշմանդամություն ունեցող երեխաների համար:
4. Հիմնական դպրոց – Դպրոց, որն ընդունում է բոլոր երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն կամ ուսումնառության հետ կապված դժվարություններ ունեցող երեխաներին, և ունի հարմարություններ՝ բոլորին սովորելու հնարավորություն տալու համար:

Հավելված 3 – Դպրոցի տեսակների մասին պատասխանների ուղեցույց

Օգտվեք աղյուսակից՝ դպրոցի տեսակների մասին ձեր պատասխանները ստուգելու համար (վերցված և մշակված է TESSA Inclusive Education Toolkit A guide to the education and training of teachers in inclusive education, 2016):

	Հատուկ կրթություն	Կանոնավոր կրթություն	Ինտեգրատիվ կրթություն	Ներառական կրթություն
Հասանելի է	Խանգարումներ ունեցող երեխաներին	Բոլոր երեխաներին	Բոլոր երեխաներին, սակայն նրանք պետք է փոխվեն՝ համակարգին համապատասխանելու համար	Բոլոր երեխաներին՝ իրենց անհատականությամբ ու տարբերություններով, կարողությունների տարբեր մակարդակներով, տարբեր

				էթնիկական խմբերով, աղջիկներ, թե տղաներ, առողջ կամ հաշմանդամություն ունեցող:
Ուսումնական ծրագիր և մեթոդներ	Ամեն ինչ հարմարեցված է՝ բավարարելու երեխաների առանձնահատուկ կարիքները:	Ամեն ինչ սովորական է:	Երեխաները ստիպված են հարմարվել, այլապես կարող են անհաջողություն ունենալ:	Ամեն ինչ այնպես է նախագծված, որ բոլոր երեխաները կարողանան սովորել ու բացահայտել իրենց ողջ ներուժը:
Ուսուցիչները	Հատուկ մասնագիտացված	Ընդունված նորմերին համապատասխանող	Հետևում է համակարգին, որը փոփոխվող չէ:	Հարմարեցնում է ուսումնական ծրագիրը, մեթոդներն ու համակարգը երեխաների կարիքներին:

Հավելված 4 – Ներառական, ուսումնառության տրամադրող դասարանի առանձնահատկությունները

Օգտվեք ներառական, ուսումնառության տրամադրող դասարանը նկարագրող ստորև ներկայացված աղյուսակից՝ ձեր պատասխանները ստուգելու և վարժությունը կատարելու համար (վերցված և մշակված է TESSA Inclusive Education Toolkit A guide to the education and training of teachers in inclusive education-ից, 2016)։

	Ավանդական դասարաններ	Ներառական, ուսումնառության տրամադրող դասարաններ
Փոխհարաբերություններ	Ոչ մտերիմ (ուսուցիչը խոսում է լսարանի հետ մեջքով դեպի լսարանը)	Ջերմ ու ընկերական։ Ուսուցիչը նստում է լսողական խանգարում ունեցող աշակերտի կողքին ու ժպտում է նրան։ Օգնական ծնողը գովում է այս աշակերտին և օգնում է մյուս աշակերտներին։
Ո՞վ կա դասարանում։	Ուսուցիչը և նույնանման կարողություններ ունեցող աշակերտներ	Ուսուցիչը, տարբեր նախադրյալներ ու կարողություններ ունեցող աշակերտներ և ուրիշներ, օրինակ՝ օգնական ծնողը
Նստելու դասավորվածությունը	Նստելու նույնանման դասավորվածութ	

	յուն բոլոր դասարաններում (բոլոր երեխաները շարքերով նստած են գրասեղանների մոտ. աղջիկները դասասենյակի մի կողմում, տղաները՝ մյուս)	
Ուսումնական նյութեր	Դասագիրք, տետր, գրատախտակ ուսուցչի համար	Զանազան նյութեր բոլոր առարկաների համար, ինչպես օրինակ՝ մաթեմատիկայի նյութեր լրագրերից կամ պաստառներ լեզվի դասի համար
Ռեսուրսներ	Ուսուցիչը աշխատում է աշակերտների հետ՝ առանց հավելյալ ուսումնական նյութեր օգտագործելու:	Ուսուցիչը մեկ օր առաջ պատրաստվում է դասին: Աշակերտներին ներգրավում է ուսումնառության օժանդակ պարագաները բերելու մեջ, որոնք առանձնապես ծախս չեն պահանջում:

Գնահատում	Ստանդարտ գրավոր քննություններ	Իրական գնահատում. դիտարկումներ. աշակերտների՝ ժամանակի ընթացքում արված աշխատանքների նմուշներ, ինչպես օրինակ՝ պորտֆոլիոներ:

Հավելված 5 – Հատուկ հարմարությունների նախատեսում

Լրացրեք հետևյալ աղյուսակը՝ նշելով այն հմտությունները, որոնք աշակերտները ձեռք կբերեն (վերցված և մշակված է TESSA Inclusive Education Toolkit A guide to the education and training of teachers in inclusive education-ից, 2016):

Աշակերտների կատարած աշխատանքը	Ուսումնառության տեսակը և զարգացող հմտությունները	Հատուկ հարմարություններ … համար
Երկրազիտություն. շնչավոր և անշունչ առարկաների դասակարգումը	Տեսողական դիտողունակություն, տրամաբանություն	Խուլ երեխաների. կիրառեք ժեստերի լեզու՝ ցուցումներ տալու համար, կամ նախապես գրի առեք ցուցումները: Կույր երեխաների. ընտրեք այնպիսի պարագաներ, որոնք նրանք կարող են շոշափել, կամ նրանց հանձնարարեք զույգերով աշխատել և հանձնարարեք կույր երեխայի զույգին մանրամասնորեն

		ներկայացնել նրան ամեն բան (զույգին հակիրճ ուղղություն տվեք):
Մաթեմատիկա		
Այլք		

Հավելված 6 – Հայաստանում կարողությունների զարգացման վերաբերյալ SWOT վերլուծության արդյունքներ

Ստորև բերվածը մարդկային կարողունակության զարգացման հարցի վերաբերյալ SWOT վերլուծություն է. Վարչական աշխատակիցներ, ուսուցիչներ և միջգերատեսչական թիմեր (ՀԱՀ, 2018), որը կարելի է կիրառել որպես նմուշ:

Ուժեղ կողմեր

- Կրթության ազգային ինստիտուտը նախագծել է դասավանդման մոդուլներ և պատասխանատվություն է ստանձնել կազմակերպել 20-ժամյա վերապատրաստման դասընթացներ ուսուցիչների համար (իրականացվել է 3 մարզերում՝ Տավուշ, Սյունիք, Լոռի). ուսուցիչները կարող են դասընթացներ անցնել յուրաքանչյուր 5 տարին մեկ:
- Միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները մասնագետներ են տրամադրում և վերապատրաստման դասընթացներ ու այլ նախաձեռնություններ իրականացնում:
- Պետական մանկավարժական համալսարանը ունի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ և ուսումնական ծրագիր, որն ընդգրկում է ներառական կրթության երկու պարտադիր առարկա բակալավրական կրթական ծրագրում և երկու առարկա մագիստրոսական կրթական ծրագրում. հատուկ կրթություն մասնագիտությամբ սովորող ուսանողների համար առկա է ուսման վարձավճարից ազատվելու ծրագիր. Ֆիզկուլտուրայի ինստիտուտը նույնպես ունի համանման ծրագիր՝ Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ֆակուլտետ:
- Մարզերի բուհերը ստեղծել են բաժիններ հատուկ կրթության և/կամ սոցիալական աշխատանքի բնագավառում մասնագետներ պատրաստելու համար:

- Ծնողների և առհասարակ հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրանում է, ավելի շատ՝ Երևանում, քան մարզերում:
- Մանկավարժահոգեբանական կենտրոններն ու ռեսուրսային կենտրոնները մասնագիտական ծառայություններ են տրամադրում (ինչպես նաև՝ սոցիալական աշխատողներ ու սոցիալական մանկավարժներ) և նպաստում են դպրոցներում երեխաներին/աշակերտներին աջակցելու գործում միջգերատեսչական թիմերի արդյունավետ գործունեությանը:
- Կրթության և գիտության նախարարությունը ընդունում է ներկայիս համակարգում առկա բացերը:

Թույլ կողմերը

- Ֆինանսական և մարդկային ռեսուրսները բավարար չեն օրենսդրական պահանջները և երեխայի/աշակերտի կարիքները բավարարելու համար. սա ընդգրկում է միջգերատեսչական թիմերի, մասնագետների, ուսուցիչների և գյուղական բնակավայրերում աշխատող տնօրենների համար վերապատրաստման դասընթացների փոքր քանակը կամ լրիվ բացակայությունը:
- Կրթության ազգային ինստիտուտի տրամադրած դասընթացներն անբավարար են՝ սահմանափակ ժամաքանակով են և ոչ կանոնավոր. ուսուցիչների համար ներառական կրթության, դրա հետ կապված մանկավարժական մեթոդիկայի, դասարանի կառավարման, անհատականացված կրթական ծրագրերի իրականացման և գնահատման չափանիշների, ինչպես նաև հենց դասընթացների գնահատման ընկալումը մնում է ոչ հստակ:
- Բարձրագույն մանկավարժական կրթության ծրագրերն ավելի շատ կենտրոնացած են տեսական, քան կիրառական

գիտելիքի զարգացման վրա. ներկայիս պրակտիկան չի տալիս բավարար չափով ու բավարար խորությամբ փորձ ձեռք բերելու հնարավորություն:

- Տարբեր համալսարանների և դրանց ծրագրերի միջև համահունչության, համակարգման և համագործակցության բացակայություն:
- Միջգերատեսչական թիմերի անդամներն ու մյուս մասնագետներն արտոնագրված չեն և մասնագիտական չափանիշները պահպանելիս հետևողական ու համանման չեն գործում. Սա վերաբերում է նաև օգնական ուսուցիչներին:
- Շահակիցների միջև համախմբվածության բացակայություն:

Հնարավորություններ

- Հկ-ների, նվիրատուների և համալսարանների միջև հնարավոր համագործակցություններ՝ լավագույն փորձի, մասնագիտական գիտելիքների փոխանակման և ֆինանսավորման հնարավորությունների ձեռք բերման նպատակով:
- Կարելի է ձեռք բերել STEM (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա)/AUMAT լաբորատորիաներ, օժանդակ տեխնոլոգիաներ (smart devices):
- Դասընթացավարների, վերապատրաստվողների ու վերապատրաստման դասընթացների գնահատման համակարգի ստեղծումը կմեծացնի ակնկալիքներն ու կբարձրացնի վերջնարդյունքները:
- Ուսուցիչները շահագրգռված կլինեն վերապատրաստումներ անցնել ու որդեգրել դասավանդման նոր եղանակներ՝ հավելյալ արտոնությունների/աշխատավարձի բարձրացման պայմաններում:

- Համալսարանները կարող են առաջարկել դասընթացներ ներառական կրթության վերաբերյալ
- Ուսումնական ծրագրերում և Հայաստանում կրթության հանրային ընկալումներում «ներառականության» ներմուծումը հանրային մակարդակում կխթաներ նախաձեռնության ավելի լայնամասշտաբ տարածմանը (օրինակ՝ մրցակցություն հաջողության պատմություններով և առկա լավագույն փորձով):

Սպառնալիքներ

- Ներառական կրթության հղացքը ըստ պատշաճի չի ընկալվում թե՛ դպրոցների ներսում և թե դրանցից դուրս:
- Ծնողների ակնկալիքները՝ դպրոցի կողմից իրենց երեխաների կարիքները հասկանալու առումով, չեն արդարացվում:
- Պետական շահերի միջև մրցակցությունը անդրադառնում է դպրոցների ֆինանսավորման և ուսուցիչների ու աջակցող անձնակազմի աշխատավարձերի վրա:
- Հայաստանում ներկայումս չկան բավարար քանակությամբ որակավորված մասնագետներ՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարելու համար:
- Վերապատրաստման դասընթացների ներկայիս համակարգը ո՛չ արդյունավետ է համարվում, ոչ էլ՝ արտադրողունակ:
- Գյուղական բնակավայրերում որակավորված մասնագետների պակասը սահմանափակում է առաջընթացի հույսը:
- Մշակութային կարծրատիպերը բացասաբար են անդրադառնում ուսուցիչների վերաբերմունքի և աշխատանքի արդյունավետության վրա:

Անհրաժեշտ քայլեր

- Գնահատել և առաջարկներ անել Կրթության ազգային ինստիտուտի մշակած վերապատրաստման դասընթացների կառուցվածքի և արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատել Պետական մանկավարժական համալսարանում առաջարկվող ներկայիս ատիճանավորված կրթական նախագիծը՝ դպրոցներում մասնագիտական կարիքներին դրանց համապատասխանությունը ապահովելու տեսանկյունից (K-12):
- Վերանայել և առաջարկներ ներկայացնել ուսուցիչների, ուսուցիչների օգնականների և միջգերատեսչական թիմերի անդամների աշատանքի նկարագրությունների ու աշխատավարձերի վերաբերյալ՝ պահանջվող գիտելիքների և հմտությունների մակարդակը բավարարելուն ի խնդիր:
- Ուսուցիչներին ու մասնագետներին մարզերում աշխատել խրախուսելու ռազմավարություն մշակել:

Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union

This project has been funded with support from the European Commission. This publication reflects the views only of the author, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.